

891195ար

Բարձր

11 - 12 / 92

Հարսն-ի «Բարձր»-ի համար

Հանգեցրեց

«Բարձր»-ի համար

Ներդրումներ

(«Բարձր» համար)

Հարսն «Բարձր» համար
Հարսն համար

Հարսն

«Բարձր» համար

Ներդրում

Բարձր համար

Ներդրում

ՀԱՅՐԵՆԻ

Հանգեցրեց

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«Բարձր» համար
Ներդրում

«Բարձր» համար

Ներդրում

«Բարձր» համար

Ներդրում

«Բարձր» համար

Ներդրում



Ներդրում

Գրան 1332, A.R.I.A.R. ©

«Բարձր» համար
Ներդրում

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1.-★ ★ ★ Հայրենի զրականություն—Բ
- 3.-Հ. ՍԱՀԵԱՆ Նոր բանաստեղծություններ
- 7.-Ա. ԱՅՎԱԶԵԱՆ Մեծ գրականության ճանապարհին
- 8.-» » Գլխիս յենակների վրայ
- 15.-Վ. ԴԱԽԹԵԱՆ Հայաստան 88
- 19.-» » Պարոֆ
- 21.-Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Մագէ կամուրջ
- 29.-Ե. ՍԱՀԱԿԵԱՆ Բանաստեղծություններ
- 34.-Ե. ԽԱԶԱՏՐԵԱՆ Միայն արեւը տեսնելու համար...
(Հարցազրույց՝ Ա. Գրիգորեանի հետ)
- 45.-Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ Բանաստեղծություններ
- 50.-Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ Օձի բարությունը
- 55.-Մ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Արեւախամա արտի երանգները
- 64.-Վ. ՂԱԶԱՐԵԱՆ Ծերուկը
- 69.-Պ. ԴԵՄԻՐՃԵԱՆ Ազգային ոգու գրականություն
- 75.-Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ Բանաստեղծություններ
- 79.-Ա. ՃԵՆՏԵՐԷՃԵԱՆ Ս. Մարիմէ (լուսանկար)
- 81.-ՀՐ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ «Կապի մէջ իմ յիշողությունն է...»
- 88.-Ռ. ՄԱՀՏԵՍԵԱՆ Բանաստեղծություններ
- 95.-Ա. ՂԱԶԱՐԵԱՆ Բանաստեղծը եւ պատմությունը
- 104.-Ա. ԴԱԽԹԵԱՆ Բանաստեղծություններ
- 109.-Վ. ԱԹԱԲԵԿԵԱՆ Բանաստեղծություններ
- 113.-Ա. ԱԼԵՔՍԱՆԵԱՆ Վահագն Նալբանդեանի արուեստի
փիլիսոփայության համադրումը
- 127.-Ա. ՇԻՐԱԶ Բանաստեղծություններ

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԱ. ՏԱՐԻ 11-12 ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 1992 ՊԵՅՐՈՒԹ

ՆԱՅԻՆԵՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ-Բ

«Բազմ»-ի երեսնամեակի առաջին թիւը բացւում է Հայաստանի գրողներէն ուղղակի մեզի տրամադրուած գրութիւններով եւ այնպէս դասադրուեցաւ, որ տարին փակենք Լուսաւորչի աստղին տակ մշակուած գրականութեամբ, այս անգամ տարբեր ստորագրութիւններով:

Յունուար-փետրուարեան խմբագրական մեր մօրին մէջ ըստածը կրկնել սխալի ըլլար, եթէ դարձեալ փորձէինք անդրադառնալ այն բարեփոխութեանց, որոնք տասնամեակներու անձկալի սպասումներէ ետք տեղի ունեցան հայրենի մտաւորականութեան ու «Բազմ»-ի միջեւ: Ասեցնել պէտք է միայն, որ հակառակ պաշտօնական իշխանութիւններուն յայտնի ելոյթներուն հետեւանք ոչ տարբեր հատուածներու միջեւ կուտակուած ամպերուն, գրական ու մտաւորական շրջանակները ճշման մնացին, երկուստեք պահելով սերտակցութիւնն ու շաղախիչ սրտակցութիւնը:

Թող ի միջի այլոց կատարուած հաստատում մը չհամարուի այս կեցւածքը: Ազատ որոշումներ առնելու հնարաւորութեան մը մասին կը վկայէ անկախ ու կը ներշնչէ այն յոյսը, որ մտքի մարդոց, հոգիի մարդոց բնագոյնը անստաւ բնագոյնէր եղած են ու անոնց կռահած ճշմարտութիւնը ջանքի մը պէս լուսաւորած է ճանապարհորդներուն եղբայրութեան ուղին, այն բաղձալի եւ յամենայնի յուսատու եղբայրութեան, «որ գալու է, բայց դեռ չկայ»...

«Հայրենի գրականութիւն-Բ» վերստառութեամբ լոյս տեսնող «Բազմ»-ի ներկայ թիւին ուշագրաւ երկրպագ երևոյթը այն է, որ ստորագրութիւններուն շարքին կան շատ ծանօթ, բիչ ծանօթ եւ Սփիւտի ընթերցողին բողբոլիմ անծանօթ անուններ, այսինքն՝ արդէն անհերքելի վաստակի տէր դէմքեր, զիմազիմ կազմած եւ իրենց ուղին ճշդած արուեստագէտներ եւ ճոր ընձիւղներ, որոնց անհամգիստ խառնուածքը ակներեւ է ու յուսատու:

«Հայրենի գրականութիւն» անունին տակ լոյս տեսնող ներկայ թիւով մենք առայժմ վերջ կը դնենք Հայաստանէն հասած ձեռագիրները առանձին համարներով տալու այս կերպին եւ մեր տրամադրութեան տակ գտնուող եւ մեր հասնող ձեռագիրները յետ այսու սխալի տանք մեր հերթական համարներով:

2000

digitised by A.R.A.R.@



ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

Բանաստեղծ և թարգմանիչ Համո Սահեան (բուն անունով՝ Հմայեակ Գրիգորեան): Ծնած է 14 Ապրիլ 1914ին, Լոր գիւղը (այժմ՝ Սիսիանի շրջան): 1927ին կը փոխադրուի Բաքու, ուր կը ստանայ իր միջնակարգ ուսումը: 1939ին կ'աւարտէ Բաքուի մանկա-

վարժական հիմնարկը: 1939-41 կը պաշտօնավարէ Բաքուի «ժողովրդային զրոյ» ամսագրին մէջ՝ իրրեւ գրական աշխատող: 1941-45 կը ծառայէ խորհրդային բանակին մէջ: 1941-51 մաս կը կազմէ Բաքուի «Կոմունիստ» հայերէն թերթի խմբագրութեան՝ իրրեւ գրական աշխատող: 1951ին կը հաստատուի Երևան և մինչև 1954 կը պաշտօնավարէ «Աւանգարդ» օրաթերթին մէջ՝ իրրեւ բաժնի վարիչ, իսկ 1954-65՝ «Ոգնի» երգիծական հանդէսին մէջ՝ իրրեւ բաժնի վարիչ: 1965-67 կը վարէ «Գրական թերթ»ի զբոսաւոր խմբագրի պաշտօնը:

Համո Սահեանի գլխաւոր գործերն են՝ «Նայիրեան դալար բարտի», «Հայաստանը երգերի մէջ», «Մայրամուտից առաջ», «Քարափների երգը», «Սեզամ բացուիր», «Իրիկնահաց», «Տոհմի կամուրջ» և «Դաղձի ծաղիկ»:

1975ին, «Սեզամ բացուիր» ժողովածուին համար կ'արժանանայ ՀՍՄՀ պետական մրցանակին: Պարգևատրւած է նաև այլ շքանշաններով:

Համո Սահեանի բնորոշ բանաստեղծութիւնները թարգմանուած են աշխարհի բազմաթիւ լեզուներու:

Մեր բանաստեղծներից Բչերին, շատ Բչերին է յաջողուել սեփականատիրական այնպիսի իրաւունք բանեցնել հայերէնի վրայ, ինչպէս Սահեանին: Բառը մրա պոեզիայում, բուն է, առաջին անգամ է դրում գրական շրջանառութեան մէջ և անկորուստ անդրադարձնում դէմքը հոգեւոր այն աշխարհի, որի բացայայտման է կոչուած ծառայելու իմքը («Գրական թերթ», 1980, թիւ 27):

Յեկիս Մելոյեան

Յանայս եմ գրել ու ասել, որ Համո Սահեանին իր լեռնաշխարհի, իր հողի ու Բարի ծնունդն է, ու ճշմարիտ եմ ասել: Բայց կարելո՞ւն այն է, որ նա ոչ միայն այդ հողի ու Բարի, այլև իր ժողովրդի դարատու ոգու ծնունդն է, և այդ ոգին է, որ մրա ստեղծագործութիւնները դարձնում է եւ այդքան միութեամբ, եւ այդքան ոգեղէն («Հայրենիքի ձայն», 1984, թիւ 16):

Վահագն Դաւթեան



Համո Սահեանը հոգու բանաստեղծ է: Նրա տողն անցնում է սրտի միջով: Կարդում եւ զգում ես, որ Յրա ապրածը Բեզ էլ է ապրեցնում, մրա տեսածը ընդարձակում է Բո տեսողաշարը, մրա կեանքը հարստացնում է Բո հոգեւոր աշխարհը: Տող առ տող ամէն ինչ դառնում է մտերիմ, հարազատ, Բոնը («Հայրենիք և ճակատագիր», Երեւան, 1991):

Դաւիթ Գասպարեան

20552-214
digitised by 141-2001
A.R.A.R.©

Հ. ՍԱՀԵԱՆ

ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

* * *

Այստեղ ամէն ինչ ապուպապոտ է,
Հօրոտ—մօրոտ է, մանկութիւնոտ...
Խեղճութեամբ հոտ է, խեղճութեամբ հոտ է,
Պարզութեամբ հոտ է, մաքրութեամբ հոտ:

Հողմ՝ իմաստուն աչք, ես մի բոտ հող եմ,
Թող նեկտար բխի իմ ընթերցից...
Առուն՝ բանաստեղծ, ես ընթերցող եմ,
Եւ չեմ յագեցնում նրա երգից:

Ես ծառի պէս եմ, ծիծառի պէս եմ,
Մամուռի պէս եմ, աղբիւրի պէս ...
Ինչ որ տեսնում է՛ք, բոլորք ես եմ,
Ես ամէն ինչ եմ, ամէն ինչ՝ ես:

Ոյսը կապած շուն, խիղճը ճամբորդ է,
Ընկնելը մեղք է, յոգնելը՝ ամօք...
Այստեղ ամէն ինչ ապուպապոտ է,
Հօրոտ—մօրոտ է, մանկութիւնոտ:

* * *

Ինձմից փրկուելու
Մի հնար ճարել
Ձեմ կարողանում:
Բաշխուելու բաղձանք,
Քեզ յաղթահարել
Ձեմ կարողանում:
Ամէն հատուցում
Հրամայական է
Դառնում նոր պարտքի...



Եւ անվերջ անող
Պարտօնքս մարել
Զեմ կարողանում:

* * *

Օրերը մոայլ են, ահարկու,
Անորոշ ու գորշ են օրերը:
Լեռները բախտում են մէկ—մէկու,
Տագնապով մտնում են ձորերը:

Խեղդում ենք մենութեան անձաւում,
Զենք փայլում, ո՛ր մնաց թռնելը:
Անցեալը թողել ենք անցեալում,
Եւ փակ են գալիքի դռները:
Զգիտեմ, թէ ո՛ր ենք գնալու,
Բայց զիտեմ, որ ինչ էլ պատահի,
Աշխարհում մենք մենք ենք մնալու—
Ճեղքելով չարութիւնն աշխարհի:


Աշխարհում մենք մենք ենք մնալու—
Մեր բամաձ հին գինու թնդութեամբ,
Մեր խորով, մեր խօսով քաղցրալոյս,
Էմ գլխից պարտաւածի պնդութեամբ:

Կը մնանք (եւ դարձեալ նեղուելով)
Մեր ոգու խորհուրդի խորութեամբ,
Մեր ժաւտ Աստծու նուէրով—
Քարեղէն մեր կղզու գոյութեամբ:

Լեռները բախտում են մէկ—մէկու,
Ընկնում ու լցում են ձորերը:
Օրերը մոայլ են, ահարկու,
Անորոշ ու գորշ են օրերը:

* * *

Աշխարհից ես բամ չեմ հասկանում,
Մոլորաւած ճամբորդ է աշխարհը:
Մեզ ուրիշ մի բախտ է խոստանում,
Բայց էլի մեզ խորք է աշխարհը:



Զգիտեմ, թէ ո՞վ է մեր տէրը,
Ասում են՝ բոլորս մի տուն ենք...
Բայց տամ մէջ իշխում են մեծերը,
Մեծերը փոքրերին ուտում են:

Մեծերը փոքրերին ուտելով
«Օգնել են» եւ հիմա յոգնել են:
Ախ, զոնէ մեծերի յորդորով
Մէկ մէկու չուտէին փոքրերը:

Աշխարհից ես բան չեմ հասկանում,
Մայրուած ճամբորդ է աշխարհը:
Մեզ ուրիշ մի բախտ է խոստանում,
Բայց էլի մեզ խորթ է աշխարհը:

* * *


Արիւնոտ յուշե՛ր եւ գոյժե՛ր ամբաւ,
Յոյսերիս վերջին կամբեղմ էլ համգաւ,
Էլ ի՞նչ դպրութիւն, ի՞նչ ձիւր ու համբաւ...
Ի՞նչ ասեմ այս բիրտ ու բիշ բարբերին,
Աշխարհը մնաց նոյն համբակներին,
Դարձեալ համբերանք բիրտ ամբախտներին:
Ինչքա՛ն թէժաբոսի խոստումներ կերանք
Եւ կուտ ենք արդէ՛ն... էլ ի՞նչ համբերանք:

X X X

ՀԱՐՈ ՍԱՀԵԱՆ

Անյուշտութիւնը եւ Գոյժե՛ր ամբաւ,
Կոյսերիս վերջին կամբեղմ էլ համգաւ,
Էլ ի՞նչ դպրութիւն, ի՞նչ ձիւր ու համբաւ...
Ի՞նչ ասեմ այս բիրտ ու բիշ բարբերին,
Աշխարհը մնաց նոյն համբակներին,
Դարձեալ համբերանք բիրտ ամբախտներին:
Ինչքա՛ն թէժաբոսի խոստումներ կերանք
Եւ կուտ ենք արդէ՛ն... էլ ի՞նչ համբերանք:

Համբերանք



ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶԵԱՆ

Արևակազիր, բեմազիր (սենարիստ) եւ բեմադրիչ Աղասի Այվազեան ծնած է 7 Մեպտեմբեր 1825ին, Վրաստանի Աբասթուան ավանը:

Նախնական կրթութիւնը ստանալէ ետք, լաշորդարար կ'ուսանի Թիֆլիսի զեղարուեստական ակադեմիայի (1842), Թիֆլիսի համալսարանի բանասիրական բաժանմունքին եւ Երեւանի Գեղարուեստա-Ժառանգական հիմնարկին մէջ (1845-48): Ապա կ'աշխատի գանազան հիմնարկներու մէջ՝ իբրեւ ֆարթուններու նկարիչ, զծագրող,

լրագրող, խմբագիր, իսկ աւելի ուշ՝ «Հայֆիլմ» շարժապատկերի սթիւտիոյի մէջ՝ իբրեւ բեմադիր ու բեմադրիչ:

1865-73 տարիներուն Աղասի Այվազեան կը վարէ «Գրական քերթ» թերթի բաժինը, իսկ 1873-81՝ «Էկրան» ամսագրի գլխաւոր խմբագրի պաշտօնը: 1867ին, Աղասի Այվազեանի բեմադրով, «Հայֆիլմ»-ը կը նկարահանէ «Նոանկիմին» ժապաւէնը, որ 1868ին կ'արժանանայ Լենինկրատի համաթուրմանական փառատօնի երկրորդ մրցանակին: Ապա, «Հայրիկ» ժապաւէնի բեմադրութիւնը ստորագրելէ ետք, իր «Վովկասեան Էսպերանտօ» պատմուածքի հիմամբ Աղասի Այվազեան 1882ին կը գրէ եւ կը բեմադրէ «Վիրիկական երթ» ժապաւէնը, իսկ աւելի ուշ, իր «Վանոն եւ Գորգովոյը» պատմուածքի հիմամբ՝ Վատան լապտերը, որ կը ներկայացնէ հայ անուանի նկարիչ Վանօ Խոջաբեկեանի տեսլիկ ճակատագիրը:

Աղասի Այվազեան հրատարակած է պատմուածքներու տասը հատորներ, որոնց գլխաւորներն են՝ «Ընտանիքի հայրը», «Փառահամար», «Սիմիոն Մարտիրոսի արկածները», «Նոանկիմին», «Աղի կոմսը», «Դիպլիպիտօ», որոնք մեծաւ մասամբ եւ առանձին հատորներով լոյս տեսած են ռուսերէն, լիտվերէն, պուլկարերէն եւ այլ լեզուներով:

Այվազեանի հերոսների համար էրգրումը, Վանը, Ղարսը եւ էլի շատ արբազան անունները ոչ թէ ազգային ցուցափեղկ են, բառային հայրենասիրութիւն, բառային կարօտ, այսինքն՝ անհարակ սպեկուլեացիա, ոչ թէ սոսկ կենսագրական տուեալներ են, այլ՝ էութիւն, ըմբացք, կեանքամի, շարունակուող կենսագրութիւն, որն իր հերթին կենսագրութիւն է ծնում եւ ըստեղծում («Գրական թերթ», 1873, թիւ 38):

Պերն Զէյթունցեան

Աղասի Այվազեանի գրեթէ բոլոր գործերում իրականը մրթօրէն կտրուում-անջատուում է առարկայական կշիռից, միթական ծանրութիւնից, շարունակուում մտնում եւ տրուում երեակայութեան թոյլքների: Նիթականի եւ անմիթականի սահմանացիծը ոգեղութեան պահն է, երբ մարդը ունակ է ամէն ինչի: Պայամնականութիւնն ընդարձակում է հերոսի մերկայամալութեան հմարաորութիւնը, պառնում մի մոր կեանք՝ վիճակուած կեանքի սահմանագծերում («Հայրենիք եւ ճակատագիր», Երեւան, 1981):

Դատիք Գասպարեան

ՄԵԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԱՊԱՐՏԻՆ

Գրականությունն սկսում է խղճի ճայնից: Առաժն պարզունակ բարոյակասության չէ: Խաբս մարդու բուն էությունն մասին է: Գրողը իր ներսում պայքարում է իր կոմպրոմիսների դեմ, դա գերմարդկային ճիգ է, իսկական մարդու յանդուգան ձգտումը, բարձրագույնի որոնումը, մարդ ասելու միակ ելքը: Սրանով է պայմանավորվում հանճարը, սրանով է պայմանավորվում տաղանդը, եւ, ընդհանրապէս, սրանով է պայմանավորվում մարդը: Մենք խեղդուկ էինք արհեստականության մէջ, մենք գիտեմք, թէ ինչ բան է վառի համագործակցությունը: Անէնթեայ պայքարը իր ներսում, իր կոմպրոմիսների դեմ, եւ օրէցօր նստած մի թիւ, յաղթանալիս մի փոքրիկ կոմպրոմիս: Այսպիսին է գրողի ներքին առօրեան, նրա ուժերի լարումներն ուղղությունը: Մեզ մօտ կոմպրոմիսը միշտ առկայ է եղել եւ իր դասական հասկացութեամբ, եւ ուրիշ հագար ու մի փոքր հասկացություններով: Հայ ժողովուրդը այդպիսի վիճակներ է ապրել-անցել, այնպիսի կերպարանավորություններ ունեցել, որ հայ գրողի վիճակը հարկւր անգամ դժուար է եղել, անասելի դժուար՝ ուրիշ գրողների համեմատութեամբ: Ո՞ր կոմպրոմիսի դեմ պէտք է պայքարէր հայը եւ գրողը յատկապէս: Իր ներսում բարուն անելի տեղ տալու, ներքին ճշմարտութեան հասնելու, դառնանութեան դեմ կռուելու, ազգամիջեան պայքարներում ֆիզիկական գոյութիւնը պահպանելու՝ պարբերաբար քննել կախած, Քրիստոս ընդունելու, մարդ չսպանելու, «Եւ, թէ մա» հարցերի կոմպրոմիսների դեմ: Սրանք թերեւս շատ ընդհանուր են, բայց յայտնական են մեզ համար: Այսօր ոչ թէ նոյն հարցերն են, այլ հարցի նոյն ֆակտորում է: Ազգամիջեան հարցը թերեւս չբացել է, սակայն կայ մարդու ներքին, մարդկանց յարաբերությունների ամենադժուարին, ամենատառապելի հարցը. ինձ թու՞մ է, որ դրանք են հիմքը մահ մեծ հարցերի, այստեղից են սկիզբ առնում Ֆաուստի, Ռասկոլնիկովի եւ, կը համարձակուեմ ասելու, Օսկենցիմի ու տարբեր համակենսոյունացման ճամբարների խնկիրները: Երկու մարդու յարաբերությունը, դա աշխարհի ճակատագիրն է, բախտն է: Երկու ընդհանրապէս մարդու՝ ինչ օղակում էլ նրանք լինեն: Մայրկային յարաբերությունն. սրա մէջ տեղադրում է տիեզերքը:

(«Գրական թերթ», 1971, թիւ 26)

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶԵԱՆ

Ա ԱՅՎԱԶԵԱՆ

Գ Լ Ո Ի Խ Ը

ՅԵՆԱԿՆԵՐԻ

ՎՐԱՅ

Իմ անցած կեանքը կրում եմ զլիսի մէջ, զլուսս՝ ուսերիս վրայ, ուսերս՝ յենակների: Ստացում է, որ իմ ամբողջ կեանքը, գոնէ նրա իմով-սանն պահպանած թանկարժէք փշուրները կրում եմ յենակներիս վրայ պահուող զլիսի մէջ: Որովհետեւ ես ՅԶ տարեկան եմ ու դժուար չէ պատկերացնել իմ մարմնական եւ մտաւոր վիճակը: Ոչինչ չունեմ եւ ոչ ոք չունեմ: Այսպիսի դէպքերում, դուք երեւի գիտէք կամ լսել էք, որ մարդ ապրում է իր անցած կեանքով: Այն կեանքով, որ պահպանում է յիշողութիւնը: Այն որ մենք՝ իմ տարիքի մարդիկ, երկար ու անշարժ նստում ենք մի կեցուածքով, դուրսը՝ զբօսայգում կամ պատշգամբում, չի նշանակում, որ մենք կեանքից դուրս ենք. մենք ապրում ենք, միայն թէ ուղեղի մէջ՝ ուր անցած տարիները բոսայի. չափ են դարձել, օրերը՝ կիսատ-պոտատ, շերտընդմէջ մի ուլունքաշար...: Խնամքով հերթի ենք դնում, երբեմն շարունակութեան ըմբռնանումը յետաձգում յաջորդ օրուան, եւ դա մեծ կեանք է իմ ժամանակի, որը ոչնչով չի զիջում անցած բոլոր տարիքային ժամանակներին:

Այդ օրը դուրսը անձրեւ էր, ես նստած էի պատուհանի առջեւ, նայում էի ապակու կաթնագոյն քուշուշկին: Թուաց՝ դուռը մի թեթեւ ծեծեցին, բայց մինչեւ ես կը համոզուէի, որ թակոց եղել է, արդէն սենեակիս շեմին կանգնած էր անծանօթ մի մարդ: Ես երկար նայեցի նրան՝ սպասելով բացատրութեան՝ իր յայտնուելու եղանակի ու ով լինելու վերաբերեալ: Նրա զուգակշիռ սպասողական լռութիւնը ինձ անորոշութիւնից հանեց.

—Ո՞վ էք,— հարցրի ես:

Նա անդուր ժպտաց: Ես աւելի սրտնեղեցի.

—Մենք ծանօթ ենք...

Նա զլուխը թեթեւակի բացասաբար տարուբերեց:

Ես նայեցի դրան կողմը՝ յիշելու համար, թէ արդեօք բանալիով չէի՞ փակել: Դուռը վրայ էր դրած: Նա եւս նայեց դրան կողմը՝ կարծես

մտածելով, թէ երբ է դուռը այդպէս կիպ վրայ դրուել: Յետոյ նայեց ինձ.

—Թոյլ տուէք նստել...: Իմ գործը երկար է...

—Դուք ասացիք, որ մենք ծանօթ չենք,— որպէս պատասխան ակնարկեցի ես ու մտածեցի՝ «Այս խառը ժամանակ ինչ բաւ բան կարող ես սպասել: Նրա ծերութիւնն է միայն անվտանգութեան երաշխիքը»: Առանց հրաւերի նա մօտեցաւ ու տեղ գրաւեց անձրեւոտ պատուհանիս մօտ, իմ դիմաց: Ամպոտ լոյսից նրա դէմքը ասելի գունաթափուեց: Համարեա՛ իմ տարիքի էր, մաշուած այտերով, քունքերը ներս ընկած, այտուկները կարծես քթի վրայով կամուրջ էին կազմում:

—Ես ձեզ կարելոր բան եմ բերել...— ասաց նա:

—Բայց ինձ ոչինչ պէտք չէ:

Նա աննկատ քմծիծաղեց.

—Դուք համոզուա՛ծ էք:

Ինչ—որ մի բան կծկուեց ներսս. տարօրինակութեան միջոցառող այն—բան խաբէպատիր էր, որ հնարաւորութիւն էր տալիս կա՛մ երազի մէջ կարծել ինքզինքս, կա՛մ խեղճանցում: Ես ներքնապէս սկսեցի կոշտ մի խօսքով փնդելու գործողութիւնը, բայց մինչեւ կը զարգացնէի այդ քայլը, նա ընդհատեց վիճակս.

—Համբերութիւն ունեցէ՛ք եւ կը տեսնէք, որ ամէն ինչ բնականութեան սահմաններում է, եւ իմ այցը շատ է պէտք ձեզ:

—Գուցէ հարեալսն է ինչ—որ բան պատուիրել,— փնթփնթացի ես:— Դիմացիս հարեալսն...: Նա շատ երեխաներ ունի եւ շուն է պահում...

—Ոչ,— ասաց նա:— Ես ճիշտ ձեզ մօտ եմ եկել: Ձեր ազգանունը Կարապետեան է:

Նա ոչ թէ հարցրեց, այլ հաստատեց իմ ով լինելը, թէպէտ ես, չգիտես ինչու, պատասխանեցի.

—Այո...: Ի՞նչ էք ուզում...

—Ասացի, որ կարելոր բան եմ բերել ձեզ...— կրկնեց նա ու ես նա—յեցի նրա հազուատին: Իր ժամանակն անցած ամառային վերարկու էր, ճենճոտ ծնկներով՝ տաքատ:

—Ի՞նչ պիտի բերէք...: Ինձ ոչինչ պէտք չէ:

Նա մինչեւ կ'արտասանէր այդ օրուայ ամենաարտառոց նախադասութիւնը, խորհրդաւոր գործնականութեամբ խնդմնդաց.

—Ես բերել եմ ձեր կեանքը...

Արագ գիտակցելի, թէ ինչ է կատարում, դժուար էր. եւ սպառնազին ծաղր կար նրա ասածի մէջ եւ նենգամիտ խաղը:

—Դուք խեղճ էք:

—Ոչ, ուղիղ հակառակը: Ես սթափ մարդ եմ եւ գիտեմ ասելիքիս ար—ժեքը:

Ես այլեւս լուռ ու սեւեռուն նայում էի նրան:

—Քիչ յետոյ կը համոզուէք...

Նա արմունկները դրեց սեղանիկիս վրայ, չորացած ձեռքերը երկա—րացնելով իմ կողմը՝ նրանց մասնակցութիւնը մտցնելով իր ասելիքի մէջ:

—Ձեր կեանքը ձեր զլխի մէջ է...: Ծի՛շտ է...— հարցրեց նա ու ինքն էլ պատասխանեց,— ինչպէս եւ իմը: Մենք մի տարիքի ենք: Ես գիտեմ, որ մեր այսօրուայ կեանքը անցած կեանքի վերապրումն է: Ես այդ հա—

ճոյքը գիտեմ: Բայց մեր յիշողութիւնները, աւա՛ղ, ամէն ինչ չէ որ պահել են...: Ես ձեզ բերել եմ ձեր կեանքի մանրամասները, չպահպանուած ժամանակը, որոնց, բազմաթիւ պատճառներով, անհնար է տեղեակ լինել...: Անարդարացի է, ճիշտ է, որ մարդ իր սեփական կեանքից տեղեկութիւն չունենայ...: Ինչեւէ, ես բերել եմ ձեր կեանքը, իմ բերածի մէջ հաճելին չափ է, ու դուք կ'աւելացնէք ձեր գլխում պահածի վրայ, կը թարմացնէք եղածը: Աւելի մեծ հարստութիւն դուք չունէք, իմ կարծիքով: —Մենք մի՞ գպրոցում ենք սովորել...— հարցրի ես եւ սրանից աւելի տրամաբանել չկարողացայ:

—Ոչ:

—Որտեղի՞ց ենք ծանօթ:

—Մենք ծանօթ չենք:

Եռարանքս անց.

—Դուք կատակու՞մ էք...

—Բնաւ: Որպէսզի մեր խօսակցութիւնը գործնական բնոյթ ունենայ, ես մի նմոյշ կը հրամցնեմ ձեզ ձեր կեանքից...: Լա՛ւ...: Յետոյ ինքներդ կ'որոշէք՝ ուզու՞մ էք իմ առաջարկածը, թէ՛ չէ: Եւ այսպէս՝ յիշեցէք Հելմ-հոլցի փողոցը...

—Չեմ յիշում,— գիմակայող յամառութեամբ արտաբերեցի ես:

—Ի հարկէ չէք յիշի: Որովհետեւ դուք հասցէով չմտաք այդ տունը, այլ ձեզ ուղեկցեց Թամարը, յիշու՞մ էք՝ օպերայի երգչախմբից...

Ես յիշեցի Թամարին: Ոչ միայն յիշեցի. նա համարեա՛ւ ամէն երեկոյ իմ վերապրումների մէջ է յայտնւում:

—Ձեր գէմքից երեւում է, որ յիշում էք...: Ես դեռ ոչինչ չեմ աւելացրել ձեր ունեցածի վրայ իմ բերածից: Բայց դուք, երեւի, չէք յիշում այն սենեակը, այն փոքրիկ, առնին ու արիստոկրատիկ անկիւնը՝ վեց քառակուսի մետր տարածութեամբ, բարոկկո ոճի կահոյքով, Քրանսիական բազմոցով, ուր մտաք Լենայի հետ...: Կիսալեհական Լենայի ազգանունը կարող եմ ասել, բայց դա ոչինչ չի տայ: Դուք երկուսդ էլ արդէն բաւականին զինովցած էիք...

Ես Լենային եւս մտաբերեցի. նա ոչ թէ յիշողութեան հետուից առաջացաւ, այլ նրա կերպարը ճայթեց իր բնական չափսերով դատարկութեան մէջ: Ու դա զարմանահրաշ մի թրթիռ հաղորդեց իմ լերդացած կենսանիւթին, քանզի Լենան անյոյս կորել էր ուղեղիս ունեցուածքի միջից՝ պահոց գալարների հետ մէկտեղ:

Ինձ թուաց, թէ երկար ժամանակ ես լուռ եմ, եւ սենսկումս ուրիշ մարդ չկայ:

—Արդէն մի փոքր բան աւելացրի...— անծանօթիս ձայնը ուշաբերեց ինձ:— Լենան առանձնապատուկ փարթամ ու սպիտակ կուրծք ուներ, եւ նա անընդհատ շահարկում էր իր բարեկամութիւնը, հագին՝ սեւ նրբաթաւանիս զգեստ էր, որովայնի մասում մի քիչ լողզուած, ու ծիծաղելու ժամանակ (իսկ նա կուշտ ծիծաղ ուներ) խաղում, փայլփրում էր զոզոզղացող որովայնի վրայ:

«Այո, այո, յիշեցի...: Եւ ինչպէս կարող էի մոռանալ: Լենա՛ն...: Նա մահացաւ տակաւին երիտասարդ»:

—Դուք ընթրում էիք ամառային «ինտուրիստի» տաղաւարներից մէ-

կում: Սեղանին սեւ խաւիար կար, խոզի խորոված, թէպէտ խորովածը ուշացնում էին, կանաչի, հայկական կոնեակ՝ հինգ աստղանի, խաշլաման սկզբից բերեցին, թժու դրած վարունգ, մանր կտրտած սոխ խաւիարի հետ ու կարագ, թաւաքեաքաք, այն ժամանակ յարգի էր թաւաքեաքաքը...: Կոնեակից յետոյ բերել տուեցիք գինի, չորս շիշ...: Ձեր մատուցողը կարծիք տղայ էր, բարակ բեղերով, դուք նկատողութիւն արեցիք, որ եղունգները մաքուր չեն...: Յետոյ Լենան սկսեց երգել լեհական ինչ-որ մեղեդի...: Թէպէտ ես կարող եմ որոշիացնել այդ երգը...: Եւ դուք ձեզ անյարմար զգացիք, որովհետեւ կողքի տաղաւարից մի երկու տղամարդ գլուխները ներս բերին վարագոյրի ետեւից...: Դուք երիտասարդ էիք՝ դեռեւս համեմատաբար անաղարտ, եւ ամաչեցիք...: Կէս գիշերին դուք եկաք ռեստորանից՝ արդէն կարգին խումհար, եւ ամբողջ ճանապարհին համբուրում էիք նրա թեւերն ու կուրծքը...: Անցաք Սոկրատի փողոցով, յետոյ անկիւնում նա թիկն տուեց պատին, թսաք, որ յոգնել է եւ յետաձգել է պէտք ձեր հետագայ մտերմիկ տեսակցութիւնը: Դուք դեռ վերաւորեցիք, յետոյ սպառնալու փորձ արեցիք, ապա սկսեցիք աղաչել...: Նրա շուրթերը հիմեղ ու հաստ էին եւ տակից երեւում էին լնդերը...

Ես իսկապէս յիշեցի, ո՛չ միայն յիշեցի, այլեւ իմ մէջ վերականգնուեց յուզական այդ վիճակը, թանձր փոշու տակ յայտնուեց պահ մտած կրծքի շոշորթը...: Ու դա ամօթախառն մի բան ուներ իր մէջ, բայց հաճելի էր...

—Տեսնում եմ՝ դուք վերցնում էք իմ տուածը...: Սրանով բաւարարւենք, թէպէտ ես կարող եմ վերադարձնել ձեր ամբողջ գիշերուայ արբուեցիք այդ փոքր, տաքուկ սենեակում, որի տանտիրուհին ձեզ մենակ թողեց...

Մի կենսայի ու սարսոռ դան մտաւ մարմինս, կեանքիս պատառը, որ կորել էր, եւ երբեք ես չէի մտաբերելու այդ անկրկնելի իրականութիւնը:

—Եւ այդպէս՝ աւելի կարեւոր հանգամանքներ, ձեր վայելումներն ու եռանդի վերականգնանացումները, ապրածի ամենաթանկ մասերը...

—Այո, այո...— տարուեցի ես՝ արդէն մտքիս մէջ այդ գիշերուան շարունակութիւն կցելով:— Կէսգիշերին չրջապատս կայծակնօրէն լուսաւորւեց, ու տեղնուտեղը սենեակը վերստին ընկղմուեց խաւարի մէջ,— ինքս ինձ բարձրաձայն յիշեցի ես, որովհետեւ այդպէս էլ հանելուկ էր մնացել ինձ համար այդ ակնթարթային լոյսը, որը այն պահին անտեսուեց տեղնուտեղը՝ տոփանքից մթազնած ուղեղիս մէջ անհետանալով:

—Լոյսն էլ յիշեցիք...— ձանձրախորհուրդ զարմացաւ անծանօթը:— Դրա անհրաժեշտութիւնը բոլորովին չկար:— Նա խուսափուկ քմծիծաղեց,— երեւում է՝ աստմային համակարգը իր բոլոր օղակներով է կեանքի կոչում...: Ես նպատակ չունեի այդ մանրուքը արթնացնել ձեր մէջ...: Սակայն ես կը վերադարձնեմ այնպիսի գրուագների ստորակայ շերտերը, որոնք գերակայութիւն ձեռք բերելով՝ գլխիվայր կը շրջեն տհաճ, եւ դրա համար մոռացուած, եղելութիւնը...: Յաճախ մարդ չի հասցնում դիպուածի երկրորդ կողմը նկատել...: Եւ կեանքի հատուածը ամբողջութեամբ դիտաւորեալ կորցնում է յիշողութիւնից...: Ու առանց այդ դրուագների ձեր այսօրուայ գլխի կեանքը աղքատիկ է...

—Բայց դուք ո՞վ էք...

—Դա ինչ կարելու է... Ասենք՝ ծեր մարդ, ձեզ նման կեանք անցած անձնաւորութիւն՝ մի տարբերութեամբ միայն, որ դուք, ցաւօք, չէք կարող յետ բերել իմ կեանքի կորցրած մասերը...: Ես, օրինակ, երախտագիտութեամբ կը վերցնէի այն, ինչ առաջարկում եմ ձեզ...:

Նա հին ծանօթի բարի կամեցողութեամբ աչքով արեց.

—Ուրեմն՝ վերցնում եք:

Ուղեղիս մէջ թերեւս շատ խոր արմատ էր ձգել լոյսի վայրկենական փայլատակումը, որը մետաքիզիքայի ոլորտն էր մղում ինձ, եւ ես, երբեմն-երբեմն, այդ լոյսի աղօտ յուշով էի փորձում ինչ-որ բաներ բացապարզել. բռնկման յետագիծը Աստուծոյ կերպարանքն էր ինքնեկ ճշգրտում իմ շփոթի մէջ տիեզերածնութեան միջոցով:

—Ասացէք, լոյսի զոյւթեան առեղծոածը դուք յարմարեցրի՞ք իմ ասածին, թէ իսկապէս դա էլ գիտէք...— Հարցիս մէջ անվստահութիւն կար նրա այցելութեան ծանրաբարոյութեան վերաբերեալ, շնայած այն բանին, որ Լենայի ուրուպատկերը իր տեղն էր զբաղեցրել իմ գլխում:

Նրա աչքերի մէջ ծանր հոսքով սկսեց հաւաքուել դեղնաւուն մի հեղուկ եւ հետզհետէ դրաւեց ամբողջ տարածութիւնը՝ իր մէջ առնելով նոյնիսկ աչքահաստերը: Եւ այդ գեղին պղտորութեան մարմաշի տակից հայեացքը հասաւ ինձ.

—Դրանից չէի ուզում սկսել...: Բայց ինչ արած...: Եթէ այդպէս էք ուզում ասել. լուսանկարչական ապարատի փայլատակում էր...

—Դուք լուսանկարել էք...— տազնապեցի ես անցածի հաշուով:— Դուք այնտե՞ղ էիք...

—Ես՝ ոչ:

—Եւ լուսանկարը կայ հիմա...— դժգոհ մտմտացի ես:

Անծանօթը զլիսով արեց, ու նրա լուռ պատասխանի անտարբերութիւնը ասես ուղղուած էր Բաբելոնի պատմութեանը, այլ ոչ իր զիմաց նըստած կենդանի մարդուն:

—Ի դուր խօսեցինք այդ աննշան մանրութի մասին: Ձեր կեանքը շատ աւելի հետաքրքիր է ու երկար, քան այն, ինչ այժմ պահւում է ձեր զլիսի մէջ:

Լուսանկարի պատմութիւնը պարզունակ գոեհկութիւն հաղորդեց նրա զրոյսւորութիւն, այնուամենայնիւ ես հարցրեցի.

—Գոնէ ասացէք՝ որտեղից ձեզ այդքան մանրամասն եւ ինչու է ձեր մօտ գտնուում իմ կեանքը...

—Ամէն ինչ աւելի հասարակ է եւ միտտիկա ու դիւթ որոնել պէտք չէ: Այն հիմնարկը, որտեղ ես էի աշխատում, ձեր կեանքի մասին աւելի շատ բան գիտէր, քան դուք ինքներդ: Ես հնարաւորութիւն ունեւ ձեզ այնպիսի զրուակներ ներկայացնելու, որոնցից ձեր կեանքը կը փառաւորուի...: Ու գիշերները կը յագնեան վերապրումների նոր աւիւնով...: Արտաքնապէս միանշանակ իրադարձութիւնների մէջ կան ինքնապաշտպանութեան բընազգով չնկատելու տուած կենսապայմաններ, որոնք բացայայտում են տղամարդու աստեղնային ժամերը, նրա լիներութեան կորիզը...: Երբեմն ձեզ փոխգիշում թուացող արարքի մէջ, որը վտարուել է ձեր զլիսից լիակած քաղաքակրթութեան շինծու բարոյականութեամբ, կան սկզբնաստեղծ առնականութեան, կամքի, առողջ սաղմանիւթի հաստատումներ...: Դը-

րանք վերապրելով հիմա, դուք կ'սպրէք վրիպած ձեր իսկական կեանքը...: Եւ այդ ճշմարտութեան, իսկականութեան վայելքից նոյնիսկ ինձ բաժին կը հասնի՝ որպէս տղամարդկային միասնութեան ներկայացուցչի...— Ու աշխուժութեան նոր լիցք ստացաւ:— Իսկ կեանքը զլիսի մէջ անելի քաղցր է, քան՝ իրականութիւնում...: Եւ վերջապէս՝ ի՞նչ տարբերութիւն...

—Այնուամենայնիւ՝ ո՞ր հիմնարկը...— շարունակում էի ես նենգամիտ հետապնդումը:

—Ամենազլխաւորը՝ մեր երկրում...— նշանակութիւն չտալով ո՛չ իմ հարցին, ո՛չ իր պատասխանին՝ արտաբերեց նա եւ շարունակեց.— ձեր կեանքը իմ մենակութեանն էլ կ'օգնի...

Երկարածի՞ք տարիներին ընթացքում ես զուգահեռաբար, դերասանի պէս, ապրում էի նաեւ ապրածս զլիսի մէջ հաւաքելու միտումով...: Գուցէ թէ երկու նպատակներից մէկը՝ կեանքս զլիսի մէջ կուտակելն էր, ինչպէս կուտակում են հացի կտորտանքը նեղ օրերի համար...: Սակայն ես քիչ էի հաւաքել իմ սկզբնական ուղեղի մէջ ու, բացի այդ, պարզապէս տեղեակ չէի իմ կեանքից...

Վերջապէս ես ժպտացի անծանօթ այցելուիս ու, մինչեւ կ'արուէր մեր համագործակցութեան առաջին քայլը, մենք երկար ժամանակ հաշտ մտքով ու լուռ իրար էինք դիտում...

— ԱՂԱՍԻ ՎՅՎԱԶԵԱՆ



ՎԱՀԱԳՆ ԴՎԱԹԵԱՆ

Բանաստեղծ, հրապարակագիր, թարգմանիչ և թատերադիր Վահագն Դավթեան ծնած է 15 Օգոստոս 1922ին, Արեւմտեան Հայաստանի Արարիկի քաղաքը: 1926ին ծնողքին հետ կը հաստատուի Երևանի Արարիկի արուարձանը: 1944-43 կը ծառայէ

Կարմիր բանակին և կը մասնակցի Հայրենական մեծ պատերազմին: 1948ին կ'աւարտէ Երևանի պետական համալսարանի բանասիրական հիմնարկի հայկական բաժինը:

1954-58 ժամանակաշրջանին Վ. Դավթեան մաս կը կազմէ «Աւանգարդ» թերթի խմբագրութեան, իսկ 1954-59՝ «Գրական թերթ» խմբագրութեան: 1962-65 տարիներուն կը գործէ իրբեւ պատասխանատու խմբագիր «Գրական թերթ», իսկ 1965-67՝ «Հայրենիքի» ծալնի: 1967ին կը նշանակուի ԸՄՖ փիւղբահայտութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահի տեղակալ:

Վահագն Դավթեան ցարդ հրատարակած է 25 անուն գիրք, որոնց գլխաւորներն են՝ «Թոնորակեցիներ», «Ամառանային ամալրոպ», «...Բայց ծնունցի», «Գիւնու երգը», «Ծովս ծըլտանի», «Ասք սիրոյ եւ սրի», «Անկէզ մորենի», «Կապոյտ գիրք», «Լոյս իբրեւ հաց» և «Լոյս առաւօտի» անուն փոթորակները:

Վ. Դավթեան թարգմանած է ռուսերէնի, անգլերէնի, ֆրանսերէնի, սպաներէնի, լեհերէնի, չեխերէնի, ուկրաիներէնի, վրացերէնի, պարսկերէնի և այլ լեզուներու:

Վահագն Դաւթեանը մեզ պատմում է պարզ, հասարակ հրաշքերից հիստուած կեանքը, երեւոյթներ՝ որքան պարզ, նոյնքան հիմնական ու անցողիկ կեանքի մէջ՝ համբոյրի հրաշքը, արցունքի հրաշքը, եւ չարութեան գէտ թու ծիծաղի հրաշքը, որ կարողանում է պատեմատրեւ բանաստեղծին՝ ընդդէմ չարութեան ու անգութեան («Հայրենիքի» ձայն, 1975, թիւ 28):

Ռազմիկ Դաւոյեան

Իրական բանաստեղծութեան մէջ խոհի տարերքը քիտեղանում է խօսքի տարերքով, յոյզի կախարդանքը արտին է հասնում իբրեւ լեզուի հրաշք: Վահագն Դաւթեանի բնարեգութեան մէջ ստեղծագործական տեղի ամենակենսամակ յարուցիչներից մէկն էլ միակ ու անկրկնելի բառի, միակ ու անկրկնելի տողի, միակ ու անկրկնելի պատկերի երբեք չլռող կարօտն է («Հայրենիքի» ձայն, 1986, թիւ 22):

Վլատիմիր Կլրակոսեան

Վահագն Դաւթեան այն սակաւթիւ արուեստագէտներից է, որ ստեղծագործական պրոցեսում շարժման մէջ է դնում ազգային ու համաշխարհային մշակութային աւանդները, ժամանակակից հայ պոեզիան հարբստացնում այնպիսի միջոցներով, ինչպիսիք են տաղը, ասքը, ներքողը, գողթան երգերի ու միջնադարեան պոեզիայի ճնարարմանը, ծիսական երգերն ու օրհնաբանութիւնները («Գրական թերթ», 1988, թիւ 6):

Ժեմիա Քալանթարեան

Վ. ՊԱՆԹԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆ 88

(ՀԱՏՈՒԱԾ ՊՈԵՄԻՑ)

...Եւ թափօրն էր ընթանում, հոսում էր լուս ու դանդաղ,
Եւ թափօրի շուրթերին շանթ ու կայծակ էր կպած,
Ծաւալում էր, ալիքում մի սգաւոր շամանդադ,
Երբ հնչեց երգը ըմբոստ եւ Եռագոյնը ծփաց...
Եւ Եռագոյնը ծփաց, եւ Եռագոյնը յառնեց,
Եւ Եռագոյնը վառունց այդ սեւի մէջ ու սգի
Ու կայծակին փաթաթուած, դէպի երկինք սաւառնեց,
Որպէս Լքալ ու հաւատ, որպէս սրին ու ռզի...

...Արդարութիւն՝ սուրբ անուն,
Ազատութիւն պանծալի,
Առաքեալներն է՛ք դուք նոյն
Տառապանքի ու ցախ...
Սակայն մերէ՛ք ինձ, մերէ՛ք... Ես՝ միամիտ, ես՝ մանուկ,
Հաւատացի, բէ իրօք դուրս է՛ք եկել զնդանից,
Եւ պատանին այն չ՛հնաղ, որ Եռագոյնն էր տանում,
Թուաց՝ ձեր սանն է ըմբոստ...
Եւ ուր որ է մեր ձայնից,
Թուաց, ինքներդ կը զա՛ր ու միացած թափօրին,
Լուս կ'ընթանա՛ր դուք մեզ հետ ու սգի հետ մեր խորին...

Ո՛չ, չի եղել Կիրակի...
Տէ՛ր, ջրերով դեռ շրջում,
Քո գառամեայ շուրթերով «Լոյս եղիցին» շշնջում,
Եւ սակայն չես կարենում արարման ծէսն ստարտել,
Բաժանել չարն ու բարին, լոյսն ու խաւարը գատել:
Եւ դեռ միւր է ամէն ինչ, դեռ չկայ խիղճ ու ոգի,
Դեռ մետաղի կրճատց ու դոփիւմ է սապօղի...

Եւ թափօրն այն վարարած դեռ իր սեւ սուլն է տանում,
Իսկ առջեւից այն չ՛հնաղ պատանին է ընթանում,
Այդարարեան պատանին, չ՛հնաղ, ինչպէս մեր Արան...

Պայծա՛ր, պայծա՛ր մի նակատ՝ Երազմերի մրցարան
Պայծա՛ր, պայծա՛ր մի նակատ՝ վրան ծփանքը լոյսի

Տխո՛ւր, տխո՛ւր մի նակստ՝ նակատի պէս Յիսուսի...
Բայց դո՛ւք ինչ է սապոգի, ահեզ մեռաղն է ճշում
Եւ պատանու նակատիմ շէկ արճիմն իր մխրճում...

Ու ես չկամ, ես՝ ցատում,
Մոռնո՛ւ եմ ես, ոխ ու բոյն...
Ու՛ր ես, քեզ եմ սպասում,
Կոմիտասեան խենթութիւն...

Եւ զիշեր է խօլական, մոնղոլական մի զիշեր,
Հողմը սլոկել ինձ տեղից ու անապատ է քշել,
Հողմը ոռնում խելագար, Լենկ-Թեմուրի պէս կաղում,
Կաղութիւնից մաղձոտած, առաւել է կատաղում,
Խաւարամած երախով քրքշում է այդ վայրին,
Առնում է ինձ ու զարկում այդ աւազէ խաւարին:
Ու ես ուզում եմ մի պահ բռնել հայեացքն այդ մեծի,
Սակայն կոպեր են միայն, չկան բիբերն աչքերի...
Նա կոկորդիս է դնում արդէն թաթերն իր խեղճող...
Ես ճշում եմ շնչահատ...
Ես պաղ քրտինք եմ ու դող...

Ջարքնել ու քեզ եմ յիշել, մա՛յր, սուրբ մասունք իմ հողի,
Մայր, որ ինձ կեանք ես տուել օգոստոսեան մի կէսօր:
Ասում էիր, թէ այդ օրն օրհնութիւնն էր խաղողի,
Ու իմ սիրտն էլ, երեւի, օրհնել են մոյն այդ ծէսով:
Թէ այդպէս է, թղչ կեանքում քրմուհու պէս շաղաւտ,
Պիտի քայլեր իմ սրտով մի հեթանոս առաօտ...
Ու միշտ միտում էր կարօտն իմ արեան մութ յորձանքում,
Եւ մի հարց էր միշտ աչքում իմ շուրթերին տոչորած.
Գուցէ՛ ծնունդ էի ես, որ որոնեմ իմ կեանքում
Մեր այն զոդթան երգերի լոյսն ու կորովը կորած,
Որ երգեմ բոլոր զինու ու երգեմ համը հացի,
Որ տողերիս մէջ բոլոր նոսն բոսորը վառեմ,
Ճառագայթով նկարեմ մերկութիւնը կամացի,
Բոլոր բայերս նրա ոտքերի տակ խոնարհեմ:
Բոլոր բառերս օծեմ շուշանների շաղերով,
Բուրումներով փեթակի, հնձած խոտի եւ ուրցի,
Ու երբ զիշերն իջնի ցած, ասուպներն իր մաղելով,
Անհունի հետ ու ոգու նստեմ վսեմ գրոյցի:
Բայց վաղուց եմ անհունի կապոյտ լեզուն մոռացել,
Եւ դու, զիշեր, աստղատառ քո մատենաները փակիր,
Խղմի լեզուն աշխարհում մեռած լեզու է դարձել,
Արդարութեան սուրբ լեզուն՝ անմեկնելի սեպագիր...

Մ'ա՛յր իմ, մ'ա՛յր իմ միամիտ, երեւի չես նկատել,
Որ երբ խաղողն են օրհնել ու երգել փառքն արարչի,
Խաչի թելից հոգուս մէջ խաչեալի ցանն է կաթել,
Բախտի խաբանն է դարձել սրտիս ստոներն այդ խաչի:
Այո, ի՞նչ ասեմ, սրտիս մէջ հիմա զամէր են խրուած,
Ձեմ կարենում հաւաքել բեկորներն իմ փշրուած,
Այն աղբիւրն եմ կորցրել, որ մաքրութեամբ իր տրտում
Եւ աստղերի ցլանքով իմ հաւատն էր մկրտում,
Ճանապարհն եմ կորցրել ժայռից բուսած այն ծառի,
Որ պղնձի զրնգոց ու սխրանք էր պանծալի,
Կորցրել եմ երկնքում ես այն աստղը հուրիւրան,
Որ երբ մութն է հալածել, ապաստանել եմ վրան...
Եւ ինձ այնպէս է թուում, թէ տրուած հոգմ ու բուքին,
Ինչ-որ կի՛ն է սլանում ու որոնում որբուկին:

Ես ի՞նչ ասեմ...

Վեր կենամ,

Այրեմ գրքերն իմ գրած,
Լոյսն ու կապոյտը նրանց տամ հոգմերին, թող տանեն,
Այնտեղ կարօտ կայ ու սէր, խիղճ կայ այնտեղ ծուարած,
Հեքիաբներ կան հիասքանչ, թող ամէնն այդ կործանեն:
Ես հերձուածող եմ հիմա, հաւատափոխ մի նսեմ,
Պիտի նստեմ նրանց յէմ, պիտի ներում աղերսեմ.

— Լո՛յս անսկիզբ ու անհատ,

Դու ներիր, մեծդ, նախ ինձ,

Ես դու՝ կապոյտդ անծայր՝

Իմ ներշնչանք, իմ բախիժ,

Թող ցոյցեր ամպերի կայծակները հրեղէն
Իրենց մաքուր մատներով ինձ փայտայեն ու ներեն,

Ես դու, բոլոր՛ը, որ ետում,

Ուզում ես լոյս արարել,

Տուր այնպիսի մի ներում,

Որ լոկ լոյսին է վայել,

Ես դու՝ ծաղի՛կդ նուսն,

Դու՝ արտոյտդ սաղմոսող,


Ես դու՝ աղբի՛ւրդ լեռան,

Դու, որ արծաթ ես հոսող,

Ներէ՛ք բոլորդ մէկտեղ՝ ինձ, ձեր զերում ու նորաին,
Ուխտաւորին ձեր խոնարհ, ձեր պարտասուն նամբորդին,
Ձեմ հաւատում ես էլ ձեզ, ձեր ոսոյսն եմ ոխերիմ,
Պիտի շանքն իմ մխրճեմ ձեր բարութեան կողերին,
Պիտի ցանն իմ շիկացած արցունքիս մէջ ջրդեղեմ
Եւ խիղճն ու գութ կոչուածի սնկօք սրտի մէջ մեխեմ...

...Գիշերս:

Սեւն իր վարսերի տուած հալմին ու բուքին,
Ինչ-որ կի՛ն է սլանում ու որոնում որբուկին...



Արդարութեան առաքեալն արնոտ ծնկները գրկել
 Ու լալիս է ինչ-որ տեղ իր աչքերով կիսակոյր,
 Ինչ-որ մթին անդնդում հառաչանքը մրրկել
 Ու ինքն իրեն փշերին, մացառներին է զարկում:
 Իսկ ես, ծուաւ ու սրտում, ո՛ր եմ գնում չգիտեմ,
 Ինչ-որ վիկեր եմ խաւար, ինչ-որ անդունդ է իմ դէմ,
 Ու ես լոյսից ահառուած,

Թխապարտն եմ խաւարի,
 Վաճճ եմ, խորան եմ լքուած,
 Ո՛վ պիտի մոմն իմ վառի...

Դու՝ սրբազան խենթութեան ու սգոյ սեւ դու տարի,
 Կայծակի տող ու կնկիւ դու հակառիւ իմ դարի,
 Դու՝ ոգեղէն պատարագ, կապոյտ միսանք դու խունկի,
 Մաքրութեան տօն ու տաքափ եւ աւազան կնունքի...
 Բայց եւ մահու դու ժանիք, դու՝ սեւ արցունք ու արիւն,
 Մոլեգնութիւն խուժանի, դու՝ մարդ, աշրուած կենդանոյն...
 Եւ դու զնդակ՝ արձակուած արդարութեան հակառիւն,
 Եղեռնագործ, որ պիտի դեռ սպասի իր դատին...

1988-89

ՎԱՀԱԳՆ ԴԱԹԵԱՆ

Պարտ

Ճիշտ լաշիք ասում եմ քեզ, ե՛կ շնորհաբար խոսիր,
 ես քեզ անհաճախեմ երազների խոսքի եմ պարտ-
 դա՛մ քեզից, ե՛կ անհաճախեմ, ե՛կ քեզից օճակս անեմ,
 քե՛զ քեզից երազների արքա Գրեմ ա՛ն Գրեմ եմ պարտ։

Ղեկավար եմ քեզից, ե՛կ քեզից երազների եմ շնորհաբար,
 քե՛զ քեզից երազների եմ շնորհաբար շնորհ եմ պարտ,
 Կարգավոր լինի կա՛ն արքա, արքա քեզի ե՛կ Գրեմ,
 Կարգավոր խոսքից, ե՛կ քեզից երազների եմ պարտ։

Վերջին կամար, վերջին կամար, երազների արքա Գրեմ,
 քե՛զ քեզից երազների եմ շնորհաբար ա՛ն արքա եմ պարտ,
 Կարգավոր լինի կա՛ն արքա, արքա քեզի ե՛կ Գրեմ,
 Պարտեմ քեզից երազների եմ շնորհաբար եմ պարտ։

Ես Գրեմ եմ քեզից երազների արքա Գրեմ, արքա քեզի ե՛կ Գրեմ,
 Կարգավոր լինի կա՛ն արքա, արքա քեզի ե՛կ Գրեմ,
 Կարգավոր լինի կա՛ն արքա, արքա քեզի ե՛կ Գրեմ,
 Պարտեմ քեզից երազների եմ շնորհաբար եմ պարտ։

Կարգավոր լինի կա՛ն արքա, արքա քեզի ե՛կ Գրեմ,
 Կարգավոր լինի կա՛ն արքա, արքա քեզի ե՛կ Գրեմ,
 Կարգավոր լինի կա՛ն արքա, արքա քեզի ե՛կ Գրեմ,
 Կարգավոր լինի կա՛ն արքա, արքա քեզի ե՛կ Գրեմ։

1982

Լուսինա Պարտեմ



ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Բանաստեղծ և արձակագիր Արմեն Մարտիրոսեան ծնած է 1 Յունիս 1943ին, Գուկարբի շրջանի Մեղրուտ գիւղը: 1964ին կ'աւարտէ Երեւանի Խ.

Արտմանի անուան հայկական մանկավարժական ինստիտուտի բաժինը:

1964-66 տարիներուն, իբրեւ հայ լեզուի և գրականութեան ուսուցիչ՝ Ա. Մարտիրոսեան կը պաշտօնավարէ Կիրովականի թիւ 8 դպրոցին, իսկ 1966-67 տարիներուն՝ Երեւանի «Ժամագործ» քաղաքապաշտօնակ թերթի մէջ՝ իբր պատասխանատու քարտուղար: 1968էն ի վեր ան կը պաշտօնավարէ հայրենի պատկերասփիւռի և ձայնասփիւռի կոմիտէին մէջ՝ իբրեւ խմբագիր:

Արմեն Մարտիրոսեան ցարգ հրատարակած է չորս քերթողագիրքեր, որոնց նշանաւորներն են՝ «Բանաստեղծութիւններ», «Թռչուններ» և «Մեր սիրտը երկիրը» անուն գործերը, ինչպէս նաեւ «Մազէ կամուրջ» վէպը:

Ա. Մարտիրոսեանի բնորոշ բանաստեղծութիւններէն ոմանք թարգմանուած են ռուսերէնի և այլ լեզուներու: Ան նաեւ արժանացած է մէկէ աւելի գրական մրցանակներու՝ իր չափանոյ և արձակ գործերուն համար:

...Այս առաջին փոփոխ գրքով ապարեզ է իջել եւս մէկը այն քչերից, ով պարտաւոր է ոչ թէ եկած, այլ կոչուած լինել՝ նաեւ շատերի փոխարէն իւրովի խօսք ասել զարմանալի կեանքի անյի ժամ զարմանալի բազմազանութեամբ, իւրաքանչիւրիմ միայն մի անգամ պարզեւում ապրելու իրատւոմքների եւ իմաստների վրայ: (...) Այս Արմեն Մարտիրոսեանի բանաստեղծութիւնների առաջին գիրքը հիմնականում, աղբիւրի ակից բխած մի վեհուտ առու, որ եկել-լցուտ է մեր գրական գետի սահմանների մէջ («Գրական թերթ», 1973, թիւ 43):

Վիգեն Խեչումեան

Մարտիրոսեանը մութ տրամադրութեամ տէր բանաստեղծ է, այնքան՝ որ շատերը երբեմն դժուարութեամբ են յաղթահարում նրա բանաստեղծական մտայնացումների ներքին ուղղուածութիւնը, բացայայտում տրամադրութիւնների ենթաշերտերում քաճուած իմաստային երանգները: Նա, իր խօսքերով ասած, «շարժման խորքում տարածութեամ գծեր բացող» բանաստեղծ է: Շարժումը նրա ստեղծագործական երեւակայութեամ էութիւնն է («Գրական թերթ», 1983, թիւ 25):

Սահակ Մարգարեան

Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՌԱՒՈՏ ԼՈՒՍՈՅ

(ՏԱՏՈՒԱԾ՝ “ՄԱՋԷ ԿԱՄՈՒՐՋ” ՊԱՏՄԱՎԷՊԻՑ)

Ուրուականների այցելութիւնից առաջ, երբ դեռ նոր մարմանդ լուսանում էր, Փալիկ գրիչը ձեռքը պարզեց արեւազային ընդառաջ, բոտվ լոյս առաւ, շփեց երեսը: Դէմքը ողորկեց, չհանգստացաւ, հանեց շապիկը եւ բաց պատուհանից թափանցող շողերով շանասիրաբար լուաց ուսերն ու իրանը: Հայրենի չէն ու տնից հեռանալուց ի վեր ամէն աղօթքանի լուացում էր լոյսով: «Առաւօտը միայն խաւարը ցրելու համար չի արձակում, նա քարութիւն է ցանում իր օրօրոցում հասունացող աստնուոր շունչ ու արարածի վրայ,— ասաց նա,— նրա ազդեցութեամբ հաւատացեալի հոգին մէկընդմիշտ հագնում է լոյսի զրահները, պաշտպանում սատանայի ներխուժումից»: Փալիկն այդպէս հրաժեշտ է տալիս մարդկանց հետ շրփւել-զրուցելուց ձեռք ու երեսին քսուած տիղմ ու փոշուն՝ բանասրկութեանը, խարդաւանքին, խաբէութեանը, շողորթութեանը, ընչաքաղցութեանը ու սրանց նման հազար ու մի արատների: Հետեւին անմիջականօրէն չի առընչուել, բայց Անի քաղաքում, ուր հայը մէկ-երկու տուն այնկողմ գրկից է հոռումին, սա՝ պարսիկին, սա՝ քրդին, սա՝ թուրք-սելջուկին, զրանք պարտադիր նստուածք են, չեն խնայում ոչ մէկին:

Տաշտ գրեց ոտնատակ, որ լուացուելիս կեղտաջուրը շողորի հողէ յատակը: Սա ինչքան լցուեց, այնքան սեւացաւ նստուածքից, ինչքան սեւացաւ, ծակուցաւ, Փալիկն այնքան ճերմակեց, նրբացաւ, հազաւ բարութեան ու արդարութեան զրահները: Այժմ խաղաղ ու անխարան կը քայլի ծաւալուող օրտան ընդառաջ, եւ, բան է, թէ չար ու տմարդի հանդիպեն ճանապարհին, շարութիւնը մի ակնթարթ կը մոռանան՝ անակրեկալի զայլով Փալիկի հոգում ծաւալուող բարութեան կատարեալ զոյութիւնից, թէ աղքատ ու մուրացիկ պատահեն, նրա մէջ ազնուութիւնը հօ կայ ու կայ՝ հանապազօրեայ հացի անսպառ շտեմարան է, քաղցածը տեղն ու տեղը կը հաղենայ: Ինքն էլ առաւօտից ի վեր ոչինչ չի կերել, բայց զրա կարիքը չկայ. մինչեւ ուղնուծուծը սնուել է լոյսով:

Նրա աչքերի առաջ պատկերուեց չոր ու չորուկ մի այր, գծագիր նիհար ու թեթեւասահ: Այդ մարդու անսպասելի յայտնութեան առաջ ոչ ոք դուռ ու լուսամուտ չբացեց — այդքան բարակ էր ու եղեգնիրան — դրան նեղիկ ճեղքից սողոսկեց, առանց հրաւերի բազմեց արուեստանոցի միակ բազկաթողին: Թեթեւ փետուր էր, եւ աթոռը չկճուեց նրա ծանրութիւնից:

—Ո՛վ ես,— հարցրեց Փալիկը՝ անսպասելի այցելուից չշմած, չփոթւած,— պատուէրի համար ոչ ոք այսքան վաղ չի մտել արուեստանոց:

—Գիրք չի ուզածս,— ասաց տղամարդը,— ոչ աւետարան, ոչ երազահան, ոչ հայոց պատմութիւն, քո նախկին ծանօթն եմ, եկայ՝ օր ու արեւդ հարցնելու:

Այս չորուկ-մորուկ այրը, պարզում է, Փալիկի ծանօթն է, տանտիրոջ պէս բազմեց նրա բազկաթոռին: Փալիկն ապարդիւն վերուվար արեց յիշողութեան քարանձաւում. անծանօթի պատկերը ոչ մի տեղ չբոցկլտաց: «Սխալում ես, եղբայրս,— մտածեց նա,— զու այնպիսի տեսք ու կերպարանք ունեւ, որ թէկուզ մէկ անգամ քեզ հեռուից հեռու տեսնողը մի կեանք չի մոռանայ», ապա դարձաւ-ասաց բարձրաձայն.

— Ես ի զուր տակնուվրայ արի յիշողութիւնս:

Անծանօթը ծիծաղեց: Բաց չըթուենք նրա տակից երեւաց նուրբ ու կաթնահոնց ատամնաշարը: Զգիտեա ինչու Փալիկին թուաց՝ նրա ատամները ոսկորից չեն, այլ փափուկ ձեւան համաչափ փաթիլներ են, որեւէ բան ծամելիս կամ արտաբերուող բառի կոշտութեանը հանդիպելիս՝ իրենք իրենց կը հալուեն-կը վերջանան:

— Դու ինձ որոնում ես այնտեղ, ուր չկամ,— ասաց տղամարդը,— մը-տաքերիդ արտազրաժդ զրքերը:

— Դրանք անթիւ-անհամար են,— առարկեց Փալիկը,— յիշելը դժուար է:

«Բայց չէ, զրքերում հանդիպած բազմապիսի սրբերից որի՞ն է նա նման,— մտածեց,— շատերն են, ախր, չոր ու չորուկ, զուտ ոգեղէնիկ, առանց մարմնական նեղուածք-կաղապարի: Անծանօթը սուրբ է, հաստատ է, փակ դրան նեղիկ ճեղքից թափանցող լոյսի հետ ներս մտաւ անակընկալ, աչքերը խաղաղ են ու բարի, մաշկը նուրբ ու բարակ՝ յղկուած մաշկադաթի գունատութեամբ, զրքից է պոկուել, յայտնուել, հաստատ է: Կրծքին, սեւ նափորտի վրայ ոսկեղէնիկ խաչ է՝ հազուտից դատելով հասարակ կրօնաւոր չի, երեւելի վարդապետ է՝ վաղուց ապրած-քնացած: Գրքերից յայտնի ո՞ր սրբին է նման, Տէր Աստուած...: Եւ ատամները ոսկորից չեն, ձիւնի փաթիլներ են, մարմնական անունդ չեն ծամել երբեւէ. մարդն իր կեանքի համար ի վերուստ սահմանուած ժամկետն անցկացրել է բոլորովին ուրիշ կերակուր ընդունելով. կանոնաւոր սնուել է աղօթքանով»:

— Կուրութիւն էր,— շարունակեց բարձրաձայն,— ես քեզ փնտռում էի իրական մարդկանց մէջ:

Սուրբը ժպտաց:

— Քո հոգում,— ասաց,— ինչ-որ բան արդէն արթնացաւ: Միւսներն էլ կը մտաբերես, երբ քեզ յիշեցնեմ իմ պատմութիւնն այնպէս, ինչպէս զրուած է քո արտազրաժ զրքում: Մի անգամ, ուրեմն, պատահեց, որ ես զընացի քարայրը, որտեղ զրքերն էին: Երբ ինձ հետ եկածները դուրս ելան, փակեցին դուռը, ես թաքնուեցի ներսում. նրանք այնպէս իմացան, թէ ես իրենցից առաջ դուրս եկայի: Երբ զրա վրայ շատ օրեր անցան, նրանք դարձեալ վերադարձան քարայրը ինչ-որ բանի համար: Տեսան ինձ ու զարմացան, հարցրին, թէ ինչպէս ապրեցի առանց կերակրի ու խմելու: Ես նրանց ցոյց տուեցի զրքերը, որ կարդացել էի ու ասացի. «Այդ է իմ ուսելիքն ու խմելիքը, որ կերայ ու խմեցի այս օրերին»:

— Յովհաննէս Սարկաւազն ես,— զոչեց Փալիկը,— ինչ պատուի արժանացայ, որ սուրբն իր ուղով մտաւ իմ խեղճուկրակ արուեստանոցը:

Դեռ Տաթևի վանքում նա բազմացրել էր Յովհաննէս Սարկաւազի կանոնադիրքը, ճատերն ու մեկնութիւնները, եւ քարայրում փակուելու

պատմութիւնը դպրատան ամէն սան շարական-յանկերդի պէս բերանացի գիտէր, արտասանում, վերջացնում էր, եւ «ոչ միայն հացիւ,— աւելացնում, ամփոփում էր,— այլ նաեւ քանի»:

Առաջին պահին ահա թէ ինչն էր շնչուել Փալիկի մտապատկերից: Եւրական-յանկերդը, է՛, յիշում էր, պարզապէս սրբի այցելութիւնն էր անսպասելի: Զարմանալի է...: Յովհաննէս Սարկաւազը զրքի էջերից պոկուել, իր ոտքով եկել, քաղմել է Փալիկի բազկաթոռին, քարեկամի ձեռք է մեկնում իրեն, ինչպէս հաւատարմ հաւատարի. մի հարցնող լինի՝ նշանաւոր ու երեւելի վարդապետն ուր, հասարակ գրիչն ուր: Եւ գրիչը չի դնում սրբի դուռը, սուրբն է գալիս: Առանց հրաւերի ներս մտաւ քաւական չի, մի երկնչիւր, զաւակս, ասաց, ճշմարիտ ճամբով ես ընթանում, յետոյ ձեռքը զրեց Փալիկի զլիւին, ես գտայ իմ ծառային, աւելացրեց, անուշահոտ իւղով օծեցի նրան:

Մտան Փալիկն է, սրբի ձայնն ականջում է: Տեսիլքից քօտեպնդում՝ Փալիկը թափառեց կարգացած զրքերի յորձանուտում, մէկ-մէկ դուռն քաշեց անցած դէպքերն ու դէմքերը, կենդանացրեց: Առաջ թէ տառանում էր, չէր ուզում մինչեւ վերջ հաւատալ, հիմա աղօթքանով սնուելով հաւատաց, որ անցեալում, ուրեմն, պատահել է, մի կին երեսուն տարի առանց հաց ու ջրի, միայնակ ապրել է քարանձաւում:

— Դժուար բան չի,— ասաց նա,— երբ հաւատը կատարեալ է, սար կը շարժի: Փալիկն ուզենայ, երեսուն չէ, հազար տարի ուտելիքի ծոմ կը պահի:

— Ոչ միայն հացիւ,— կրկնեց ծանօթ յանկերդը:

Արուեստանոցի պատերը նրա հայեացքի դէմ կոշտացան, քարերը ելուտաւորուեցին, ծուռումուռ կախուեցին չորս կողմից, եւ կացարան-գրչատունն աստիճանաբար վերածուեց կոշտակոպիտ քարայրի: Բնական է ու ժայռեղէն, եւ Փալիկը, թէկուզ քաղաքի կենտրոնում, անյիշելի նախնիների նման քարանձաւաբնակ է. աշխարհից ու քաղաքակրթութիւնից կտրուել է, առանց հող ու ջրի, քանի տարի է, ապրում է, միայնութեան շաքաթների ու ամիսների թիւը կորցրել է... երեք տարի է անցել, երեսուն՝, հարի՛ւր: Ամէն օր աղօթքանի լոյսով լուացւում է, մարմնական քաղց չի զգում բոլորովին եւ զարմանում է միւս մարդկանց վրայ, ովքեր իրենից անսահման հեռու, միաժամանակ, իր շուրջը բնակւում են, եւ մի պատառ հաց ու ջրի համար, պատահում է, իրար միտ են կրծում, յօշոտում, սպանում, առեւանգում, թալանում են: Փալիկի քարանձաւից դուրս՝ արտաքին աշխարհում հացի մշտական թանկութեան սարափ է ու սով, պատերազմներն ու աւերները յաջորդում են միմեանց, եւ ցերեկը հիւսած քաղաքակրթութեան գորգը գիշերը քանդւում է: Մարդիկ հիւսում են, մարդիկ էլ քանդում:

Եւ ամէն սկզբի մէջ վերջն է, եւ վերջի մէջ սկիզբը, որովհետեւ արեւադալին յաջորդում է մայրամուտը, ցերեկուան՝ գիշերը, ծննդին՝ մահը: Փալիկը մոտով տեղափոխեց բառերը, մայրամուտին, ասաց, յաջորդում է արեւադալը, գիշերին՝ ցերեկը, մահուանը՝ ծնունդը: Բառերը փոխեցին տեղերը, միտքը նոյնը մնաց, մարդկանց ուղեկցող նոյն կառոյցն էր՝ հացի թանկութեան սարսափի եւ դրան յաջորդելիք պատերազմի, համատարած սովի փոյտակներում:

— Ջարդեցեք, փշրեցեք,— ասաց Փալիկը,— մէկ է, յաջորդ օրը նորից կառուցելու էք:

Առանց կերակրի Յովհաննէս Սարկաւագին կամ անծանօթ կնոջը չին փակել քարայրում, փակուողն ինքն է՝ հաւատի լոյսով սնուել-օծուելիս՝ գիտակցաբար ծածկեց փոքրիկ արուեստանոցի դուռն ու լուսամուտը: Իր միջով ընթանալով կը հասնի մաքրութեան ու քարութեան քարծուներին, կը յաղթահարի հացի թանկութեան եւ ուրեմն՝ պատերազմների, աւերի սարսափելի ծանրութիւնը ոչ թէ ամբողջ մարդկութեան (դա մի հոգու, մի Փալիկ գրչի գործ չի), այլ իր ուսերի վրայից: Նա գիտակցաբար փակեց զրչատան դուռն ու լուսամուտը, վարդապետը գիտակարար թաքնուեց քարայրում, անծանօթ կինը գիտակցաբար՝ երեսուն տարի առանց հաց ու ջրի ճգնաւորեց, որպէսզի հաստատեն բնական հաւատի կատարեալ թափառութիւնը մարդկային շինծու իշխանութիւնների, բաժան-բաժան ու թշնամական պետութիւնների, նաեւ հազար ու մի արատների՝ ընչաքաղցութեան, փառասիրութեան, պոռնկութեան, բամբասանքի, խարդաւանքի, սպանութեան, թալանի, խաբէութեան տիրապետութեան վրայ:

— Հաւատի լոյս լինենք,— Յովհաննէս Սարկաւագի խօսքին արձագանգեց Փալիկը,— հեռու մարդկային վարքութեան ռվիտանոսից, ուր արատները՝ անթիւ անհամար գիշատիչ ձկներ, վիտում են չորսբոլորը:

Նրանք՝ եւ Յովհաննէս վարդապետը, եւ անծանօթ կինը, եւ Փալիկ գրչի, երանութեան բարձրումում էին, եւ չափազանց մօտ էին իրար, եւ վարագործած կամ դիմակի տակ թաքցրած զաղտնիք չունէին միմեանցից, բաց էին ու հոգով մերկ՝ յար եւ նման շրջապատի թափանցիկ անգործութեանն ու առարկաներին՝ համաձայն գրուածքի, թէ՛ «նմանապէս եւ իմանալի լոյսն զայն է. գիտար անգիտութեան հայածէ, զտրտմութիւն մեղաց փարատէ, զթշնամին, զսատանայ եւ զչարս փախուցանէ, գիմաստունս եւ զառաքինին ի գործս յորդորէ, զբարին եւ զչարս որոշէ, զբարեկամս՝ հրեշտակս եւ զթշնամիս՝ սատանայ ցուցանէ, զերկնային եւ զերկրային միտս մարդկան առհասարակ լուսաւորէ, ըստ չափի ու կարողութեան բաշխէ որպէս ի կեանս յայսմիկ եւ ի հանդերձեալն առաւել, զի կարիցեմք տանել»:

Աղօթրանի ներգործութեամբ եւ երանութեան բարձունքի հարեւանութեամբ իւրաքանչիւր ծառութեւի, քարածայր ու մամուռ, բանական մարդ արարած Փալիկի աչքին երեւացին բնական գոյն ու կշռոյթի մէջ, անըստուեր ու անպաճոյճ:

— Դու իմ այցելուն ես,— ասաց երանութեան բարձունքը,— քեզ կը սնեմ ու կը փայփայեմ, ինչպէս Ադամին՝ դրախտը, որ ի ժամուն ինձ պըտուող տաս: Միայն թէ երկրային բաներից նախապէս հրաժարուելու ես:

— Տունուտեղս թողեցի,— ասաց Փալիկը,— նշանածս սպասման փականքի տակ մնաց: Առեւանգուած զրքերը գտնելու համար հանդիպած չէն ու քաղաք չափրիցի:

— Բիշ է,— առարկեց բարձունքը,— էլի բաներ կան քեզից հեռացնելու:

Մարդկանց երկրից հեռու այդ վայրում, հազար ասպարէզ հեռուից, Փալիկը կը կարգայ դիմաշնի հոգին, ասես մագաղաթեայ գիրք է առջեւում, եւ արեւագալն անդրադարձել է ամէն էջին դաջուած բոլորագիր մեսրոպատառը: Կարդաց, եւ ընթերցանութիւնը նրան յուշեց, որ Յովհաննէս

նէս Սարկաւագի զէմքին բեղ ու մօրուք չեն ծլել երբեւէ, այտերը, կրզակն ու վիզը ածելու երես չեն տեսել, սուրբը մանկադէմ է, եւ, չնայած պատկառելի տարիքին, մանկադէմ է նաեւ ճգնաւորութիւն, ստիկները չեն փնտրել բոլորակ, չեն թրթռացել տղամարդու մատների կոշտակոտ հպումից, չեն լցունել մայրական կաթով: Վարդապետը կորցրել է առնականութիւնը, կինը՝ կանացիութիւնը: Ահա թէ ինչից է հրաժարուելու Փալիկը երանութեան մէջ բնակուելիս, ահա թէ ինչ է ակնարկում բարձունքը՝ «էլի բաներ կան հեռացնելու»՝ ասաց: Ինքն, ուրեմն, կորցնելու է առնականութիւնը, ինչ է, թէ բարոյականութեան ու մաքրութեան բարձունքի բնակիչ է: Ինչպէս Յովհաննէս վարդապետը, ինչպէս ճգնաւորութիւն, ինչպէս Ազամը զրախտում: Փալիկն, ախր, այդ թիկնաւորը չի՝ Տօ, որքան էլ նրանք սրբանան, չեն գայթակղի մաքրակենցաղ վարքութարժեքի: Նա մօրէ ողջ-առողջ է ծնուել, առողջ հոգին առողջ մարմնում է: Տօ, Ազամը ճիշտ վարուեց, որ կերաւ արգելուած խնձորը: Արտաքսուեց զրախտից, բայց փոխարէնը կնոջը ճանաչելու զրախտն ընկաւ, իսկ սրանք՝ այս սրբերը, դալիս-ասում են՝

— Ես գիտապարար հրաժարուեցի կնոջից, — ասաց Յովհաննէս Սարկաւագը:

— Ես գիտապարար հրաժարուեցի տղամարդուց, — ասաց կինը:

— Երկրային բաներից ազատուելը ձեր գործն է, — ասաց Փալիկը, — ես մի տուն լիքը երեխայ եմ ունենալու:

Նրա նշանածին՝ Արծուիկի պատկերը, շնահեղձ անելու չափ, ծիաց աչքերի առաջ՝ Փալիկի զէմքը կասկարմիր տաքացաւ՝ ծխի բարձրացող քուլաների հանդիպելիս: Արծուիկը, կենդանի ու թրթռուն, գայարուելով բարձրաձայն, զարնան ամպ դարձաւ զլիսավերելում, հասունացաւ՝ երեխաների անձրեւ կը թափի երկնքից, եւ Փալիկը չի հասցնի անթիւ-անհամար ուստրերին ու զուտրերին անուանակոչել ու մկրտել, բաւական է, կ'ափ Արծուիկին, տանը տեղ ու դադար չմնաց:

— Իմ գործը չի, — կ'առարկի Արծուիկը, — մայրանալու ծնունցի:

Եւ կուրծք ու կունք, տաք ու ձիգ, կը շորորան տնային հասարակ խալթի տակ՝ Փալիկին խենթացնելու աստիճան: Կը մոռանայ օր ու արեւ, ինքը նոյնպիսի ծովի ու բոց, կնոջ մարմնի ծլարձակող պարտէզում կը գտնի օր ու արեւը, ականջը կը հպի կնոջ պիրկ ձգուած փորին, կը լսի հասունացող հերթական զաւակի շնչառութիւնը: Իսկ սա՝ այս անձանօթ ճգնաւորութիւն, երեսուն տարի ճգնաւորելով՝ սմբել-ցամաքել է, տղամարդ ճանաչի-չճանաչի, մէկ է, չի մայրանալու: Արծուիկն իր՝ Փալիկի հարսնացուն է, սա՛ Քրիստոսի հարս է եւ վերջ:

— Իմ կորուստն ու յաջողութիւնը երկրի վրայ են, — ասաց Փալիկը, — կը վերադառնամ հէնց ազօթրանը վերջանայ:

Շուտ եկաւ, որ հեռանայ երանութեան բարձունքից:

— Ուզեն-չուզեն, մեզ հետ ես ապրելու, — յետեւից ձայնից վարդապետը, — երկրի վրայ թէ երկնքում, դու ճշմարիտ ճամբով ես ընթանում, եւ դա քեզ, ուշ թէ շուտ, մեզ մօտ է բերելու:

Փալիկը չարտասխանեց: Մարդկային այդ տեսակը եւ հարազատ է իրեն, եւ օտար: Ինքն էլ այդ սրբերի նման գիշեր ու զօր առանց հաց ու ջրի փակուել էր Շնոհերքի արուեստանոցում, գրել-արտագրելով, կարկա-

տեղ-կողմերով հոգու վարձ էր տուել հին ու նոր մատենաներին: Յանկար-ծակի յայտնուած Արծուիկը տակնուվրայ արեց իրեն. այնքան որոշակի ու կենդանի էր, որ Փալիկը տեսաւ նրա բարակ ու շաղոտ ոտքերի հետքերը արուեստանոցի յատակին, եւ, միաժամանակ, միւսների՝ Յովհաննէս Սարկաւազի, ճգնաւորուհու եւ քարձուքի աստիճանաքար աղօտանալ-անէանալը:

— Կիներ, իրական ու հողարոյր, իր ծոցի ծլարձակող այդով զայթակողեց տղամարդուն, վար բերեց երկնքից,— ասաց Փալիկը, երբ Արծուիկի տեսիլքն էլ ցնդեց, անկացաւ,— այդ նա դրախտից արտաքսեց Ադամին:

Այդպէս էր, Արծուիկն անգիտակցաբար կրկնում էր այն, ինչ արել էր Նուան հեռաւոր նախնադարում. Ադամի նահանջի պատճառն ու ուղեկիցն էր: Դրախտից վտարել տուեց, չհանգստացաւ, եւ նրան բռնում կը հաւաքեմ, ասաց, մէկ որ նահանջել է, էլի կը նահանջի: Փալիկը բարձր դրեց տղամարդու գլխատակին, զայթակողեց տաք ծոց ու շնորհով, եւ մի գիշեր, երբ Ադամը հանգիստ քնած էր, կինն աներեւոյթ ունեւորով դուրս քաշեց նրա աստամբ: Ադամը ցաւ չզգաց առաջին աստամբ կորստից, ոչինչ, ասաց, մնացած երեսունմէկն առողջ են: Հերթը հասաւ երկրորդին, երրորդին, չորրորդին, եւ երբ բոլորը նոյն կերպ, առանց ցաւ ու կսկիծ պատճառելու, տարին տարուայ վրայ մէկ-մէկ հանեց, վերջացրեց, տղամարդն այլեւս տղամարդ չէր, կնոջ հետ ճօճուում էր մի օրօրոցում, թու մեծացրեց, տակաշոր փոխեց, լուացք արաւ, եւ նրա գոգնոցն ու գլխաշորը, թէեւ տղամարդկային հեռաւոր արժանապատուութիւնից ամաչելով չկապեց, բայց ճիշտ եւ ճիշտ Ադամի վրայով էին: «Հնարաւոր էր,— քրթմնջաց Ադամը,— քիչ է մնում գոգնոց կապեմ եւ գլխաշոր կրեմ»: Նուան խորհրդաւոր ժպտաց, ճակատագիր է, ասաց, խուսափել չի լինի: Եւ երբ բանն այդպէս եղաւ, Ադամը հասցրեց մահուան անկողնում խորհուրդ տալ որդիներին.

— Մի շտապեցէք,— ասաց,— ձեր կանանց գլխներիդ նստեցնել, ներանք, միեւնոյն է, նստելու են:

Արեւազայի թէլադրանքին ունկնդիր, Փալիկ զրիչն ասաց այն, ինչը շուրջը ուրիշ մարդ եւ առհասարակ մարդկութիւն չլինելու պատճառով երբեք չէր անցել Ադամի մոքով:

— Կիներն ու մարդկութեան պարտադրած սովորութիւնները ինչ-որ տեղ նոյն գիշատիչներն են, մարդկութիւնը փորձում է իր նման դարձնել անհատականութեանը, կինը՝ տղամարդուն:

Դեռ չամուսնացած, կին ու երեխայ չճանաչած՝ Փալիկի շրթերին այդ խօսքը հնչեց համոզուածութեամբ՝ կարգացած-տեսածից պատառ-պատառ հաւաքել-մեկնաբանելով:

Աղօթրանի աւարտուելու հետ լուսաշրով քի տաշտը դուրս տարաւ արեւատանոցից, դատարկեց: Փորձեց շարունակել դրասեղանի կիսատ մատենանը, չկարողացաւ: Միտքը գրեկիցից հեռու էր, դրա համար էլ տառերը ծոյլ, ծեր ու չկամ, նախկինի պէս չենթարկուեցին իրենց զօրավարին:

— Գնամ,— ասաց մարդկանց երկրի հոգս ու առօրեայում կորչել-ման-բանալու չափ ցրուելու:

Աննպատակ քայլից Արհեստաւորաց թաղամասի նեղլիկ, ծուռուռու նրբանցքներով: Մէկ էր, թէ ուր են տանում ոտքերը: Յոգնեցնող շրջապը-

տոյտի մէջ փողոցներէ ամայութիւնը եւ փակ արհեստանոցներէ լռութիւնը դարձացրին Փալիկին: Ուրիշ ժամանակ Անիի բոլոր զուկակաները լիքն էին տալիք-առնելիքի, գործի ու գործատան շտապող մարդկանցով: Ինչ-ինչ, Սանասարի դարբնոցը հօ բաց էր, Քուրայի ծուխը հօ բռնում էր երկինքը, ծեծուող երկաթի հառաչանքը խառնում էր մուրճ ու զնդանի բուլթ ու խուլ աղմուկին...: Ոչ ծուխ կայ, ոչ աղմուկը, դուռը կուղպ է: Ու՛ր է Սանասար ծերունին, մկանները, երկաթ տաշող յեսանաքար, հինգ դաւակի հետ քնո՞ւմ անցաւ, ինչ է: Փալիկը չլիչեց դէպք, երբ աղօթրանից յետոյ փակ լինէր դարբնոցը...: Բովանդակ Անին քնո՞ւմ անցաւ, ինչ է, կից դերձակա-նոցը փակ է, ոսկերչատունը՝ փակ, կտորեղէնի կուղպակը՝ փակ: Ամէն տեսակ ծուխ ու համքարութիւն դեռ ոչինչ, տալիք-առնողի, եկող-գնացողի պակասից կարող են չբացուել, բայց որ քաղաքում թուրք-սելջուկ մուծուր ու էւան չկան, դարմանալի է: Կը գան, մեղաւոր ու անմեղ չեն հարցնի, կաւացեխի պէս կը կպչեն մարդկանց, կը վախեցնեն բանտ ու գերութեամբ եւ մինչեւ իրենց բաժինը դրամով կամ բնամթերք-խարաջով չվախցնեն, խեղճի օձիքը բաց չեն թողնի: Որտե՞ղ են օձիքակալ մուծուրն ու էւանը՝ արաբական նժոյգ հեծած, նաեւ հետիտն, գօտկատեղն ի վար կեռ թուր, ձեռքին ձիու մագից հիւսուած մտրակ, որով, երբ, պատահում է, գանակոծուող չկայ, մշտապէս գործածելու սովորոյթով շրթնկաշնում է վարագի կաշուից կարուած երկարաճիտ կօշիկներին: Քաղաքը փակ է, ամալի ու փակ: Փալիկը երեք անգամ պտտուեց թաղամասում եւ ձեռքը զրպանը չտարաւ՝ մանրագրամ հանի, կպչուն մտրակավարին տայ, զլուխն ազատի: Երկիրը կաշառակերութեան ցանցով պատած թուրք-սելջուկն ի՞նչ է, շատ է ճարպակալել, որ այս արեւոտ ու իւղալի օրը բաց թողնի ձեռքից:

Այս միտքը դուրս չի գալիս Փալիկի գլխից. ենթագիտակցօրէն շօշա-փեց զրպանը, չէ, մանրագրամը հետն է՝ վաղ առաւօտից հէնց այնպէս, ոչ մէկին նեղութիւն չտալով իր համար քայելու խարաջն է: Սեփական փողը թէ մօտը մնաց, գտածուրիկ է, այդ չափով կը հարստանայ: Տասը օր այդ անհեթեթ, անիմաստ, նուաստացնող հարկը թէ չտայ, մի ամբողջ դահեկան կ'ունենայ, դա արդէն դրամ է, գրողը տանի, երեք օրուայ ապ-րուստի միջոց: Տասը օրից երեքը հէնց այնպէս, ոչ մի օրէնքով չվաւերաց-ուած պարտամուրհակով խլում է թուրք ոստիկանը: Առաւօտից մինչեւ ուշ գիշեր քանի՞ անցնող-գարձողի հետ է գործ բռնում, քսան-երեսուն դա-հեկան է քամում, իսկ դա հարստութիւն է: Փալիկն այդքան դրամ չի ու-նեցել երթել, չհաշուած այն միակ օրը, երբ Տիգրան Հոնենցի օգնու-թեամբ արուեստանոց գնեց Անիում: Ուրիշ ոչ մի անգամ զրպանում այդ-քան գումար չի գրնգացել, իսկ սա, ուրեմն, այս էւան կոչուածը, իբրեւ ոտքի խարաջ, հէնց այնպէս հաւաքում է: Ամէն ինչ այս քաղաքում, պարզուած է, հնարաւոր է ու պատկերացնելի՝ էլ փակ խանապար, կուղ-պակ, համքարութիւն ու շուկայ, էլ իջեւանատուն ու բաղանիք, բայց որ սելջուկ ոստիկանը հրաժարուի քսան-երեսուն դահեկանից, այդ մէկն անհնարին է ու անհասկանալի:

ԱՐՄԷՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ԵՈՒՐԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Բանաստեղծ, մանկագիր ու թարգմանիչ Եուրի Սահակեան ծնած է 22 Յուլիս 1937ին, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտ շրջանի Չալու գիւղը։ Փոքր հասակին կը զրկուի իր ծնողներէն։ 1966ին կ'աւարտէ Երևանի համալսարանի բանասիրական ճիւղը։ 1967ի կը պաշտօնա-

վարէ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթին մէջ՝ իրրեւ գրական աշխատող։ Այնուհետեւ իր մասնագիտական ուսումը կը շարունակէ Մոսկուայի մէջ եւ կ'աւարտէ ՍՍՀՄ գրողներու միութեան անընթերցողական քարճրագոյն դասընթացը։ 1974-75 տարիներուն, Ե. Սահակեան դարձեալ կը պաշտօնավարէ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթին մէջ՝ իրրեւ բաժնի վարիչ, իսկ այնուհետեւ պատասխանատու խմբագրի պաշտօններ կը ստանձնէ Գրքասէրներու ընկերութեան եւ «Սովետական գրող» հրատարակչատան մէջ։

Ե. Սահակեան հրատարակած է անկէ քան ըստ հասար բանաստեղծութիւններ, որոնց նշանաւորներն են՝ «Իմ մեղեդի», «Երբ դու գալիս ես», «Ախլարակիւ», ինչպէս նաեւ մանուկներու համար յօրինուած հեքիաթներու զբօղկներ։ Իր բանաստեղծութիւններէն ոմանք թարգմանուած են ռուսերէնի եւ այլ լեզուներու, իսկ ինք հայերէնի թարգմանած է ուկրաինացի, ռուս եւ այլ ազգի բանաստեղծներու փոթւածներն ու չափածոյ եւ արձակ մանկական գործերը։

Հաւիտէ թափշլէ կաշաշ թաշուրմ՝
 Ոչինչ չբռնէ իր երգին բաշի։
 Շա այս աշխարհից բաշ չի պահածջում,
 Կը Գորշուշի է շա Կոշլուսաթաշի։
 Կիտրիի, բոսաշաշ աշ Մարմնի Կիտ
 Կնցջում էն բոշի թորիւշերը Կաւծ,
 Շա եղբայրն է Խ'հարհար, յնջող,
 Խ'հարհար շաշ Խ'հարհար աշ երկշի Կաւծ։

Հորի Կաւսիյաւ

Ե. ՍԱՀԱԿԵԱՆ**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ**

★ ★ ★

Հաւրը թափնուել կանաչ թաւոտում՝
 Ոչինչ չգիտի իր երգից բացի:
 Նա այս աշխարհից բան չի պահանջում,
 Նա ցնծութիւնն է զով լուսաբացի:
 Փոքրիկ, բռնաչափ այդ մարմնի միջով
 Անցնում են գոյի թրթիւնները տալ,
 Նա եղբայրն է իր՝ կարօտող, շնչող,
 Իմ սիրոյ չափ մեծ այս երկնքի տակ:

★ ★ ★

Ամենամեծ լերան գլխին
 Ամենասու ամպն է կախում:

Ամենամեծ լերան կրծքին
 Ամենաշէկ շանթն է բախում:

Ամենամեծ լերան ուսին
 Յոյսն է ծփում ամենագօր,

Որ գիշերուայ անտակ փոսից
 Կը ծնուի օրն ամենամոր...

86 թ.

★ ★ ★

Սուտասան Բանի՛ սերունդներ անցան...

Ես կասկածում եմ հիմա բառերին:

Գուցէ եղբայրը եղբայր չէ արդէն,
 Ունի այլ իմաստ,
 Եւ հարագատը հարագատ չէ էլ,
 Եւ ազատութեան նշոյլ իսկ չկայ
 Ծեծուած ու մաշուած այդ թշուառ բառում,
 Եւ սէրը սէր չէ
 Կամ սէր է իրօք, երբ մարդիկ ահա
 Կարող են սիրով խօսել մէկմէկու...
 Եւ ասպետութիւն բառը գեղեցիկ
 Եռասպելական մի հաւք է՝ անյայտ,
 Կամ էլ հեքիաթ է հին ու հանելի
 Միջնադարեան մեր մախնիների հետ կապեր չորոնող...
 Եւ էլի բառեր,
 Որոնց հետ ապրել ու մեծացել ենք՝
 Զխորանալով նրանց մախնաստեղծ իմաստների մէջ:

Հիմա մոռանամք պիտի անպայման
 Տարիներ ի վեր սերտած մեր լեզուն,
 Եւ նորածնի մման աչք բացող
 Սկսեմք Ա-ից.
 Աստուած, Արեգա՛կ, Առաւօ՛տ, Արդա՛ր...

89 Թ. աշուն

ՍՈՒՄԳԱՅԻԹ

Մեր հին վշտերին նոր վիշտ գումարեց
 Այս Բաղա՛բը լոկ վերջերս յառնած,
 Որ իր խորքերում փառեց-փայփայեց
 Ամենաստոր գծերն իր մախնեաց:

Պահեց՝ վերստին ի ցոյց հանելով
Նոյն մարդակերի էութիւնը սեւ,
Որ տասնհինգի փորձն ուսանելով՝
Եկել եւ ութսունութին է հասել...

Օ՛ր, ինչպէս էին գեղգեղում մրամբ
Հրեշտակներից փախցրած երգեր՝
Թափուն այն յայտով, որ կը մոռանամ
Քաղաքներ, գիւղեր, անուններ, դէպքեր...

Գուցէ իսկապէս անհոգ էիմք շատ
Կամ անյուսօրէն միամիտ էիմք,
Որ երբ սպասուած առիթը հասաւ՝
Նրանք անելիքն իրենց գիտէին...

Եւ մենք մորից-մոր տուժող ենք ահա
Գաղափարներից գեղեցկապատիր,
Ճամբէքից, որոնք չհասցրին, աւա՛ղ,
Մեր ժողովրդին մի արդար դատի...

Դէ հերի՛՛ք եղաւ, ժամանակն է արդ
Ապաւինելու սեփական բազկին
Եւ Անդրանիկի սուրբ անաղարտ
Պարգելու յամուն երկրի ու ազգի՝

Ձէ որ անբնդհատ մոյն դասն են տալիս
Եկող ու անցող դարերն անխռով.
– Փրկե՛՛լ է՛ք ուզում՝ էլ ո՛ւր է՛ք լալիս:
Ապրե՛՛լ է՛ք ուզում՝ ապրե՛՛ք կռուելո՛ւմ:

88 Թ. գարուն

ՊԱՏՐԱՍՏ ԵՂԻՐ ՂԱՐԷ ՂԱՐ

Յոյց տուէ՛ք, խնդրեմ, ինձ մի պետութիւն,
Անուանէ՛ք, խնդրեմ, ժողովուրդը այն,
Որ իր այսօրը եւ օրը գալիք
Յանձնի օտարի ռդարմութեանը:
Ձկա՛՛յ, աշղպիսի պետութիւն չկայ:
Ձկա՛՛յ, չի եղել մմամ ժողովուրդ:

Յոյց տուէ՛ք, խնդրեմ, ինձ մի պետութիւն,
 Անուանէ՛ք, խնդրեմ, ժողովուրդը այն,
 Որ անկախութեանն իր գերադասի
 Օտարի կրունկն ու հրամանը:
 Զկա՛յ, այդպիսի պետութիւն չկայ:
 Զկա՛յ, չի եղել նման ժողովուրդ:

Յոյց տուէ՛ք, խնդրեմ, ինձ մի պետութիւն,
 Անուանէ՛ք, խնդրեմ, ժողովուրդը այն,
 Որ իր սեփական շահն անտեսելով՝
 Սատարի օտար արդարութեանը:
 Զկա՛յ, այդպիսի պետութիւն չկայ:
 Զկա՛յ, չի եղել նման ժողովուրդ...

Ուրեմն դու ես բո յոյսը միակ,
 Ուրեմն դու ես զինուորը հողիդ,
 Ուրեմն պատրաստ եղիր դարձ դար
 Կտրել ոտքը քեզ ռոմաեաբողի:

90 Թ. ձմեռ

ՄԵՂԱՒՈՐ ՈՒ ԽԱԲՈՒԱԾ ԵՄ ԵՍ

Մեղաւոր եմ ես ակամայ,
 Որ հեռու եմ մեր լեռներից:
 Մեղաւոր եմ, որ հեռու եմ
 Մեր գետերից, անտառներից:

Մեղաւոր եմ, որ դստրիկիս
 Հովանի չէ սարը Մուս:
 Մեղաւոր եմ, որ Թարթառը
 Որդուս տատմէրը չղառաս:

Մեղաւոր եմ, որ հայրական
 Տունս ինձ հետ վէճ է բացել:
 Մեղաւոր եմ, որ հարազատ
 Օջախի մօտ չեմ ծերացել...

Մեղաւոր եմ, որ հեռու եմ
 Ծուղակներից մեր թշնամու:

Մեղաւոր եմ, որ մերոնց մէջ
Թշնամիս ինձ չի նշմարում...

Մեղաւոր եմ, որ ոտքերս
Կարօտ են մեր հանդ ու փոշուն,
Որ այս անեղ գօտեմարտում
Ես ոչինչ էլ չեմ որոշում:

Մեղաւոր եմ, որ գիւղում չեմ,
Նեցուկ չեմ հին հարեանիս,
Որ մա առանց իմ օգնութեան
Նոյնն է, ինչ որ մի թեւանիմ...

Մեղաւոր եմ, որ բար չեմ ես,
Գնդակ չեմ ես չարի դիմաց:
Մեղաւոր եմ, որ տիրոջն եմ
Ապաւինել միմչեւ հիմա:

Մեղաւոր եմ, որ ես այնտեղ
Պահակ չեմ կամ էլ՝ ժամապահ,
Որ չեմ փակում ոսոխի դէմ
Ոչ մի կածան ու նամապարհ...

Մեղաւոր եմ, որ չեմ նստում
Խարոյկների մօտ հրաքորք:
Մեղաւոր եմ, որ ինձ գիւնտըր
Ձի համարում այնտեղ ոչ ոք...

Մեղաւոր ու խաբուած եմ ես
Վերից, վարից, ձախից, աջից...
Ներքի ինձ, իմ Արցախ աշխարհ
Եւ արժանի արա հաշիդ:

90 Թ. ամառ

ԵՌԻՐԻ ՍԱՀԱԿԵԱՆ

ՄԻԱՅՆ ԱՐԵԻՇ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՐԺԷՐ ՀԱՋԱՐ ԱՆԳԱՍ

ՆՈՐԻՑ ՈՒ ՆՈՐԻՑ ԾՆՈՒԵԼ

■ **ԵՌԻՐԻ ԽԱՋԱՏՐԵԱՆ.** — Մեր գրողը սկսեմք, թերեւս, յիշողութեամբ՝ ամցեալից: Դուք հայ նկարչութեան ասպարէզը մըտաւ նշանաւոր «Ինք»-ի ցուցահանդէսով, 1982ին, թէպէտեւ նկարել սկսել էք շատ աւելի վաղ:

ՅՕականների Ձեր սերունդը փաստօրէն վերստեղծեց հայ նորագոյն նկարչութեան դիմագիծը, միանգամայն մօր շունչ, ոգի ու թարմութիւն բերելով: Կարծում եմ, մի փոքր պատմութիւնը կամ մի պատառ յիշողութիւնը Ձեզ համար էլ հաճելի կը լինէր:

□ **ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ.** — Ասեմ, որ մինչեւ «Հինգ»-ի ցուցահանդէսը, եւ «Երիտասարդ տաղանդներ» հոլովումով դերասանուհի Մետաքսեայ Սիմոնեանի, բանաստեղծ Պարոյր Սեւակի, երգահան Էդգար Յովհաննէսեանի, կինոբեմադրիչ Եւրի Երզնկեանի հետ կայի արուեստի ասպարէզում:



«Հինգ»-ի ցուցահանդէսը համընկաւ աւելի բարենպաստ ժամանակների հետ. անհատի պաշտամունքը փչրւում էր, փչրւում էին մարդկանց հոգու կապանքները, զարնան ծիլերի պէս անհատներն ու անհատականութիւնները զլուխ էին բարձրացնում: Եւ մենք որոշեցինք օգտուել մեզ բաժին ընկած ազատութիւնից: Ամէն օր իրար հետ — իրար կողքի լինելով, հինգ միանգամայն տարբեր անձնաորութիւններ կազմեցին մի խումբ՝ Միսաս Աւետիսեան, Լաւինիա Բաժրեուկ-Մեյիքեան, Արփենիկ Ղափանցեան, Հենրիկ Սիրակեան եւ Ալեքսանդր Գրիգորեան:

Եթէ մինչ այդ մենք, ամէն մէկս, ցուցադրում էինք մէկ կամ երկու նկար հարիւրների շարքում, ապա այստեղ մենք ներկայացանք մեր ամբողջ հասակով եւ, բնականաբար, շահեկանօրէն: Մամուլը, ռադիոն, հեռուստացոյցը, կինոն զբաղուած էին մեզնով: Էսպէս է մեր ժողովուրդը, եթէ մէկը լռում է, բոլորը ջուրը բերանն են առնում, եթէ մէկը խօսում է, բոլորը զոռում են:

Մենք՝ հինգս, եւ յատկապէս ես, ուզում էինք 10-20 տարի յետոյ նայն խմբով, բնականաբար նոր ստեղծագործութիւններով, ցուցահանդէս կազմակերպել: Ձեզաւ: Ափսոսում եմ, որ չենք արել: Պատճառներից մէկը մեր տաղանդաւոր ընկերոջ՝ Մինասի անժամանակ մահն էր:

Ինձ համար, իբրեւ մասնակիցներից մէկի, շատ հաճելի է, որ այդ ցուցահանդէսը դարձաւ յիշարժան երեւոյթ: Ինչ խօսք, մեծ դեր ունեցաւ ժամանակը...: Ուրեմն՝ իսկապէս արուեստի համար յինում են նպաստաւոր ու աննպաստ ժամանակներ ու աստեղային ժամեր...

■ ԵՈՒ. Խ. . — Ձեր ուսուցիչներից ու՛մ է՞ յիշում: Հիմա, երբ ետ է՞ք նայում, ու՛մ է՞ յիշում Ձեր ճամնապարհին, ո՛վ է ամենամեծ հետքը թողել Ձեր կեանքում...

□ ԱԼ. Գ. . — Ուսուցիչներ ասածը շատ քաղմանշանակ է: Շատերն են դասաւանդել իմ սովորած հաստատութիւններում, եւ ես շնորհակալութեամբ եմ յիշում նրանց, բայց սովորեցրել են քչերը, շատերն էլ չեն սովորեցրել, բայց ե՛ս եմ սովորել նրանցից:

Դեռ տաս տարեկան չկայի, երբ առաջին անգամ Երեւանի պատկերասրահում տեսայ Ռուբենի «Ալլեմի Երբը» կտաւը: Մի պահ այնպիսի զգացողութիւն ունեցայ, կարծես թէ հանդիպել էի իմ արիւնակցին, այնքան սրտամօտ էր տեսածս: Տարիներ յետոյ նմանատիպ զգացողութիւն ունեցայ Տիցիանի, Ռենուարի կտաւների առաջ: Էլ ինչպէ՞ս կարող էի չսովորել նրանցից:

Հետագայում իբրեւ նկարիչ ձեւաւորուել ու հասունացել եմ Մարտիրոս Սարեանի հետ անձամբ շփուելով:

Հայ եւ Հայաստանի ծնունդ լինելով, Հայաստանում ապրելով չէի կարող անհաղորդ մնալ մեր երկրի ոգուն, նրա գոյն ու ձեւին: Իմ նկարչական մտածողութեամբ ես միշտ կապուած եմ եղել բնորդին ու բնութեանը: Բնութիւնը միշտ էլ եղել եւ մնում է մեծագոյն Ուսուցչապետը:

■ ԵՈՒ. Խ. . — Ձեր նկարչութեան մէջ ինչ տեղ ունի Ձեր անձնական կեանքը, Ձեր կեցսագրութիւնը, Ձեր մանկութիւնը, Գիւմրին...: Գիտեմ, որ գիւմրիցի է՞ք:

□ ԱԼ. Գ. . — Ըստ իս, բոլոր արուեստագէտների ստեղծագործութեան հիմքում, ի վերջոյ, նրանց անձնական կեանքն ու կենսագրութիւնն է: Մարդ հօ չի՝ կարող փախչել ինքն իրենից: Աւելի՛ն. արուեստագէտի ամէն մի ստեղծագործութիւն նրա վկայագիրն է, նրա կարգիտգրամը... Իմ մանկութիւնը... Գիւմրին...



«Շամիրամ», 1985, գործ՝ Ալեքսանդր Գրիգորեանի:



«Ներկայիս սէր», 1988, գործ՝ Ալեքսանդր Գրիգորեանի:

Սեւ, քարէ տներ, շարան-շարան դարբնոցներ, փայլուն սանձերով ձիակառքերի շարան, իրիկնամուտին բոստաններից եկող դուղուկի սրտամաշ, ծորուն մեղեդի...: Արագածի փեշերին ապրող ժրջան մարդիկ, որ իրար դիմում էին հիմնականում ածական անուններով՝ դիպուկ, պատկերաւոր, արտայայտիչ... Փռնի Կարօ, Նոսրի Արշակ, Ֆայտոն Ալեք...: Գիւմրեցու հարսանիքը, նրա քեֆն ու ուրախութիւնը...: Եւ գիւմրեցու համարեա՛ւ ամենաթանկ բանը՝ թատրոնը: Դեռ երեխայ, նայել եմ Շիլլերի «Աագակները», «Աէր եւ խարդաւանք»ը, Բեռնոյ «Տասներկուերորդ գիշերը», «Մեծապատի մուրացկանները»...: Սրանք բացառիկ ներկայացումներ են եղել մեր թատրոնի պատմութեան մէջ, բայց ինձ համար սովորական ներկայացումներ չէին, այլ՝ ակադեմիա: Պակաս հետաքրքիր չէին նշանաւոր դերասան-արուեստագէտները՝ Արմէն Արմէնեան, Յոյակ Ամերիկեան, Լեւոն Զահրաբեան, ուրիշներ, որոնցից շատերի հետ շփուել եմ, իսկ մի քանիսին՝ նկարել:

Այս բոլորը, ի հարկէ, խոր հետք են թողել իմ կեանքում...

■ ԵՈՒ. Խ. — Դուք հրաշայի դիմանկարիչ էք: Արագ, թեթեւ, դիպուկ ձեռք ունէք: Ես Բանիցս մերկայ եմ եղել ձեր աշխատանքին եւ համոզուել եմ, որ բնորոյիմ պատկերելը ձեզ համար շատ դիւրին է: Ձեր մօտեցումը պատկերաւոր նկարին ու մանտիկական է: Դուք այսպէս ասած, «գեղեցկացնում» էք ձեր բնորոյներին: Յամենայնդեպս, դրանք մեծաւ մասամբ լուսաւոր, պայծառ, գեղեցիկ ու հմայիչ մարդիկ են: Իսկ դիմանկարի ժանրը ամենադժուար ժանրն է, որ մատչելի չէ ամէնքին:

Խնդրում եմ պատմէք Ձեր բնորոյների ու Ձեր դիմանկարների մասին:

□ ԱՆ. Գ. — Ենթահակալութիւն հաճոյախօսութեան համար: Ես շատ եմ սիրում նկարել մարդկանց: Նրանցից ամէն մէկը ինձ համար մի աշխարհ է, անյայտ մի աշխարհ, որ ես, երկրաբանի պէս, ամէն մի վրձնահարուածի հետ պեղում եմ: Սա մեծ բաւականութիւն է: Իսկ այն, որ ես ամէն բնորոյի մէջ փնտռում եմ գեղեցիկը, կարծում եմ օրինաւոր է, որովհետեւ դա պիտի լինի արուեստագէտի կոչումը:

Բայց եղել են նաեւ այսպիսի դէպքեր: Մի անգամ նկարում էի Յովհաննէս Թումանեանի դստեր՝ Աշխէն Թումանեանին: Ծերմակած մազերով, ութսունն անց պատկառելի տիկին էր... Դժգոհ մնաց: Յետոյ դանդաղաւորեց Մարտիրոս Սարեանին, թէ ես իբր ախտոսել եմ մի քիչ սեւ գոյնը եւ «այլանդակել եմ» իրեն: Վարպետը, որ մինչ այդ գիտել էր դիմանկարը եւ շնորհաւորել ինձ, ասելով՝ հանձնարեղ ես նկարել, այդ օրը ծիծաղեց ու իրեն յատուկ հումորով դիմեց Աշխէն Թումանեանին.

— Աշխէն ջան, — ասաց, — ջահել է, չգիտի, որ կնոջը նման չեն նկարել...

Ես յետոյ շատ յաճախ եմ յիշել այս պատմութիւնը:

Իմ խորին համոզմամբ դիմանկարի ժանրը ամէնից լաւ է արտայայտում ո՛չ միայն բնորոյին ու հեղինակին, այլեւ՝ նրանց կեանքի ժա-

մանակը: Մի պահ յիշեք Փայտմեան, եգիպտական, հռոմէական, ապա վենետիկեան, իսպանական ու ֆլամանդական գիմանկարների շարքերը: Դրանք այնքան արտայատիչ ու խօսուն են, որ, թուով է, քարացած ժամանակն է ձեր դիմաց: Եւ երբ երկար նայեք դրանց, փորձեք թափանցել նրանց էություն մէջ, նրանք ձեզ կը պատմեն այնպիսի թափուքուն, անձնական ու խորհրդաւոր գաղտնիքներ, որ ժամանակին թաքցրել են ո՛ր միայն ժամանակակիցներից, այլեւ՝ մերձաւորներից ու ամենամօտ մարդկանցից:

Հապա ուշադիր նայեք Մարտիրոս Սարեանի՝ 1915 թուականին նկարած «Ալեքսանդր Ծատուրեան» գիմանկարի աչքերին: Որքա՞ն թախիժ կայ այդ գեղեցիկ հայկական աչքերում, ի՞նչ ողբերգութիւն...

Կը ներէք, բայց ես մի քիչ շեղուեցի հարցից:

■ ԵՈՒ. Խ. . — Ձեր բնանկարները շատ բանաստեղծական են, մարդկային ու գրաւիչ: Դրանցում եւայ բնութեան բանաստեղծական պատկերները, հմայիչ դաշտանկարը համադրում են առտնիմ կեանքի, հայ կենցաղի, նոյնիսկ ազգային-տեղական-պատմական գունեւանգի հետ: Ինձ համար առաւել կարեւորը այն է, որ դրանք հայկական են: Ուրիշ ոչ մէկի գործերի հետ Ձեր բնանկարները չեն շփոթի, մանաւանդ՝ որ դուր շատ է՞ր նկարում դրսում, բնութեան մէջ, անմիջական տպաւորութեամբ:

□ ԱԼ. Գ. — Այն, որ ես նկարում եմ դրսում, բնութեան մէջ, անմիջական տպաւորութեամբ, ինձ տալիս է բնութիւնը լիովին զգալու հնարաւորութիւն: Բնութիւնը ես զգում եմ իմ ամբողջ էութեամբ՝ շնչելով բնութեան բոյրերն եւ ընկալելով նրա բոլոր թրթիռները, գոյներն ու երանգները: Սրանք գուցէ եւ աննկատ, գուցէ եւ անպիտակցօրէն գալիս ու լցւում են իմ մէջ: Դրանք են գուցէ ու ձեւ տալիս ստեղծուող պատկերին: Կէսօր նկարելու համար ես պէտք է չոգեմ, վարդ նկարելու համար ես պէտք է արբենամ նրա բոյրով: Ես պէտք է յուզուեմ, որ դիտողը յուզուի...

■ ԵՈՒ. Խ. . — Ձեր մեծադիր յօրինածքները, պատմական թեմաներով ձեր նկարները հետաքրքիր են ու ինքնապատշաճ, բայց ես կ'ուզեի առանձնացնել «Այծամարդն ու փերի» շարքը...

□ ԱԼ. Գ. — Իմ պատմական թեմաներով նկարները եւ իմ «Այծամարդն ու փերի» շարքը, որ ներշնչուած է գիցարանութիւնից, իրենց հիմքում նոյն նիւթը ունեն՝ մարդկային յարաբերութիւնների, կրքերի ու զգացումների բախումը: Եթէ պատմական թեմաներում աւելի իշխողը դրամատիկական կողմն է, ապա «Այծամարդն ու փերի» շարքում իշխողը աշխարհիկ կեանքի, սիրոյ ու վայելքի, բնութեան մէջ ազատ ապրելու մոտիւն է...: Ապրել այնպէս, որ ոչինչ չկաշկանդի մարդու «երկու օրուայ էջ կեանքը»: Թոյլ տուր մի քիչ փոխեմ Թումանեանի տողը:

■ ԵՈՒ. Խ. . — Այսօր երիտասարդները, մէկը Բո սղան՝ Արման Գրիգորեանը, որ անպայման շնորհալի մարդ է, վիճարկում

եմ արուեստի ազգային բնույթը: Կարծեմ թէ աշխարհից այլեւս վերացել եմ իտալական արուեստ, ֆրանսիական գրականութիւն եւ նման այլ հասկացութիւնները: Հիմա ամիմաստ է դպրոցական յայտնի նշմարտութիւնները կրկնելը, բայց երեւոյթի պատճառներն ու բովանդակութիւնը որոնել-հարցնել-պարզելը անիմաստ չէ:

Ձեր կարծիքով, ինչ է դա, արուեստի բացարձակ բովանդակազրկութիւն, աշխարհաբաղադրացիութիւն, տաղանդի կամ ձիրքի չգոյութիւն, թէ մի այլ բան...

□ Ա. Գ. — Ամէն նոր սերունդ, որ մուտք է գործում ասպարէզ, եթէ տաղանդաւոր է, ուրեմն եւ ինքնատիպ է, ու չի ուզում ու չի էլ կարող պարել ու քաջայատել իր ետը հին կանոններով, քերում է իր ձեւն ու զոյնը: Ու քանի անսովոր է մեզ՝ մենք նրան համարում ենք՝ օտար. բաւական է ընտելանաւք ու սիրենք՝ ինքներս կը համարենք մերն ու ազգայինը:

Ո՛վ էր Մ. Սարեանը Բաշինջաղեանի համար — օտար ֆրանսիացի: Ո՛վ էր Ե. Բոչարը 30-40 թուականներին — օտար ֆորմալիստ:

Ովքե՛ր էինք ՅՕականի նկարիչներս շատ ու շատ արուեստաբաններին համար — ոչինչ...

Ազգային արուեստն ու գրականութիւնը եղել են ու կը մնան, բայց ամէն նոր սերնդի հետ նորովի ծնունդով: Միթէ Զիտտոյից մինչեւ Գուտուզո նո՛յնն է իտալական արուեստը, կամ Ժան Կլուէից ու Պուսէնից մինչեւ Մատիսն ու Գառզուն՝ ֆրանսիականը: Ուրիշ բան է, թէ ինչքան են նրանք մեզ հարազատ, բայց եթէ նրանք անկեղծ ու առողջ են, ուրեմն եւ ժամանակի ոգու մարմնաւորումն են:

Ամէն սերունդ իր ժամանակի տրուբադուրն է:

■ ԵՄՈՒ. Խ. — Հազար անգամ կրկնուած հարց եմ տալիս: Ինչպէ՛ս դարձա՞ք նկարիչ: Դու՛ր ընտրեցի՞ք նկարչութիւնը, թէ նկարչութիւնը «ընտրեց» ձեզ...

□ Ա. Գ. — Բոլոր երեխաների պէս ես էլ նկարել եմ դեռ մանկուց: Նրկարում էի ե՛ւ դպրոցում, ե՛ւ տանը՝ մեր բակում, ինչի համար ինձ նրկարիչ էին կանչում: Ես դա ընդունում էի այնքան քնակա՛ն, որքան իմ անունը: Այդ տարիներին էր, որ շատ էի ուզում, որ անունս Մուրադ լինէր: Բայց չուտով մեր հարեւանութեամբ յայտնուեց մի խածան այդ անունով, եւ ես ստիպուած եղայ հաշտուել իմ անուան հետ:

Մայրս, երբ ես արդէն աւարտել էի ուսումս, մի օր ինձ խոստովանեց, որ դեռեւս Կարսում, աշակերտուհի եղած ժամանակ, երազել է նկարիչ որդի ունենալ: Ով գիտէ, մի զուգէ ներշնչուած է եղել ի վերուստ...: Յիշում եմ, որ տանը իմ նկարելը ընկալում էր խորեւ անբուժելի հիւանդութիւն, եւ հօրս անհանգստացնում էր այն քանը, որ ես կարող եմ այնքան տարուել նկարչութեամբ, որ մոռանամ ուտելը եւ քաղցից մեռնեմ...: Բայց ինձ նոյնիսկ չնախատեցին, երբ ես ածուխով մեր խոհանոցի պատին նկարեցի Մուշան տաւրիս. ընդհակառակը, այն ցոյց էին տալիս մեր տանը այցելողներին...



«Մուշտակով կնիք», 1983, գործ՝ Ալեքսանդր Գրիգորյանի:

Իսկ թէ ինչպէ՞ս եղաւ, ո՞վ ում ընտրեց՝ չեմ կարող ասել: Նկարչութիւնը ինձ չընտրէր, մէկ է, ես էի ընտրելու...

Կարծում եմ չեմ սխալուի եթէ ասեմ, որ ժողովրդի մէջ արուեստագէտ հասկացութիւնը ազնուական տիտղոսի արժէք ունի:

Թէ չէ էլ ինչ արուեստագէտ, որ չունի համամարդկային իղէալներ ու չի ապրում անանձնական ուրախութեամբ:

Արքիազ Պրէտ Կոստա Քնտազուրովն ասում է. «Աշխարհը իմ տանարն է, սերս՝ հաւատամք, հայրենիքս՝ ողբ տիեզերքը»: Արժէր որ մարդկութիւնը ականջօղ անէր այս ու շատ ու շատ բարոյական նորմեր, ապա իմ խոր համոզմամբ ո՛չ պատերազմ կը լինէր, ո՛չ ցեղասպանութիւն ու ո՛չ սին տենչանք աշխարհակալութեան:

■ ԵՈՒ. Խ. — Ես ձեզ նամաչում եմ իրբեւ գրականութեան հետ կապուած անձնաւորութիւն: Իմ առաջին հանդիպումը Ձեր մկարչութեան հետ եղել է «Գրականութեամբ», «Պիոներ» ամսագրում տպուած էին ձեր «Անոյշն ու Սարոն»: Եւ իմ՝ դպրոցականիս մէջ մնաց-տպաւորուեց ձեր մկարչական ձեռագիրը — ալմուկեստեւ միշտ եղաւ յիշելի ու ճանաչելի: Գիտեմ, որ մկարագարողի է՛ք տասնեակ զրբեր ու բազմաթիւ ստեղծագործութիւններ:

Ի՞նչ կ'առանձնացնէիք ժամանակակից հայ գրականութիւնից...

□ ԱՆ. Գ. — Գրքի ու գրականութեան հանդէպ սէրը, ըստ երեւոյթին, դալիս ու մօրս հայրերից: Երկուսն էլ ուսուցիչներ էին՝ մէկը Կարսում, միւրը՝ Ալեքսանդրապոլում:

Քրոջս հետ, որ ինձանից մեծ է երեք տարով, մաքուր թղթերից զըթոյկներ էինք սարքում: Քոյրս հեքիաթ էր յօրինում-գրում ինձ համար, ես նկարում էի այդ զըթոյկների շապիկները: Դեռեւս դպրոց չյաճախող երեխայի այս խաղերը հետագայում ինձ տարան «Պիոներ» ամսագիր, «Գարուն» ամսագիր, եւ ապա Պետական հրատարակչութիւն:

Առաջին հրատարակուած նկարազարդումս Աւետիք Իսահակեանի «Նուկիմ Բաղաբի խելօթները» հեքիաթն էր: Դրանից սկսած մինչ Յովհ. Թումանեանի, Շեքսպիրի եւ այլ հեղինակների ստեղծագործութիւնների նկարազարդումը մի երկար ճանապարհ է: Ի դէպ, Բաքիում «Ամմուտ»-ն եմ նկարազարդել: Դա այդ վէպի առաջին եւ միակ նկարազարդումն է, որքան գիտեմ: Բայց նկարազարդումներս անտիպ են:

Գրքերի աշխարհը նաեւ նրանց հեղինակների հետ շփուելու աշխարհն է: Շատ դրոշներ էի նկարել: Ափսոսում եմ, որ չեմ նկարել Իսահակեանին. շատ էր ծեր, ես էլ ամաչում էի անհանգստացնել: Բայց նրանից իրբեւ թանկ յիշատակ ունեմ այն երկու բառը, որ նա, մի անգամ, նշաձեւ խորունկ աչքերը երկար պահած վրաս, մի քիչ կակազելով ասաց ինձ.

— Ի՛նչ լաւ տղայ ես, դու որտեղացի ե՞ս...

Իմ սերնդի գրողներից ինձ ամենամօտը, թերեւս, իմ պապերի համերկրացի Մուշեղ Գալշոյեանն է...: Ափսո՛ս, շա՛տ ափսոս...: Ինչու՞

այդպէս շուտ մեռաւ այդ ծովի պէս կապոյտ աչքերով, ոսկի մազերով, էրզրի ցաւով հիւանդ այդ անուշ մարդը:

■ ԵՈՒ. Խ. — Ի՞նչո՞ւ էք Ձեզ ամէնից շատ կապուած գգում հայ կեանքին, Հայաստանին, հայ արուեստին: Ի՞նչն է ձեզ համար ամենաթանկն ու ցոլորականը:

□ ԱԼ. Գ. — Երբեմն ինձ թւում է, թէ ես կարող եմ ապրել աշխարհի ցանկացած քիչ թէ շատ բարւոյք անկիւնում: Ես, գործի բերումով ստեղծագործել եմ ո՛չ միայն տարբեր քաղաքներում, այլեւ՝ տարբեր երկրներում: Ու ինձ միշտ թուացել է, թէ Հայաստանի հանդէպ կարօտախոտ չունեմ:

Բայց երբ նկարել եմ ուրիշ երկրներում, ամէնուր իմ նկարներում տեսել են հայ նկարչի: Ըստ երեւոյթին, Հայաստանն ու հայկականը ոչ թէ իմ շուրջն են, այլ՝ իմ մէջ, ներծծուած իմ արեան մէջ Հայաստանի լոյսի ու բոյրի հետ, որ ուրիշ ոչ մի տեղ չկայ:

Ինձ համար ամենաթանկ բանը Արեւն է, Հայաստանի արեւի լոյսը, որ իսկապէս ուրիշ տեղ չկայ:

■ ԵՈՒ. Խ. — Կ'ուզէի, որ «Բազին»-ի ընթերցողներին պատմէիք Ձեր բանաստեղծութիւնների մասին: Եւ Բանի որ Ձեր բանաստեղծութիւնները Բանիցս տպագրուել են մամուլում, ուրեմն՝ գաղտնիք չեմ բացում: Ռուբէնը զիւսմագէտ էր, էնգլը ջութակ էր նուագում...: Դուր անելի համեստ էր՝ բանաստեղծութիւններ էր գրում...

□ ԱԼ. Գ. — Ինձ երբեք բանաստեղծ չեմ համարել ու ոչ էլ գրել եմ, որ ուրիշներն ինձ բանաստեղծ կոչեն: Կարծում եմ «նկարիչ» կոչումը քիչ չէ:

Երբ տպուեցին առաջին բանաստեղծութիւններս, շատերի համար դա անսպասելի էր, ես կատակով ասի. «Ծնուել եմ բանաստեղծ, բայց երկու-երեք քառատող բանաստեղծութեամբ տուն ու երեխայ չի պահուի, դրա համար էլ նախընտրեցի նկարչութիւնը»:

Բանաստեղծութիւնը միշտ էլ եղել է իմ թուլութիւնը: Միբայն էլ եմ բանաստեղծական սողի երաժշտականութիւնը: Բոլոր ուսմունքներից զերադասում եմ հեղինակների ընթերցումը: Քուչակի, Ոսկանի, Թումանյանի քառատողերը ինձ համար ամէն օրուայ հաց են...

■ ԵՈՒ. Խ. — Ձեր մասին շատ են գրել եւ արուեստաբանները, եւ արուեստաւէր մարդիկ: Բազմաթիւ յօդուածներ են գրուել Ձեր նկարչութեան մասին տարբեր լեզուներով: Մոսկուայում տպագրուել է արուեստաբան Վ. Մէլլանդի գիրք-մենագրութիւնը Ձեր արուեստի մասին: Բայց Խետաբեքի է իմանալ Ալեքսանդր Գրիգորեանի կարծիքը նկարիչ Ալեքսանդր Գրիգորեանի մասին:

□ԱՆ. Գ. — Ամենակարճ ու դիպուկ բնութագրումը, իմ կարծիքով, ինքս իմ մասին արել եմ իմ մի քանաստեղծութեան քառատողում.

Ես հարացի եմ, Արեւի որդի,

Եւ դրանով եմ ամսահման հպարտ,

Եւ մեծ Դանտէին կարոյում եմ սիրով,

Բայց Նարեկով է իմ հոգին կմբռնած...

Ո՛չ հիացած եմ ինձմով, ո՛չ էլ ամաչում եմ, որ այն եմ, ինչ կամ, այն, ինչ տուել է բնութիւնը ինձ, ես, առանց կեղծելու տալիս եմ կտաւ-ւին:

Ապրելը, աշխարհի հետ հաղորդակցուելը ու նկարելը զերազոյն են, հաճոյք են ինձ համար: Հէնց սա էլ իմ երջանկութիւնն է:

Անսահման շնորհակալ եմ իմ ծնողներին, որ ինձ ստեղծել ու դաս-տիարակել են առողջ ու օրինաւոր մարդ՝ ո՛չ փողասէր եմ, ո՛չ փառասէր, ոչ էլ նախանձ, ու թէ մի բան կայ, որ կ'ուզէի աւելին ունենալ, քան ունեմ, խելքն է, որ, իմ հաստատ համոզմամբ, միշտ չի հերիքում:

■ԵՈՒ. Խ. — Երբ այս գրոյցը տպագրուի, կարդալիս պիտի բռնայ, թէ ամենակարեւոր ու էական հարցերը չեմ տուել: Ի՞նչ հարցում կ'ուզեմայի՞ լսել, որ չտուեցի:

□ԱՆ. Գ. — Կ'ուզէի, որ հարցնէիր՝ ինչի՞ համար է ծնում մարդ-արա-րածը, որ պիտի ի վերջոյ մեռնի ու չհասկանայ աշխարհ զայն ու աշ-խարհից զնալու իմաստը, ու ես էլ պատասխանէի հետեւեալը.

—Մարդը, ըստ իս, աշխարհ է գալիս, որ թէկուզ մի անգամ նայի Արեւին, հիանայ Տիեզերքի անսահման ու անկրկնելի գեղեցկութեամբ, ապրի ու վայելէ է՛ն ամենավեհն ու մարդկայինը, որ մարդուն պարզե-ւել է Բնութիւնը:

Միայն Արեւը տեսնելու համար արժէր հազար անգամ նորից ու նո-րից ծնուել...

Հարցազրոյցը վարեց՝
ԵՈՒՐԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ



ՅՈՎՀ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Բանաստեղծ, թարգմանիչ և հրապարակագիր Յովհաննէս Գրիգորեան ծնած է 7 Օգոստոս 1915ին, Գրեմրի (նախկին Լենինական): Նախնական կրթութիւնը ստանալէ ետք, կը շահախէ Երևանի պետական համալսարանը և 1970ին կ'աւարտէ բանասիրական բաժանմունքի մաթեմատիկական լիզուս-բանութեան և մեքենական թարգմանութեան երկու:

Հայրենիքը, ծնողքը եւ երեխան այն սրբութիւններն են, որոնց զայնութեամբ եւ յարատեւութեամբ անկասկածաւորօրէն պարելու տոկունութիւն, յամառութիւն ու կամք է հաղորդում Յովհ. Գրիգորեանի բանաստեղծութիւններին: Եւ նա իր ոգեւոր ապրած կեանքի դանդաղ ժամերի մէջ, տարուբերութեամբ տխուրեան, հրաժեշտի, մեղութեան զգացողութիւնների եւ ժամանակ առ ժամանակ փայլատակող գարնան, զարթոնքի, սիրտը եւ վայելքի ուժեղ պահերի միջեւ, կայտաւանդ է բարձր պահել Բաղրամբայեան ու հայրենասիրական իր նկարագիրը՝ թագմաթիւ տողերում հաւաստելով հայրենիքի, կեանքի համար ապրելու եւ մեղմելու իր անխախտ համոզմունքը («Սովետական Գրականութիւն», 1987, թիւ 1):

Պետրոս Դեմիրճեան Յովհ. Գրիգորեանը ժամանակակից բանաստեղծ է, ժամանակակից՝ իր պոետական մտածողութեամբ, իր պոետիկայով աշխարհը տեսնելու եւ ըմկալելու իր եղանակով: Նրա լաւագոյն բանաստեղծութիւնների մէջ կարելի է տեսնել մեր ժամանակակից կեանքի շատ կողմեր, որոնք ստացել են զեղարոնստական համարժէք մարմնատրուսը («Սովետական Գրականութիւն», 1988, թիւ 9):

Հենրիկ Լոյսեան

Ապա՝ ան իրրիւ թարգմանիչ երկու տարի կը պաշտօնավարէ «Երեւոյեան Երեսան» օրաթերթի մէջ: 1975ին, իրրիւ խորհրդական մաս կը կազմէ Հայաստանի գրողներու միութեան անկենականին: Ներկայիս կ'աշխատի «Նոր» գրական ամսագրի մէջ՝ իրրիւ զխաւոր խմբագրի տեղակալ:

Աշակերտական գրասեղաններուն վրայ իր առաջին բանաստեղծութիւնները գրած Յովհ. Գրիգորեան ցարդ հրատարակած է բանաստեղծութիւններու չորս ժողովածուներ՝ «Երգեր առանց երաժշտութեան», «Բոլորովին ուրիշ աշուն», «Անձրեւ մի տխուր աղիթով» եւ «Դանդաղ ժամեր»:

Աւետիք Իսահակեանի անուան և այլ գրական մրցանակներու թափնակիր Յովհ. Գրիգորեան բնորոշ բանաստեղծութիւնները թարգմանուած են անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, սպաներէն, ռուսերէն և այլ լեզուներու: Ապահերէնէ և ռուսերէնէ թարգմանութիւններ կատարող բանաստեղծը հաշուարկած է Բարսեղ Զուհիճեանի «Արտիմիո Արտի մանր» եւ Խուլիո Բորթաւարի «Վիճակաւոր» վէպերն ու սպանացի, ուրբանացի, ռուս և այլազգի զանազան բանաստեղծներու եւ արձակագիրներու գործերը:

Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Զորս Բայլ վեր — սահման է,
 Զորս Բայլ վար — սահման...
 Աստուած իմ,
 այսօր էլ փոքրիկ հայրենիք,
 այսօր էլ փոքրիկ
 Հայաստան,
 Նորածնի բարուր է իսկական...
 Նորածնի բարուրը գրկել եմ,
 Աստուած իմ,
 մոլորուել, կանգնել եմ,
 չգիտեմ ի՞նչ անեմ,
 ո՞ր գնամ.
 Զորս Բայլ վեր — աւեր է,
 չորս Բայլ վար — թալան...

ԳԱՐՈՒՆ - 1992

Զմեռն աշնակա վերջացաւ, ինչպէս վիշապն է սատկում
 հեփիաթների ամենավերջում,
 ինչպէս պատերազմն է վերջանում՝ երկար տարիներ տեսած...
 Եւ ոչինչ, որ գարնան առաջին ամպրոպի փոխարէն
 արկեր ու ոռոմբեր պայքեցին
 եւ փամփուշտների հորդառատ անձրեւ տեղաց:
 Յետոյ իսկական անձրեւն եկաւ. մարդիկ թափուեցին փողոց՝

կոտորուած ժպիտ կար դէմքերին ուշացած երջանկութեան...

Եւ ոչինչ, որ աւելի շատ էին կասկածոտները, որոնք
Նստեցին տանը միացնելով ռադիոն
եւ սպասելով, թէ ինչ որոշում կ'ընդունի պառլամենտն
այս կապակցութեամբ...

Եւ ոչինչ, որ թէեւ արեւը շողում է պայծառ,
բայց չեն շտապում մարդիկ՝ դեռ վերարկուններով են քայլում
ձեռքերը խոր գրպանները խրած...

Պիտի հասկանալ նրանց, ակնբ, ինչպէ՛ս հաւատան,
որ հնարատր է հէնց այնպէս տաճանալ՝
առանց գազ ու մագնիսի, առանց ջեռուցման...

Ոչինչ: Կեանքն է եղել այդպէս՝ քաջաբար էի, լեզին
եղել է առաւել, դառնութիւնն եղել է անծայր,
կը հասկանա՞մ, եթէ լսէ՞մ անա այս երեխային,
որ վախով արթնացել է գիշերուայ կէսին
եւ հարցնում է մօրը.

— Դո՛ւ ես ինչ օրորում,
թէ՞ երկրաշարժ է դարձեալ...

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՁԵՌՆԱՐԿ- ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՏԵՒՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Սիրով նուիրում եմ Նորա Արմանիին

1. Ահա երկար տարիներ ապրում եմ ես
իմ ժողովրդի հետ այս քաղաքի վրայ,
այս ժայռերի մէջ ու ձերպերից մի կերպ կառչած-
որովհետեւ արօտներն ու դախտերը,
հողերը տարել են վաղուց...
Ձեր ինչի՞ն է պէտք հողը, ասել են,
արօտներն ու դաշտերը ձեր ինչի՞ն են պէտք,
դու՞ր խելօք, աշխատասէր մարդիկ մարդիկ է՞ք,
դու՞ր կարող է՞ք քարից եաց քամել
եւ միւրգ՝ ժայռերից ու ձերպերից...

2. Յետոյ ծովերն են տարել եւ ասել են՝
դու՞ր խելօք աշխատասէր մարդիկ է՞ք,
դու՞ր կարող է՞ք երկնքից ջուր քամել

եւ լողալ մտքերի ծովում ազատօրէն...
Այա Բանապարհներն են տարել, բացետրելով,
որ մենք հարուստ երեւակայութիւն ունենք
եւ կարող ենք Բանապարհորդել մտովի,
ընդ որում, մեծ հաճոյք ստանալով
մուսազգոյն ծախսերի պարագայում...

3. Իսկ յետոյ սկսեցին հացը տանել, որք
հարկից էինք Բամել,-ասացին՝ դուք Աստուծոյ
սիրասուն զաւակներն էք եւ առաջագահն էք նրա
նուիրական զօրքի... Գթացէ՛ք ձեր հարեւաններին,
որ չեն կարողանում կշտանալ առանց ձեր հացի,
իսկ դուք հին ու տառապած ժողովուրդ էք,
դիմացկուն էք եւ ուրեմն, կարող էք ապրել առանց հացի,
օգտուելով առաւել սննդաբար՝ հոգեւոր հացից...

4. Իսկ յետոյ դռները տարան ծխնիներից տեղահան հանելով
եւ ամօթով տուեցին եւ ասացին.-Ձեր ունեցուածքը
փակի տակ էք դրել, դիտաւորեալ, որպէսզի
մութ բնագոյներ արթնացնէ՛ք ձեր պարզեղբի հարեւանների մէջ,
ստիպելով նրանց՝ վտանքի ենթարկուելով, շուսամուտից
տանել այն, ինչ կարելի էր հանգիստ
անցկացնել լայն բացուած դռնով...

5. Ասացին Ոսեւ,-Դուք, որ հիւրասէր ու խաղաղ ժողովրդի
համբաւ էք վայելում, այնուհանդերձ, դիմադրութեան
փորձ էք արել՝ հնարամիտ ու խորամանկ քայլ,
որպէսզի ձեր հարեւանները՝ բնութեան այդ պարզ
ու անմիջական զաւակները, հարկադրուած
կոտորեն ձեզ եւ դրանով իսկ՝ խայտաբախուեն աշխարհով մէկ՝
ինչը եւ ձեր նպատակն է եղել յետին...

6. 7. 8. 9.
...Եղել են նաեւ ուրիշ օրեր՝ բաց են եղել դռները երկմբի,
մանանայ է իջել թանձր ու խիտ, Բաղր մեղրի մման,
հաստ շերտերով մստել է գեմին եւ մագանօթներով
թափանցել է խորքերը հողի՝ յարձակուել են չորս կողմից
վայրի գազան ու գեռուն՝ Բաղր բոյրից խենթացած,
պատառ-պատառ են արել, յօշոտել են մոլուցքով...
...Մնացել է ձեռքիս մէջ նշխարաչափ մի պատառ,
ամէն կողմից կրծոտուած մեղրաբլիթ
Հայաստան...

**ՃԱԿԱՏԱ-ԳԻՐ՝
ԳՐՈՒԱԾ ՊԱՐԶ ՉԵՌԱԳՐՈՎ**

Եւ Աստուած ցանկացաւ գրել
 խ ա դ ա դ ու թ իւ ճ
 քո տարածքի վրայ ծայրէծայր,
 բայց բառն այդ շատ էր երկար
 եւ չտեղատրուեց քո փոքրիկ հողի
 երկայնքով:
 Եւ ապա, ծանր հոգոց հանելով,
 Աստուած փորձեց գրել
 ե ռ ջ ա ճ կ ու թ իւ ճ
 բայց, աւաղ,
 այս բառն էլ շատ երկար էր դարձեալ
 ու կէսն անգամ չտեղատրուեց
 քո հողի վրայ ծայրէծայր...
 Եւ ի՞նչ անէր Աստուած,
 որ լոկ սուգ-ն եկաւ յարմար,
 որ լոկ ցաւ-ն եկաւ յարմար,
 որ լոկ լաց-ն եկաւ յարմար
 քո փոքրիկ հողի համար...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ճակարակ-գիր
Գրեալ արարչ շնորհքով

Նի Սարգսի ցանկացած գրել
Եւ չեմ չեմ չեմ չեմ
Ճո ցանկացի վրա Տարբերութիւն,
Բայց բառն այդ շատ էր երբեք
Եւ չգիտեմ ինչ ինչ ինչ ինչ
Երբեք չեմ:
Ճո ապա, Տարբերութիւն
Սարգսի ինչպէս գրել
Եւ չեմ չեմ չեմ չեմ
Բայց, ահա,
այն բառն էր շատ երբեք էր չգիտեմ
Եւ չեմ չեմ չեմ չեմ
Ճո ինչ վրա Տարբերութիւն...
Ճո ինչ մանր Սարգսի,
Եւ չեմ չեմ չեմ չեմ
Եւ չեմ չեմ չեմ չեմ
Եւ չեմ չեմ չեմ չեմ
Ճո ինչպէս ինչ ինչ...

Վ. ՆԱԲԱՆԴԵԱՆ



Վ. ՆԱԲԱՆԴԵԱՆ

Արձակագիր, թատերագիր, մանկագիր և թարգմանիչ Վարուժան Նայբանդեան ծնած է 14 Դեկտեմբեր 1929ին, Գաճիբե (Նգիպատու)։ Նախնական կրթությունը կը ստանայ ծննդավայրի ֆրանսական դիշերթիկին մէջ, իսկ 1942-1943 տարիներուն կ'ուսանի Գաճիբեի Գա-

լուստեան ազգային վարժարանը։ 1947ին, ծնողքին հետ կը ներգաղթէ Հայաստան, ուր և կը ստանայ իր համալսարանական կրթութիւնը։ 1952ին կ'աւարտէ Խ. Արփիանի անուան մանկավարժական ուսումնարանի հոգեբանութեան և տրամաբանութեան ճիւղը։ 1952-54 տարիներուն կը դրադի ուսուցչութեամբ՝ դասուանդելով Հայաստանի Կեչուտ և Իջևանի շրջանի Գետաշէն դիշերտն մէջ։ Այնուհետեւ կը պաշտօնավարէ զանազան դիշերտն մէջ։

Վ. Նայբանդեան հրատարակած է մանկական պատմուածքներու, հեքիաթների և վիպակներու աւելի քան 10 զըրբոյկներ և հատորներ, որոնցմէ նշենք՝ «Կրկեսային երազանք», «Դարպասը երրորդ յարկում», «Այս նալը ե՛րբ պիտի շարժուի» և «Մամոնտը եւ պապոնտը» անուն հատորները։ Ան նաեւ ֆրանսերէնէ հայերէնի թարգմանած է արձակ ու թատերական բազմաթիւ ստեղծագործութիւններ, ինչպէս՝ Ժոզէֆ Պեթի «Թրիստիանի եւ Իզոլայի սիրավէպը», Էլզա Թրիուլէի «Ալիմիդի սիրահարները», Արթուր Ադամովի «Փրոֆեսէօր Թարան» Ժան-Փոլ Սարիթի «Սատանան եւ Տէր Աստուածը» և այլ գործեր։

ՕՁԻ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ

«խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. Մուտ առ Փառաւով, զի ես խստացուցի զսիրտ Աորա եւ զսիրտ ծառայից Աորա, զի կարգաւ եկեացեմ Ոշանք իմ ի վերայ Ողա»։

(ԵԼՔ, ԳԼ Ժ , 1)

Մարդու բարեկամներն էին Շունը, Կատուն, Ձին, Դեղձանիկը եւ Ողնին։ Մարդը սիրում էր Շանը, որովհետեւ նա հաւատարիմ էր։ Սիրում էր կատունին, որովհետեւ նա հնարամիտ էր։ Սիրում էր Ձիուն, որովհետեւ

զեղեցիկ էր: Միրում էր Դեղձանիկին, որովհետեւ երգիչ էր: Միրում էր Ոգնուն, որովհետեւ նրան պաշտպանում էր օձից, որը չէր սիրում եւ Մարդուն, եւ Շանը, եւ Կատուին, եւ Ձիուն, եւ Դեղձանիկին, եւ Ոգնուն: Օձը նրանց չէր սիրում, որովհետեւ ի ծնէ, ի բնէ չար էր ու թունաւոր: Նա առիթ էր կծելու Մարդուն, Շանը, Կատուին, Ձիուն, Դեղձանիկին եւ նոյնիսկ Ոգնուն, որը շատ էր վտանգաւոր ու մահացու:

Մարդը եւ նրա բարեկամները զօրախառնաբար հիւանդ էին: Մարդու ոտքերն էին թմրում, եւ հաւանական էր, որ նա կաթնածաղար լինի: Շան առամները ցաւում ու թափում էին: Կատուի մազերն էին թափում. ծաղատանում էր: Ձին անշափ աճած քորուրտուք ուներ: Դեղձանիկը շատ դիրազգաց էր դարձել եւ տենդից յաճախ զոգրոյում էր: Ոգնու տեսողութիւնը եւ լսողութիւնը թուլացել էին. կիսակոյր էր եւ կիսախուլ: Իսկ Օձը՝ ինքը, քողկի պէս առողջ էր, թէեւ ինքը դաղձ էր սիրում ու ոչ թէ բողկ:

Եւ ահա մի օր, երբ Շունը գնացել էր մօտակայ լիճը՝ առամները ուղղելու, — երբ Կատուն գնացել էր վարսավիրի մօտ մնացած մազերը խուզելու, — երբ Ձին գնացել էր մօտակայ հեռագրասիւնին քսուելու եւ քորուրտուքը թեթեւացնելու, — երբ Դեղձանիկը արեւկող էր տուել ու քուն մտել, — երբ Ոգնին մարգագետնում փորձում էր պոկել իր փշերը, որպէսզի ասեղնաբուժութեամբ զբաղուի, — Մարդը, պառկած տեղը, տնքաւոր ոտքերն էր շփում ու մղկտում: Այդպէս պատահեց, որ Օձը զոգրոտիկ մտաւ նրա սենեակը: Եւ նրան չզգուշացրին ո՛չ Շունը, ո՛չ Կատուն, ո՛չ Ձին, ո՛չ Դեղձանիկը, ոչ էլ Ոգնին, որը կարող էր նաեւ պաշտպանել նրան: Մարդն իր ցանկերի հետ էր, ինքն էլ չնկատեց թշնամուն: Օձը աննկատելի մտաւ նրա վերմակի տակ եւ ինչքան ուժ ուներ կծեց նրա աջ ձեռքը եւ թոյնը լցրեց իր բացած վերքի մէջ: Մարդը յանկարծակի ուժգին ճչաց: Շունը լսեց նրա ճիչը, եւ տուն վազեց: Կատուն լսեց նրա ճիչը եւ տուն վազեց: Ձին լսեց նրա ճիչը եւ տուն վազեց: Դեղձանիկը լսեց նրա ճիչը եւ քնից արթնացաւ: Նոյնիսկ կիսակոյր եւ կիսախուլ Ոգնին լսեց այդ ճիչը եւ տուն շտապեց: Օձն էլ, անշուշտ, լսեց այդ ճիչը եւ զուրա փախաւ Մարդու տնից:

Մարդը, արցունքներն աչքերին, ուշացումով համախմբուած բարեկամներին ասաց.

— Իմ սիրելիներ, Օձն ինձ կծեց, ես պիտի մեռնեմ:

Ասաց եւ պարզեց իր վիրաւոր թիւը:

Հին բարեկամները, հինգ բարեկամները շատ էին վշտացած: Ամենաշատն իրեն մեղաւոր էր զգում, ի հարկէ, Ոգնին, որը Մարդուն ասաց.

— Դու մեռնես, ես ինչպէ՛ս ապրեմ:

Եւ կեանքը վտանգի ենթարկելով՝ լիզեց Մարդու թունաւոր վերքը:

Շունն ասաց.

— Կեանքումս ես քեզ մօտ հազիւ մարդավարի վերաբերմունք տեսայ:

Ով Մարդ, քո մահից յետոյ, ես չեմ կարողանայ ապրել: Անտէր շան կեանքը բանի նման չէ:

Եւ կեանքը վտանգի ենթարկելով՝ լիզեց Մարդու թունաւոր վերքը:

Կատուն ասաց.

— Կարծում էք՝ ես ուրիշ տուն, տանիք եւ ընտանիք պիտի որոնեմ:

Միայնում էք:

Եւ կեանքը վտանգի ենթարկելով՝ լիզեց Մարդու թունաւոր վէրքը:
Ձին ասաց.

— Ես միայն ի՞մ մասին մտածեմ: Ո՛չ, իմ խիղճն ինձ անելի կը տանջի,
քան քորուրտութիւնը:

Եւ կեանքը վտանգի ենթարկելով՝ լիզեց Մարդու թունաւոր վէրքը:
Դեղձանիկն ասաց.

— Լաւ էր՝ իմ ձայնը կտրուէր, քան քո կեանքի թելը, ով Մարդ արա-
րած:

Եւ կեանքը վտանգի ենթարկելով՝ կտուցը քսեց թունաւոր վէրքին:

Ու կատարուեց ո՛չ թէ հրաշք, այլ՝ շատ հասկանալի մի բան: Բոլորը
գիտեն, որ Օձի թոյնի փոքրիկ չափսերը բուժիչ են եւ օգտագործուում են
դեղորայք պատրաստելու համար: Օձային ծագում ունեցող այդ դեղերով
բուժում են ճաղատութիւնը, տենդութիւնը, լսողութիւնը, ատամնացաւը,
հիւանդագին զիրազգացութիւնը, քորուրտութիւնը, տենդն ու դողերոցքը, ինչ-
պէս եւ դրանով կանխում են կաթուածի սպառնալիքը: Եւ ահա, յանուն
Մարդու, իրենց կեանքը վտանգի ենթարկելով, բուժուեցին, առողջացան
Ծունը, Կատուն, Ձին, Դեղձանիկը, Ոգնին եւ, ի հարկէ, նաեւ Մարդը, որի
արեան մէջ թոյնն այնքան էր նուազել, որ դեղ էր դարձել: Իրենց անձնա-
գոհութեամբ բարեկամները ե՛ւ իրենք իրենց փրկեցին, ե՛ւ Մարդուն, ե՛ւ
նրա մարդկութիւնը:

Պատմութիւնն այստեղ էլ կարող էր վերջանալ, եթէ չլինէր Օձի չար
հետաքրքրասիրութիւնը: Նա ուզում էր տեսնել Մարդու թաղումը, ուզում
էր լսել Ծան, Կատուի, Ձիու, Դեղձանիկի եւ Ոգնու ողբուկոծը: Համբերեց,
համբերեց, էլ չհամբերեց, գողտուկ մօտեցաւ տան լուսամուտին եւ ա-
կանջ գրեց: Եւ իր խելօք տեղովը ապուշ կտրեց: Ո՛չ թէ ողբուկոծ էր, այլ՝
ծափ ու ծիծաղ, երգ ու պար: Յետոյ՝ ուշքի եկաւ եւ ինքն իրեն ասաց.

— Հաստատ բան է՝ վշտից խելազարուել եմ:

Մէկ՝ որոշեց, որ թողնի հեռանայ, յետոյ միտքը փոխեց.

— Ինչո՞ւ հեռանամ, որ... Մտնեմ, ձեռ անեմ այդ գծերին:

Եւ համարձակօրէն մտաւ Մարդու տունը:

Ծունը, Կատուն, Ձին, Դեղձանիկը, Ոգնին եւ Մարդն էլ, ի հարկէ, ու-
րախ-գուարթ չըջապատեցին Օձին եւ շուրջպար բռնած՝ երգում ու գովա-
բանում էին նրան:

— Օհ, դու Օձ քարերար...

— Օհ, դու Օձ փրկարար...

— Քո շնորհիւ չքացան մեր հիւանդութիւնները...

— Դու՝ ամենարարի, ամենբուժիչ...

— Դու՝ կենդանիների եւ Մարդու ամենամեծ բարեկամը...

— Երկար ապրես դու, Օձ հրաշագործ...

Օձը բան չէր հասկանում: Քիչ էր մնում՝ ինքը խելազարուի: Յետոյ
կամաց-կամաց, նրանց ասելուց-խօսելուց զլիսի ընկաւ, որ իր թոյնի փոք-
րիկ չափսերը բուժիչ են, որ ինքը նրանց բոլորովին բուժել է: Եւ այդ
պահին, ոչ այն է՝ զայրանար, որ իր չարութիւնը ոչ միայն չհասաւ նպա-
տակին, այլ, ընդհակառակը՝ բարութիւն գործեց: Ոչ այն է՝ բաւականու-
թիւն զգար այդ զարմանալի էակներին: Ախր, Մարդը հիմա սիրում էր
նրան: Ծունը սիրում էր նրան: Կատուն սիրում էր նրան: Ձին սիրում էր

նրան: Դեղձանիկը սիրում էր նրան: Եւ նոյնիսկ Ոգնին սիրում էր նրան: Այդքան շատ սիրուց նա բոլորովին շփոթուել էր: Ախր, նրան կենանքում ոչ ոք չէր սիրել, ոչ իսկ մայրիկը, որին ինքը մանկուց կորցրել էր: Եւ զուցէ այդ էր պատճառը, որ ի ծնէ, ի բնէ նրա չարութիւնը գնալով մեծացել էր, գնալով շատացել էր, եւ մահացու թոյն էր դարձել ուրիշների համար: Մահացու, եթէ արարածներն իրար չօգնեն՝ թէկուզ իրենց կենանքը վրտանդի ենթարկելով: Եւ կենանքում առաջին անգամ նա ուզեց ամաչել այդքան առատ ու շռայլ սիրուց: Բայց միաժամանակ նա մի տեսակ չարացաւ եւ նրանց սիրուց, եւ ամաչելու իր ցանկութիւնից: Ուզեց հեռանալ, բայց Մարդը բարեկամաբար բռնեց նրա պոչից: Եւ օձը վերածուեց ճիւղի, ծառի ճիւղի: Մարդը ճիւղը տնկեց իրենց պարտէզում: Այդ ճիւղը դարձաւ ծառ, որը մինչեւ այսօր էլ կոչւում է Օձի փայտ: Մի թեթեւ դառնահամ պտուղներ է տալիս: Կտրելու դէպքում ուժեղ հոտ է արձակում: Բայց ամենակարեւորը՝ օգնում է թունաւորման դէմ, եւ նրա խէժով քսուելու դէպքում օձը քեզ չի մօտենայ: Եւ այդ ծառը բոլոր օձերին հասկացնում է, որ երկրագունդը այնպէս է պտտւում, որ վերջիվերջոյ, վերջիվերջոյ, բարութեան հետ շփուելով ուղի-չուղի ծառայում էր նրան:

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԲԱՆԴԵԱՆ

ՄԱՐՏԻՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



Ծնած է 1943ին Զաւարցի Նինոծ-մինդայի շրջանի Մեծ Գոհարա գիւղին մէջ: 1965ին աւարտած է Երեւանի Խ. Աբովեանի անուան մանկավարժական ինստիտուտի նկարչութեան բաժինը:

Աշխատած է «Ջերմուկ», «Հայրենիքի ձայն», «Գեղարուեստ» թերթերուն, «Արուեստ» ամսագրին, Հայկական Հանրագիտարանի խմբագրութիւններուն, ինչպէս նաեւ Հայաստանի հեռուստատեսութեան, պիտական պատկերասրահին, Մ. Սարգսանի անուան թանգարանին ու Գեղարուեստա-թատերական ինստիտուտին մէջ:

Հայրենի մամուլին մէջ ստորագրած է բազմաթիւ յօդուածներ, ինչպէս նաեւ կազմած ու հրատարակութեան յանձնած է աշխատներ:

Էդգար Շահին, Յովսէփ Փուշման, Արշիլ Գորկի, Գառգու, Գրիգոր Շլյան, Ժանսէւ Էւ ալո՛ւ Հայաստանից հեռու, օտար մշակոյթների ազդեցութեան շնորհիւ, տարբեր գաղափարների, բաղաձայն ու էսթետիկական խմբումների մէջ նրանք ոչ միայն չեն շփոթուել, այլև պահպանել են իրենց ինքնուրոյնութիւնը եւ այդ ամէնի մէջ կողմնորոշուել են աշդպէս, որ հաասար է անձնագիտութեան, բարոյական կատարելութեան («Մովհաւան արուեստ», 1988, թիւ 3):

* * *

Մշակոյթի առաջընթացի համար որեւէ միւթ, թեմա, սիւժէ, թերեւս, պարտադիր չէ: Թող անելի շատ կտանք մոլորուեմ մեր պատմութեան կարեւոր անցքերին: Դա գեղեցիկ է: Ցատկապէս Ասարայրի, Սարգսարապատի, Ջէյթունի, Վանի, Զանգեզուրի հերոսամարտերին ձօնուած ստեղծագործութիւններն այսօր կարող են նեցուկ լինել դժուարին իրավիճակի մէջ արդարութիւն որոնող մեր ժողովրդին («Արուեստ», 1990, թիւ 6):

Մարտին Միքայէլեան

Մ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԱՐԵՒԱԽԱՆՁ

ԱՐՏԻ

ԵՐԱՆԳՆԵՐԸ



Մինչ երեսնեան մայթերին կը յայտնուէր Ղաջուոցի հպարտ ու նշանաւոր նկարիչը, Մարտին Պետրոսեանի մասին արդէն խօսում էին։ Այն տարիներին Մարտինն արդէն անհաշտ բնաւորութեան տէր անհատականութիւն էր, ծայրայեղ արժանապատիւ մէկը, որը սակայն տառապում էր առօրեայով ապրող նիւթապաշտների, Տնշող կենցաղի եւ սեփական հոգեւոր առկայծումների միջեւ։

Հասարակ մի առիթով նա կարող էր բռնկուել, Ղաջանանաւ, բարձրաձայն վիճել եւ «պարտուել», որովհետեւ այն ժամանակ նրա «հակառակորդները» զենեւս շատ էին։ Ես նրա «կոխներկց» միայն մէկն եմ տեսել, որն առանձնապէս յիշարժան չէ։ Իսկ նա, կուտւում էր, քաղաքի ամենանըշանաւոր զէմքերի հետ, իր կարծիքն արտայայտում էր անմիջական, շեշտակի։

— Բաւական յիմար բաներ էք ասում, ընկեր այսինչեան։

Արտաքուտ փշոտ նկարիչը նուրբ հոգի ունէր. վկայ՝ նկարները, ամբողջ կեանքը։

Երբ մի անգամ ասացի, թէ Գէորգ Գրիգորեանը (Ջոտտոն) Ղաջին բնաւորութիւն ունի, Մարտինն ասաց։

— Ամբողջ կեանքում աղքատութեան ու կարիքի մէջ է ապրել, ի հարկէ Ղաջին պէտք է լինի։ Նա շատ խորը եւ տաղանդաւոր մարդ է։ Ուզում էք՝ ձեր ոտքերն ընկնի, աղաչի։ Նա արուեստագէտ է, նա հպարտ պէտք է լինի։

Կարծես ինքն իր մասին էր խօսում։

Այն տարիներին Մարտինն ապրում էր Աջափնեակի նեղ բնակարան-արուեստանոցում եւ այդ մասում վերջանում էր Երեւանի հարաւ-արեւմուտեան հատուածը։ Մի վաղ առաւօտ ես զրոյց լսեցի նրա երգը։

Արօրն ասաց տաւրակի հաւմով։

Ինչու՞ կու լաս կուց-կուց արում։

Այդ ձայնը հողագոյն էր, աւելի ճիշտ՝ արեւախանձ արտի գոյն, որպիսին երբեմն ունենում են Սպիտակի սարերը եւ այդ երանգներով Մարտինն արգէն նկարում էր:

Նրա հմայքն այդ երանգների մէջ էր եւ արգէն վաթսուականների սկզբին կռահեց. եւրոպացու կեցումը ընդունել պէտք չէ ու չջանաց ուրիշների նման ցուցադրել մասնագիտական ունակութիւնների գիտանոցը: Ինքը մի հաւատացեալ հայաստանցի էր եւ իր հաւատի ու սիրոյ մասին նկարեց առանց կեղծելու: Այդ պատկերները աւելի քան թախծոտ էին:

— Էս մարդը գետնի տակովն է թափառում,— մի օր ասաց նրա երկրպագու նկարիչներից մէկը:

Այո, նա հողի տակով, արմատներով միանում էր իր նախնիներին արգէն այն երանելի ժամանակներում:

1960ական թուականները երանելի էին, որովհետեւ մղձաւանջն այլեւ չկար եւ փոշիների, փշալարերի եւ վարագոյրների միջից յանկարծ արթնացել էին Արուեստն ու «մոռացուած նախնիների տոներները»: Ակադեմիական կրթութեան կողմնակիցները մի փոքր տխրել էին, որովհետեւ արուեստարանները խօսում էին ինչ-որ «նոր, բակոնիկ ոճի մասին», բայց այդ խօսակցութիւնը Երեւանից ահագին հեռու էր եւ զեռուս զանազան արկիւններում ապահով փակուած էին ազատ նկարների վերատպութիւններն ու ազատ մտքերը: Նոր ազատագրուած երբեմնի «Ապոլո»ն ամսագրում ինքն իր համար ապրում էր Մարտիրոս Սարեանի մասին գրուած Մաքս Վորշինի փառահեղ ուսումնասիրութիւնը, իսկ «Զորտոյէ ռուս»ի խունացած համարներից մէկում նոյն հեղինակն ասում էր. «Երբ կամոնի դէմ պայքար չկայ — զոյրթիմ չունի մաքի արուեստ: Կամոնը բանտ է: Սակայն ազատութեան մեծ երազը կարող է ծնուել միայն բանտում եւ շղթաների մէջ»:

Ազատութեան մեծ երազը Երեւանի վրայ 1960ականների սկզբին թեւածում էր եւ բոցավառում հայկական գրօջի գոյներով:

Կանոնի եւ ազատ արուեստի միջեւ տատանուող Մկրտիչ Քամայեանը չէր կարողանում յաղթահարել ակադեմիզմի արգելքները, բայց տեխնիկումի իր սաներին մղում էր խիզախ որոնումների, նոր գեղեցկութեան: Այդ սաների եւ նրանց ուսուցչի շնորհիւ մէկ անգամ եւս հայկական գեղանկարչութիւն թափանցեց իմպրեսիոնիզմի շուկայ: Ծաղկաշէն գիւղում ծնուած Մարտին Պետրոսեանը գեղարուեստի այդ տեխնիկումն աւարտեց 1958ին եւ այլեւս ուրիշ հաստատութիւնում չարունակեց ուսումը: «Ուրիշ» հաստատութիւնները նրան չընդունեցին: Բայց նա արդէն ուրիշ մի նկարիչ էր՝ հետաքրքիր նկարներ ու քանդակներ ստեղծած երիտասարդներէ մի փոքրիկ խմբի մէջ: Երբ Լենինգրադի գեղարուեստի ակադեմիան աւարտած Մինաս Աւետիսեանը վերադարձաւ հայրենիք, Հայաստանի մայրաքաղաքն արդէն գեղանկարչութեան ուրոյն դպրոցի համարում ունէր:

— Տասը տարի յետոյ Երեւանը կը դառնայ արուեստի Փարիզ,— ոգեշնչուածութեամբ ասում էր Ռուզոլֆ Սաչատրեանը:

1961 թուականի Յունուարին Արմինա փողոցի նորակառոյց ցուցասրահում բացուեց հայ արուեստի ամենամեծ ցուցահանդէսը այն պատկերահանգէսներից, որ երբեւէ տեսել էին հայ արուեստի երկրպագուները:



«Երկաներ կիներ», 1982, գործ՝ Մարտին Պետրոսեանի:

Այդ ցուցահանդեսին առաջին անգամ երկու նախընտրություններով մասնակցում էր Մարտին Պետրոսեանը: Դրանք այնքան պայծառ ու շրջագոյն էին, որ կարծես խորհրդանշում էին հայ արուեստի նոր շրջափուլը: Իսկ այդ ժամանակն իսկապէս եկել էր: Նոր ու թարմ նկարներով մասնակցում էին Մարտիրոս Սարեանը, Երուանդ Քոչարը, Յարութիւն Կալենցը: Էդուարդ Իսաբեկեանը բերել էր իր նոր ու ամենամեծ կտաւը՝ «Պատասխան Յազկերտին», Յովհաննէս Զարդարեանը՝ «Ձգտում»ը՝ անըստ պատկերի գունային լուծմամբ մի կոմպոզիցիա, որը զարժաւ ցուցահանդէսի քննադատութեան թիրախը: Բայց ամէնից շատ քննադատեցին Մարտին Պետրոսեանի նկարները, մա՛նաւանդ՝ պահպանողականները, որոնք արդէն իսկ յոգնել էին «անգրագէտ, հիմնաւոր ակադեմիական կրթութիւն չունեցող» նկարչի մասին տարածուած խօսակցութիւններէ, գովեստներէ: Անշուշտ, նրանք բոլորովին չէին յիշում, որ Սարեանը, Գայֆեջեանը, Քոչարը աւարտել էին ընդամէնը մոսկովեան յայտնի ուսումնարանը, որ Պիկասոն, Վրուբելը եւ միւսները ուղղակի փախել էին ակադեմիաներից, իսկ շատ նշանաւոր արուեստագէտներ ամենեւին կրթութիւն չէին ստացել:

Մարտին Պետրոսեանի մասին փոքրիկ լեզենդը տարածողը Մարոյեանն է, Հեմինկուէյի, ամերիկեան նոր բանաստեղծների երեւակայութեամբ հրապուրուած Ռաֆայէլ Արամեանն էր: Նա ինքը նոյնպէս մի քիչ նկարում էր, մտերիմ էր Սարեանի հետ եւ իր փոքրիկ պատմութեանքների փորձում նոյնպէս «գեղանկարչականութիւն» հաղորդել: «Աջում էր. մի էլ էր անցնում մեր փողոցում: Նրա մէջքին մախաւակար խուրճիկ էր դրուած եւ խուրճիկի մէջ կարմիր, մարմնագոյն գազարներ կային»: Սա, անշուշտ, Մարգարէ ծաղկողի նկարած Երուսաղէմի մօտքի մօտ կանգնած աւանակը չէր գեղեւ, իսկ Մարտինի նկարած աւանակները հին գծագրութիւններն էին, մանրանկարների աննիթական գեղեցկութիւնն էին պահպանում:

«Դրող Ռ. Արամեանը հանդէս գալով կերպարուեստին վերաբերող յօդաւածներով, երբեմն անում է ոչ ճիշտ եզրակացութիւններ: Անխտեմ եւ անգուսպ թմբկահարութեամբ մա մեր որոշ երիտասարդ նկարիչների, մասնաւորապէս Մ. Պետրոսեանին, հրում է դէպի կործանարար ճանապարհ», — ժամանակի մամուլը («Արուեստ» ամսաթերթը), այսպէս արձանագրել է ցուցահանդէսի քննարկումը:

1963ին Սայաթ-Նովայի 250ամեակին նուիրուած յօրեյեանական ցուցահանդէսի բացումից մի օր առաջ Մարտինի «Սայաթ-Նովան» հանւեց: Տարօրինակ, գեղեցիկ, պարագոքս ալ այդ ստեղծագործութիւնը, սակայն, հետագայում ցուցադրուեց «Հայ արուեստը Ուրարտուից մինջեւ մեր օրերը» փարիզեան ցուցահանդէսում: Վաթսուական թուականների առաջին կէսին, իսկ դա վերջին երեսնամեակի մէջ արուեստի ամենաշարժուն եւ բուռն ժամանակաշրջանն էր, քննադատութեան սլաքներն ուղղուած էին յատկապէս դէպի Մարտինը: Մամուլը սակայն այդ ամէնը չի պահպանել, արհամարհել է նկարչին. դժուար է ասել՝ արդեօք խաբարիդներն են ղուրս մղել նկարչիների համագումարի գեկուցման Մարտինին վերաբերող հատուածը, թէ՛ գեկուցողն ինքն է յարմար գտել ընթերցողներին ուշադրութիւնը շարել դէպի առանց այն էլ աղմուկ հանած նկարիչը: Այնուամենայնիւ, մեր յիշողութեան մէջ մնում է այն ժամանակների

մթնոլորտը, երբ դեռ ինչ-որ տեղ գոյություն ունեին «մեր թշնամիները»: Իսկ «մեր թշնամիները» ինչպես ասում էր յիշեալ գեկուցման մէջ, — պայ-
ֆարելով մեր արուեստի դէմ, արուեստի մէջցով պայքարում եմ մեր հասա-
րակարգի դէմ»: Վախը դեռուս պաշտօնական արտեստարանութեան գի-
նանոցում էր: Սակայն անաղագարութեան, դեմագոգիայի պայմաններում
անասելի ջերմ մթնոլորտ էր ստեղծուած Երուսաղ Քոչարի, Յարութիւն
Կալենցի, Մինաս Աւետիսեանի, մարտիկ Պետրոսեանի, պաշտօնական
հովանաւորութիւնից զրկուած մի անգործների շուրջը: Գիտնականներ,
գրողներ, նաեւ որոշ նկարիչներ ու արտեստարաններ շրջապատել էին
այս արուեստագետներին եւ ինչպէս լաւագոյն էր հնչում ամբիոններից՝
«արքի ծառայութիւն էին մատուցում, մղղկեցնում, մղում ֆորմալիզմի գիր-
կը»:

Եթէ Քոչարի նման վարպետը ըստ արժանոյնի դեռեւս չէր գնահատ-
ւած, ապա ի՞նչ խօսք կարող էր լինել Մինաս Աւետիսեանի, առաւել եւս
Մարտին Պետրոսեանի նեղակողմից քննադատելու մասին: 1962ին արդէն
ստեղծագործական ասպարէզի արտեստիքներին չեչտակիօրէն փոխա-
րինեցին այլեւս մաշուած կաղապարներ, իսկ երկու տարի յետոյ սկսուեց
ստեղծատուութեան մի շրջան, որն անարժուէց զճացումով: Սակայն այս-
պէս յորժորջուած շրջանում բնականաբար «ճահճացմանը» ենթարկուեցին
միայն նրանք, ովքեր իրենց լաւ էին զգում հանգիստ ու անհոգ այդ մթն-
ոլորտում, իսկ իսկական արուեստագետները շարժման ու բնթացքի մէջ
էին:

Մարտին Պետրոսեանն այդ տարիներին հրաժարելով երբեմնի իր վառ
կոլորիտից «Օբրայավունի, շազանակագոյնի, մոխրագոյնի ազնուական ու
մեղմ նրբերանգներով» (Ռ. Դրամբեան) ստեղծեց իր կարեւոր գեղանկար-
ները՝ «Ընկերուհիներ», «Զոհաբերութիւն», «Տղաներ», «Հեքիաթ», եւ այլն
«Սասունցի Դաիթ» էպոսի, Վարդան Այգեկցու առակների նկարազարդում-
ները: Նկարչական այդպիսի լեզու դուք չէք գտնի եւ ոչ մի տեղ, ինչպէս
ոչ մի տեղ չէք գտնի «Աղուէսագիրքի» լեզուն. «Աղուամ ժողովեաց գձագս իւր
եւ խրատէր զմոսսա եւ ասէր. ով որդեակիք, մի լրբիք, պատրաստ եղերում ի
մարդկանէ՝ յորժամ խոնարհիմ առնու իմ»:

— «Աղուէսագիրք»ը մի աշխարհ է, — ասել է Մարտինը, — մի ուրոյն
թաւտոյն, որտեղ եւ շարունակ նոր կերպարներ եմ գտնում:

Վախճանական թուականները անցան: Եօթնասունականներին բաց-
ւեց Երեւանի ժամանակակից արուեստի թանգարանը, ուր Մարտինի
ընտրի նկարները գրաւեցին պատուաւոր մի տեղ: Ռաֆայէլ Արամեանից,
Հենրիկ Իգիթեանից յետոյ Մարտինի մասին գրեցին շատերը: Հիմա այդ
ամէնը խնամքով պահում են այն ինստիտուտում, որի «պարիսպներից»
ժամանակին ղարոզացաւ ներս մտնել երիտասարդ, տաղանդաւոր նկա-
րիչը: Նրա մասին գրուած յօդուածները նման են սիրոյ խոստովանու-
թեան. «Անկեղծ ասած՝ Մարտին Պետրոսեանի նկարում աղջիկները գեղեցիկ
չէին: Աւելի՛ն. նրանք սգեղ էին ու անբնական: Զկները պարզապէս
նկարուած էին վրձնի մէկ-երկու հարուածով: Դրանք այն կարմրախայտ ու
նարպիկ ձկնիկները չէին, որոնց եւ մանկութեամ տարիներին ծամերով մա-
շում էի Ամբերդի վճիտ ջրերում: Բայց նկարում դրանք զարմանալիօրէն
յում էի Ամբերդի վճիտ ջրերում: Բայց նկարում դրանք զարմանալիօրէն
կենդանի էին, գեղեցիկ ու զարմանալի հմայք ունէին կտաւի սգեղ աղջիկ-



«Անահիտի դիմանկարը», գործ՝ Մարտին Պետրոսեանի:

Յերբ: Եւ ամբողջութեամբ մէջ Մարտին Պետրոսեանի ասելիքը այնչափ անսովոր էր ու գեղեցիկ» (Ա. Աւագեան, «Գարուն», 1979):

Երբ 1983ին Արեւելեան ժողովուրդների արուեստի մոսկովեան թանգարանում բացուեց Մարտինի անհատական ցուցահանդէսը, սպասուում էր առանձնակի ջերմ ընդունելութիւն, յաջողութիւն: Այդ ամէնը եղաւ, միայն թէ՛ ակնկալուածից աւելի պակաս:

— Ցուցահանդէսի առիթով յիշում եմ «Լիտեքստուրմանա Ռոսիայի» հրապարակումը: Ուրիշ ի՞նչ յօդուածներ եղան,— հարցնում եմ նկարչին:

— Ինչ—որ բաներ եղան: Ռուս մի արուեստաբան զրեց, թէ ես խորապէս ազդուած եմ Յակոբ Յակոբեանի նկարներից:

Առհասարակ, օտարները տարօրինակ բաներ են մեր մասին գրում ու մտածում: Զարմանալու փոխարէն՝ մենք պէտք է կարողանանք ըմբռնել նրանց տեսանկիւնը. նրանք պարտաւոր չեն իրերն այնպէս տեսնել, ինչպէս մենք ենք տեսնում: Իսկ յաջողութիւն կամ անյաջողութիւն որեւէ բան չի նշանակում: Աշխարհի ցանկացած թանգարանում ցուցադրէք մեր Թարգմանչաց Աւետարանի հանճարեղ նկարազարդողի մանրանկարները, տեսէք՝ յաջողութիւն կ'ունենայ: Գուցէ նման մի բան տեղի ունենայ, յամենայնդէպս, ոչ այնքան շոնգալից, որպէսզի յիշեցնի մոգեմանիզմի վարպետների ցուցահանդէսների բացման արարողութիւնները:

Հասարակութիւնը ծարաւ է նորոյթի: Իսկ ի՞նչ նոր բան կարող է տալ արեւելեան ժողովուրդների մշակոյթը պրոպագանդող դասական թանգարանը: Անշուշտ կարող է տալ՝ եթէ այցելուն մասնագէտ է:

Հիմա իննսունական թուականներն են: Մարտինն արդէն վաղուց հանրապետութեան վաստակաւոր նկարչի կոչում է ստացել: Այդ կոչումը, ոչ այնքան որոշում է շնորհուողի տաղանդն ու կարողութիւնները, որքան շնորհողի մշակութային, հասարակական, ինտելեկտուալ վիճակը: Այդ կոչումը Երուազ Քոչարն ստացաւ, երբ արդէն վաթսուներեք տարեկան էր, Վահրամ Գալֆէջեանը՝ եօթնասունհինգամեայ հասակում: Յակոբջան Ղարիբջանեանի, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքեանի նման զարմանալի նկարիչներն առհասարակ կոչման չարժանացան: Սակայն Մարտինին զնահատել են 1979ին՝ այսպէս կոչուած «լծացման» տարիներին: Հիմա հասել ենք լուսաւոր մի ժամանակի՝ ըստ հեռատես մարդկանց ըմբռնումի եւ տրամաբանութեան: Ինչո՞ւ այդպիսի մի հասարակ կոչումով չեն վաւերացում Արամիկ Ղարիբեանի, Վրոյր Գալստեանի, Արտաշէս Յունանեանի եւ ուրիշ արժանատիների վաստակը, եթէ հիմա իսկապէս լծացում ու ճահճացում չէ: Ժամանակին այդ կոչմանը չարժանանալու պատճառով Մարտինի անունը դուրս մնաց Հայկական հանրագիտարանից:

Մարտինն ամենեւին չի պարծենում իր «յեղափոխական անցեալով»:

— Անտանելի կեանք եմ ունեցել,— ասում է երբեմն:

Մարդիկ, որոնք լիովին վայելել են երէկուայ բարձր աստիճանակարգի հովանաւորութիւնը, որոնք առհասարակ մշակոյթի ասպարէզում գոյութիւն ունեն երէկուայ քաղաքականութեան ու գեղագիտական ըմբռնումների շնորհիւ, այսօր հեռուստատեսութեամբ այնպիսի գոեհկութեամբ եւ բխումիտ անտեղեկութեամբ են յարձակում խեղճ «սոցիալիստական ռեալիզմի» վրայ, որ ակամայից ցանկութիւն է առաջանում կանգնել նրանց եւ ցնդակոծուող մեթոդի արանքում:

...Մարտինի նկարչությունը հայ մշակույթի նկատելի արժեքներից է: Ի՞նչ է նկարում այսօր. դարձեալ հնամեայ, անըմբռնելի ինքնասույզ, մի վե՛հ Արարատ-Հայաստան:

«Ժամանակակից Հայաստանի ազգային այդ շքեղ տաղամղի» (Ա. Կա-մենսկի), «Բամաստեղծական վառ երեակայութեամբ օժտուած այդ ի ծնէ հե՛րիաբասացի» (Ս. Կապլանվա) պատկերներն այսօր էլ «խորհրդաւոր ու դրամատիկ են» (Ռ. Դրամբեան):

Բայց ահա Մոսկուայում լոյս է տեսել Նոնա Ստեփանեանի «Հայաստանի արուեստը» մեծ ու պատկերեզարդ զիրքը եւ հեղինակը Մարտինի մասին դատում է «արեւմտեան ազդեցութեան» երբեմնի վարկածով: Ահա Մ. Պետրոսեանին բնութագրող միակ նախադասութիւնը հսկայ հատորի մէջ. «Ա. Խաթամաշեանի, Մ. Պետրոսեանի մօտ կարելի է տեսնել ժամանակակից եւրոպացի վարպետների փորձի իրացման ընթացքը»: Նախ՝ մեր դարը վերջանում է արդէն, իսկ դարասկզբի վարպետները դեռեւս ժամանակակից են համարում: Իսկ իսկական ժամանակակից եւրոպացի վարպետները Ուալթրամաշեանին, առաւել եւս՝ Պետրոսեանին զուցէ՝ ամենեւին չեն հետաքրքրում: Երկրորդ՝ Մարտինն ամենեւին «ժամանակակից» չէ այս արտայայտութեան արուեստաբանական իմաստով եւ նրա նկարների հմայքը, զաղտնիքը, խորհրդաւորութիւնը այդ անհասկանալի «հեռութեան» մէջ է:


Պիտի կարողանա՞նք կարդալ այդ պատկերները:

Արդեօք պիտի փորձենք երբեւէ առանց եւրոպական լուսաւորութիւնից կտրուելու, ամէն ինչի, յամենայնդէպս, միայն Արեւմուտքից ընայել, ինչպէս վաղուց անում են Եւրոպայից հեռու գտնուող զանազան երկրների «համաշխարհային արուեստի առաջընթացին» ոչ պակաս հետեւող տարբեր մասնագէտները:


Գնալով՝ արուեստաբանութեան խնդիրները պարզուելու փոխարէն մթաղնում են կարծես, շատանում եւ ահագնանում:

Իսկ Մարտին Պետրոսեանին, որ նախանձելիօրէն հաւասարակշռուած վիճակի մէջ է , բոլորովին ուրիշ հարցեր են անհանգստացնում...

ՄԱՐՏԻՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



«Համագիցիա», 1965, գործ՝ Մարտին Պետրոսեանի:



Եւ նմոյշ մը՝ գեղանկարչին հեղիաքային խղանկարներէն:

Վ. ՂԱԶԱՐԵԱՆ



Բանաստեղծ, պատմափառագիր, թատերագիր և արուեստաբան Վիգեն Ղազարեան ծնած է 1943ին, Երևան: Նախնական կրթությունը ստանալ է հոր, կը մասնագիտանայ Գեղանկարչության մէջ: Սարգիս Պիծակ, Սիւմետային մանրանկարը կիլիկիայում (XIII դ. կես-XIV դ. սկիզբ)» և «Մատենադարան» («Ներկանկարից՝ Ս. Մանուկեան») մենագրությունները իրեն կ'ապահովեն արուեստաբանի համբաւ: 1992ին, Մոսկուայի մէջ կը պաշտպանէ «Ստրանների մեկնութիւնը» աշխատասիրությունը և կ'արժանանայ արուեստաբանութեան դոկտորի տիտղոսին:

Հայաստանի Գիտություններու Ակադեմիայի արուեստի հիմնարկին մէջ, Վ. Ղազարեան կը տանի արուեստագիտական աշխատանքներ: Իր մասնագիտութեան զուգահեռ՝ առ նաեւ կը տոգորագրէ ազատ բանաստեղծութիւններ, պատմութեան ու թատերախաղեր, որոնցմէ ոմանք լոյս տեսած են «Գարուն»ի, «Լայմարեան Քնար»ի և հայրենի գրական մամուլի էջերուն:

Վիգեն Ղազարեան նաեւ կը զբաղի թարգմանութեամբ: Գերմաներէնէ հայերէնի վերածած է Կէօթէի, Թրակի, իսկ անգլերէնէ՝ Ուալտի, Քամինկի, Եիթցի, Օտրի, Քարլոսի և այլ բանաստեղծներու կարգ մը բնորոշ քերթուածները: Գրաբարէ ուստերէնի թարգմանած է միջնադարեան «Ստրաններու մեկնութիւնը», իսկ արեւելահայերէնի վերածած՝ Ներսէս Ենոքայի «Յիսուսի Որդի», զոր լոյս ընծայեց «Գարուն»ի «Ապրիլ» մատենաշարը առանձին հատորով:

Մ
Ե
Ր
Ո
Ւ
Վ
Ը

Երեւանի մէջ ապրած ամէն մի սերունդ ունի իր Երեւանը: Եւ ամէն մի մարդ, երիտասարդ թէ ծեր, ունի իր Երեւանը, Երեւանի իր մտապատկերն ու ընկալումը: Իսկ եթէ նա նաեւ բանաստեղծ է, ուրեմն բանաստեղծորէն վաւերական ու վաւերականօրէն բանաստեղծական է այդ ընկալումը...

Վիգեն Ղազարեանի «Ծերուկը» ստեղծագործութիւնը կարելի է չափածոյ նովել կոչել այն մեզ տալու մէջ 50ական թուականները: Մանկութեան յուշերի մէջ ամուր ըստուածք տուած քաղաքային առօրեայ, սովորական կեանքի, կենցաղի, միջավայրի հասարակ, անունին իրողութիւնները, Երեւանեան խօսակցական լեզուի տարրերը, փողոցային ժարգոնը, բարքերը դառնում են բանաստեղծական ընկալման ու պատկերի եզրագծեր: Սի տեսակ բալլարային, մտերմական ջունջ կայ այս տեղական հիմերեանեան «ուստայիշեան պատմութեան» մէջ: Զաղաքային բարքերի, փողոցի կեանքի ֆուկորային-բանահիսաական պատկերների առկայությունը զայն է իրական կեանքից, իրականութեան բանաստեղծական կերպարիտիւններից...

Դէ ինչէ՛, Եթէ այս գործը տպագրուի, ուրեմն քաղի ճանապարհ ու երկար կեանք «Ծերուկ»ին:

ԵՐՈՒԻ ՂԱԶԱՐԵԱՆ

Ի՞նչ անենք, որ աչքերն են պալիանի,
 Եւ ճակատը կմնոտ, գամկը՝ ճաղատ,
 Ի՞նչ անէք, որ արցունքները աղի
 Վերնաշապիկն են իր թրջում կաթ-կաթ.
 Ի՞նչ անենք, որ ճպտոտ շորում է նա,
 Երբ անցնում են կողմից հարս ու տիկին,
 Եւ օղովցած զառ է զցում հիմա
 Ներողամիտ եղէք դուք ծերուկին:

Մ'սի պատասա՞ծի մօտ մայիսմէկեան տօնին
 Շէկ Ալէքն է կանգնել իր սեւ ապարատով:
 «Նկարուեցէք, խնդրեմ, մոմլաթին դրոշմուած կարապետի լնի,
 մայրմար պալատների, սօսիների ֆոնին,
 Ահա ձեզ չեղքէ՞ցկայ, պատրոշնտաշ եւ խանչալ, ռսկեղրուագ կոթով:
 Հապա, տղա՛ս, նայի՛ր ապարատի ծակին,
 Հպարտ նայի՛ր, ալյոպէ՛ս, աչքերդ չթարթես»:
 Մի րոպէից լաւ-վատ նկարն է ստանում պատանի եղուարդցին,
 Շէկ Ալէքի ստաշ պատրաստ հերթ են կանգնել կլիենտներն արդէն:

Մ'սի պատասա՞ծի եւ շուկայի վերելում
 Մի պահ սառածնակն է աղմկում բառաբեւ.
 «Աէրոպլան, թուղթ գցիր, աէրոպլան, թուղթ գցիր», —
 թռչկոտում են, հետում
 Անւ, կարմիր, սրճագոյն թաշէ կոստիւմներով կամ ցնցոտի հագած
 մանչուկները թեթեւ:
 Երկու օրիորդ, հագած կարկասաւոր շորքառ,
 Բալետի մէջ ինչպէս, սահում են աւֆալտով.
 Ծերուկն է միմնջում. «Ազի՛կ ջան, արեւս ատ»,
 Պրոտէջները խփում ռազմի մարշի տակտով:
 Արեւածաղիկ է ծախում կինն իր կողմին
 Եւ ամուսնու թեւն է բաշում. «Ձէ՛նր, քեռիկա՛կ»:
 «Սու՛ս», — սպառնազին ծերուկն անմատ ձեռքով ահա
 բարձրացնում է կոպալն
 Ու վար դնում. ներէ՛ք դուք հարբած ծերուկին:

Զուգունը, Շլիկը, Բոյլովը եւ Կոլէն
 Ամբոխի մէջ անվերջ կորցրնում են միմյանց ու գտնում վերստին.
 «Տղե՛րք, սեմուշկա է ծախում մէքս, հրէ՛մ»:
 Ու Շլիկն ետեւից տանում է տղերքին:
 Ժպտում են ծերուկին աչքերը պողպատեայ.
 «Այդի՛, գրպանները լցրու երեխէ՛ք»:
 Եւ սերմերը տուփ հատիկներ են օսկեայ
 Նրանց զրպաններում տօնին մայիսմէկի:

Ի՞նչ անենք, որ արդէն զինուց խելքը թուրած
 Ծերուկն է օրօրում պրոտէջների վրայ,

★ ★ ★

Տարիներ անց պողպատե աչքերից
 Զղբում, թախիծ, լուսինն է ծորում:
 Իսկ աղջիկը ամոթուն է նորից,
 Շղթմ էլ չի փնտրում նրան մութ փռվածում:
 Լալ Համոյի կինը դարձրին նրան,
 Մայրը սեմուշկա է ծախում կրկին,
 Պրտակներն են դրած դեմը գրամ,
 Մեր թախտին շոյում է թռնիկին:
 Արդեն հեռուստացոյց ունեն նրան
 (Առաջինը գուցե յետնաբակում այդ խոյ):
 Լալ Համոն է հրճում եւ կողերը կնոջ խուտուտ ապիս արագ:
 Յետնաբակից այն կողմ աշխարհն է բարձրանում
 արհեստական-առնայ:

Շողշողում են աչքերը պափանի,
 Ժակատն է կնճռոտում զանգին ճաղատ,
 Առաջուայ պէս արցունքները աղի
 Օծում են թշուառություն եւ բախտ:
 Դասախոս իշխանի հետ գառ կը գցի,
 Կը շողի, երբ անցնեն հարս ու տիկին,
 Լալ փեսի հետ մէկ-մէկ էլ կը կոնծի:
 Ներողամիտ եղէ՞ր դու՞ ծերուկին:
 Եւ քերթողին մերողամիտ եղէ՞ր,
 Եթէ փորձի որսալ ձկներ կեանքի ծովում
 Եւ խուտուտ տալ ձեր կողերը մէկ-մէկ:
 Միշտ չէ, որ գրգիռը հանելի է թում:

Անպատմեր, 1976

ՎԻԳԵՆ ՂԱՋԱՐԵԱՆ



ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃԵԱՆ

Գրաքննադատ եւ թարգմանիչ Պետրոս Դեմիրճեան ծնած է 30 Մայիս 1850ին, Երեւան: 1872ին կ'աւարտէ Երեւանի Համալսարանի բանասիրական

բաժանի հայոց լեզուի եւ գրականությունիւ թափնը: 1881ին, կը պաշտպանէ «60ական թուականների մորսերնդի սովետական արձակը» խորագրեալ աւարտաճառը եւ կը ստանայ բանասիրական գիտություններու թիկնածուի աստիճան: 1882ին կ'աւարտէ լրագրությունիւ թափնը:

1872ին, Պետրոս Դեմիրճեան մաս կը կազմէ «Գրական թերթ»ի խմբագրությունիւ, նախ՝ իբրեւ տեսական-քննադատական թափնի գրական աշխատող, ապա 1879էն սկսեալ՝ նոյն թափնի վարիչ:

Հայաստանի եւ նախապէս խորհրդային զանազան հանրապետություններու գրական մամուլի էջերուն Պ. Դեմիրճեան ստորագրած է զխառըրար ժամանակակից հայ գրականությունիւ նուիրում յօգուածներ եւ ուսումնասիրություններ: Կատարած է նաեւ թարգմանական աշխատանքներ, ինչպէս՝ Է. Գուրգաս Միմլայտիսի «Աիրտ-գանգի կանչը» ակնարկն ու ուկրաինական պատմութեան, որոնք տեղ գտած են համապատասխան ժողովածուներու մէջ:

70ական թուականներին արդէմ զգալիօրէն մեծցաւ գրականութեան շնչառութիւնը, օրակարգի հարց դարձան մարդկային հոգու եւ ժամանակների ոգու պրոբլեմները, հաստատուեց սոցիալիստական ռեալիզմի մեթոտի ամենաէական մեթոտներից մէկը՝ ոճերի, ձեւերի օւ թեմաների բազմազանութիւնը:

60-70ական թուականների հայ գրականութեան, մասնաւորապէս արձակի ամենաբնորոշ երեւոյթներից մէկը գեղարուեստական մտածողութեան ներքին բազմաշերտութիւնն է, որի արմատները պէտք է փնտռել ժողովրդի ազգային իմբնագիտակցութեան էվոլյուցիայի մէջ («Սոցիալական գրականութիւն», 1978, թիւ 11):

* * *

...Յայտնի ճշմարտութիւն է՝ որակամն արդէմ իսկ պատկանում է գրականութեանը, իսկ բացասականի մասին պէտք է ամպայման խօսիլ՝ այն վերացնելու, շտկելու ազնիւ մտահոգութեամբ, մեր գեղարուեստական արձակի վաղուայ օրուայ մտահոգութեամբ: Եւ ապա՝ աւելին պահանջում են իսկապէս շնորհալիներից, նրանցից, ովքեր ի վիճակի են եւ պէտք է աշխատեն աւելի լաւ, աւելի արդիւնաւէտ («Գաբուն», 1986, թիւ 4):

Պետրոս Դեմիրճեան

Պ. ԴԵՄԻՐՃԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՈԳՈՒ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Քիչ է ասել, թէ հայ գրականությունը դարերի պատմություն ունի. նրա սկիզբը թաղուած է առեղծոածային ժամանակների մշուշի մէջ: Մինչեւ օրս էլ մասնագէտները բանավիճում են այն հարցի շուրջ, թէ ճիշդ դարասկզբին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի գիտից առաջ գոյություն ունեցե՞լ է, արդեօք, հայ գրաւոր մշակոյթ: Առարկայական ապացոյցներ կարծես թէ չկան, բայց կայ մի մեծ ու հիմնաւոր փաստարկ այդ հարցադրմանը դրական պատասխան տալու համար. գրերի գիտից անմիջապէս յետոյ ստեղծուած հայ գրաւոր մշակոյթի՝ ինքնուրոյն եւ թարգմանական գրականութեան, լեզուական, գիտական ու գեղարուեստական բարձրագոյն մակարդակը: Բաւական է յիշել միայն Աստուածաշնչի հայերէն թարգմանությունը: Եւ ապա՝ նոյն ճիշդ դարում գրուած հայոց պատմություններում, եւ յատկապէս պատմահայր Մովսէս Խորենացու «Պատմութիւն հայոց» աշխատութեան մէջ բերուած հայոց հին մշակոյթի նմուշների (առասպելներ, ասանդակներ, բանաստեղծական պատառիկներ, եւայլն) գեղարուեստական կատարեալ մշակութուններ: Այն աստիճան, որ դրանք հետագայում բազմիցս հիմք են հանդիսացել գեղարուեստական նոր մշակումների, բանաստեղծական նոր ներշնչումների համար: Ասենք, հայ գրաւոր մշակոյթի սկզբնաւորման պրոբլեմի առեղծոածայնությունը, թերեւս, նաեւ բնական թուայ, եթէ նկատի ունենանք, որ խորհրդային պատմաբանութեան կողմից արհեստականօրէն կրճատուել է նաեւ հայ ժողովրդի գոյացման պատմութիւնն ընդհանրապէս՝ նրանից դուրս թողնելով Աբարատեան (Ուրարտու) թագաւորութեան շրջանը՝ բնականաբար իր հարուստ մշակոյթի հետ միասին:

Ինչեւէ, այս խնդիրները, այսօրուայ վերականգնումների կոնստեւտում, կարծում եմ, կը գտնեն իրենց ճիշտ պատասխաններն ու լուծումները, իսկ մեզ տուեալ ղեւքում հետաքրքրում է մի շատ կարեւոր պրոբլեմ՝ ո՞րն է եղել հայ դրաւոր մշակոյթի էական, հիմնական գիծը, նրա գլխաւոր կողմնորոշումը մտածողութեան, արուեստի, հոգեւոր կերպարի ձեւաւորման մէջ, քանի որ ժողովրդի այսօրուայ գեղարուեստական զարգացման ճիշտ ուղիները գտնելու, սեփական ինքնատիպութիւնը չկորցնելու համար անհրաժեշտ է չկտրուել նրա հոգեւոր կեանքի դարաւոր զարկերակից:

Մշակոյթի, գրականութեան պատմութեան մէջ եղել են եւ լինում են վերելքներ եւ անկումներ, եւ դա բնական է, դա հենց ինքը՝ յարաշարժ, յարափոփոխ կեանքն է, նրա բարախը: Սակայն ինչպէս անհատ մարդը, ժողովուրդը եւս ամէն մի խոտորումից, անկումից յետոյ պիտի կարողանայ վերագտնել իրեն, վերադառնալ իր արմատներին, ինքնութեանը, սեփական անկրկնելիութեանը: Այլապէս կորած է նա իբրեւ Ֆենոմէն, եւ դատապարտուած պատմութեան ու ճակատագրի կողմից:

Հայ ժողովրդի հետ միասին պատմական ճանապարհ ելած շատ ժողովուրդներ այսօր անհետացել են պատմութեան թատերաբեմից, իսկ նա՝ չնայած բազում արհաւիրքներին, պահպանել է իրեն ու շարունակում է իր տեղը զբաղեցնել աշխարհի կուլտուրական ազգերի շարքում: Որովհետեւ նրա ոգեկան եւ հոգեկան կորովը աւելին է եղել, քան այն նախնիները, որ թափուել են նրա գլխին դարաւոր ճանապարհի տարբեր հատուածներում: Հայը ստիպուած է եղել թողնել իր տունը, ունեցուածքը, հողը, բայց անպայման տարել է իր հետ հացն ու գիրքը, որոնք ե՛ւ ֆիզիքական, ե՛ւ հոգեւոր սնունդ են մատակարարել նրան զիմանալու, գոյատեւելու համար: Եւ բոլոր գրկանքներն ու ողբերգութիւնները միայն աւելի են ամրացրել, բիրենդացրել նրա հոգին, զօրացրել լոյսի, գեղեցկութեան, բարու եւ ճշմարտի ծարաւը:

Հայ ժողովրդի հոգեկան նկարագրի ձեւաւորման մէջ էական գեր է խաղացել այն հանգամանքը, որ նրա պատմական հայրենիքը բնկած է եղել Ասիայի ու Եւրոպայի արանքում, եւ նա, կարծես, դատապարտուած է եղել մշտապէս ընտրութիւն կատարելու այդ երկու կողմնորոշումների միջեւ: Կողմնորոշում սա գրեթէ ճակատագրական բառ է հայի համար: Կողմնորոշում գէպի Պարսկաստանը, թէ Յունաստանը կամ Բիւզանդիան, գէպի Ռուսաստանը, Թուրքիան, թէ Անգլիան կամ Ամերիկան: Սա մշտապէս զբաղեցրել է հայ գրողի, փիլիսոփայի, քաղաքագէտի, պարզապէս հայ աշխատաւոր մարդու միտքը: Եւ դարձեալ գլխաւորը միայն քաղաքական կամ տնտեսական հայեցակէտերը չէին, այլեւ հոգեւոր-մշակութայինը՝ ո՞ր մտածողութիւնը, հոգեկան ո՞ր կերտուածքը, մշակոյթի ո՞ր մոդելն է մեզ աւելի մօտ ու հարազատ, ո՞րն է նպաստելու մեր՝ զուտ հայկական ինքնատիպ հոգեկան կերպարի ո՛չ թէ զիմացրկմանը, այլ՝ խորացմանը, հաստատմանը:

Ձափազանց կարեւոր այս հարցի պատասխանն է, ահա, որ մենք որոնում ու գտնում ենք մեր գրականութեան դարաւոր պատմութեան մէջ:

Ուրեմն, հարց տանք մեզ՝ պատահակա՞ն է, արդեօք, որ գեոեւս հինգերորդ դարում պատմահայր Խորենացին, հրաժարուելով պարսկական

«փուլ ու անհեթեթ», «անմշակ եւ մանաւանդ անիմաստ առասպելներին» նշանակութիւն տալուց, հակում էր դէպի սթափ, խորիմաստ, ռեալիստական մտածողութիւնը, դէպի «ոյնների պերճ ու ողորկ, պատճառաբանուած առասպելները, որոնք այլաբանօրէն իրենց մէջ թաքցնում են ճշմարիտ իրողութիւններ»։ Միջնադարու Նարեկացին Աստծուն ուղղած իր հոգու խօսքը թրծում էր բանականութեան հրաշունչ հնոցում, իր սքանչելի տաղերով նշանաւորում վերածննդի սկզբնաւորումը հայ եւ համաշխարհային գեղարուեստական մտքի պատմութեան մէջ։ Պատահակա՞ն է, որ հայոց վանքերին ու խաչքարերին բնորոշ են սեղմ, նուրբ, փոքր չափերն ու զուսպ ոճը. նոյնը կարելի է ասել նաեւ հայկական ինքնատիպ մանրաներկարչութեան մասին. ոչ մի աւելորդ գիծ, երանգ, դրուագ ու դետալ՝ ամէն բան խստօրէն ենթարկուած է գեղարուեստական ներդաշնակութեան օրէնքներին, զործել է մեծ ասելքը փոքր ձեւի մէջ առաւելագոյնս խտացւած արտայայտելու ազգային չափանիշը։ Եւ մի՞թէ նոյն այդ ոճը չի առաջնորդել մեր միջնադարեան բանաստեղծներին՝ կերտելու իրենց գողտրիկ մանրաքանդակները, յատկապէս Նահապետ Քուչակի սքանչելի հայրենիները, որոնց մասին շատ բարձր են արտայայտուել Բայրոնը, Բրիւսովը, հայ եւ օտար ազգի շատ այլ մեծեր։ Կամ վերցնենք երաժշտութիւնը՝ մի՞թէ պատահականութիւն էր, որ հանճարեղ Կոմիտասը արդէն մեր դարակիցներին մեծ ջանքեր էր թափում հայ ազգային երաժշտութիւնը արեւելեան պաճուճանքներից մաքրելու համար։

Մեր դիտարկած պրոբլեմի տեսանկիւնից յատկապէս ուսանելի է 19րդ դարի կէսերի եւ 20րդ դարասկզբի հայ գրական շարժումների պատմութիւնը։ Ազգային գոյութեան եւ ինքնութեան համար պայքարը մղում էր երկու ճակատում՝ մէկ որպէս ազգային-ազատագրական գաղափարաբանութեան սերմանում, որն իր արտայայտութիւնը գտաւ Ռաչատուր Աբովեանի, Միքայէլ Նալբանդեանի, Մկրտիչ Պէշիկթաշեանի, Բաքիւ եւ ուրիշների արձակ եւ չափածոյ երկերում, մէկ որպէս աշխարհի հոգեւոր-գեղարուեստական փորձին կապուելու, կուլտուրայի համաշխարհային ընթացքից յետ չմնալու միտում, որն արտայայտուեց հայկական ռոմանտիզմի, ռեալիզմի, ապա նաեւ սիմվոլիզմի, նատուրալիզմի ու եւրոպական գրական այլ ուղղութիւնների եւ հոսանքների զարգացման փաստով։ Այս տեսակէտից զարուակգրին չափազանց մեծ եղաւ արեւմտահայ պոեզիայի՝ Միսաք Մեծարենցի, Դանիէլ Վարուժանի, Սիւսաննայի եւ միւսների ստեղծագործութեան գերը, որն հայ բանաստեղծութիւնը դարձեալ կապեց մի կողմից Նարեկացու-Քուչակի ազգային ոսկէ երակին, միւս կողմից՝ արեւմտեան պոեզիայի նորագոյն ուղղութիւններին։ Արեւելահայ բանաստեղծութեան մէջ նոյն առաքելութիւնն ստանձնեցին Վահան Տէրեանն ու Եղիշէ Զարեկը։ Մասնաւորապէս Տէրեանը հայ ժողովրդի կուլտուրական զարգացման էական պայմանն էր համարում նրա «եւրոպականացումը»։

Այս ամէնի ֆոնի վրայ, անշուշտ, կային նաեւ համազգային մեծութիւններ, որոնք իրենց մէջ խտացնում էին, թուում է, անհնարինը՝ Արեւելքի եւ Արեւմուտքի բազմահարուստ մշակութային-հոգեւոր արժէքների հրաշալի սինթէզը, որն արդէն գրեթէ հանճարեղ եւ իդէալական ներդաշնակութիւն էր ստեղծում ընդհանրապէս հայ ժողովրդի հոգեւոր զարգաց-

ման մէջ. նրանք էին Յովհաննէս Թումանեանը եւ Աւետիք Խաչակեանը՝ գեղարուտական մտքի երկու իսկական հսկաներ:

Դարասկիզը, սակայն, նաեւ ողբերգական եղաւ հայ ժողովրդի համար: 1915 թուականի Հայոց Մեծ Եղեռնը Օսմանեան թուրքիայի կողմից, 1918-23 թուականների ողբերգական իրադարձութիւնները Անդրկովկասում, որի հետեւանքով, բացի մարդկային միլիոնաւոր զոհերից, հայ ժողովուրդը կորցրեց նաեւ իր պատմական հայրենիքի տարածքները՝ Արեւմտեան Հայաստանը, Ղարաբաղն ու Նախիջևանը, ինչպէս նաեւ 1918 թ. Մայիսին Մարզարապատի ու Ապարանի հերոսամարտերով նուաճած ու հաստատած ազգային անկախ պետականութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը, նոր ձեւով տնօրինեցին ժողովրդի ինչպէս քաղաքական, սոցիալ-տնտեսական, այնպէս էլ հոգեւոր զարգացման խնդիրները: Խորհրդային տասնամեակներին՝ մասնաւորապէս 30-ական թուականների սկզբներին, նախ ցլխատուեց հայ մտաւորականութիւնը, այդ թուականում հայ արձակի ու պոեզիայի այնպիսի տիտաններ, ինչպէս Ակսել Բակունցն ու Եղիշէ Չարենցը, արգելուեց, ուրեմն եւ՝ հայոց գեղարուտական մշակութի բնականոն զարգացման ընթացքից դուրս մղուեց սփիւռքահայ գրականութիւնն ու մշակոյթը՝ իր բոլոր կարկառուն ներկայացուցիչներով, ստեղծուեց փաստօրէն արհեստական ամայութեան մէկ-երկու տասնամեակ տեւած մի շրջան, որը չէր կարող իր ծանր ազդեցութիւնը չթողնել հայ գեղարուտական մտքի հետագայ ընթացքի վրայ: Միայն մի պահ՝ Երկրորդ Համաշխարհային պատերազմի շրջանում, կարծես, կիսով չափ բացուեց կայսրութեան կաթնայի կափարիչը, անմիջապէս դարձեալ դուրս լողացին ազգային մտածողութեան եւ հոգեբանութեան խեղդուած ծիրերը՝ Դերենիկ Դեմիրճեանի «Վարդամանկ», Ստեփան Զօրեանի «Պապ թագաւոր» պատմավեպերով, Նայիրի Զարեանի «Արա Գեղեցիկ» պատմական դրամայով... Սակայն դա զեռեւս գրական հին սերունդն էր, գրականութեան վերջին մոհիկանները, որոնք, թերեւս, հերոսական ջանքեր էին գործադրում ժողովրդի հոգեւոր անկումը կասեցնելու համար: Նորերին վիճակուած էր սկսել զրեթէ զրոյից: Ստալինեան բռնատիրութեան, ապա նաեւ տոտալիտար ռեժիմի ճիրանների մէջ գրողները գրկուած էին իրենց ազգային նուիրական զգացմունքներն ու խոհերը բացայայտօրէն արտայայտելու հնարաւորութիւնից: Եկաւ մի շրջան, երբ զարնան, սիրոյ, քնարական ապրումների մասին գրելը հաւասար էր զրեթէ հերոսութեան: Այդպէս, 50-ական թուականներին աչքի ընկան Յովհաննէս Եփրազի, Գէորգ Էմինի, Սիրվա Կապուտիկեանի, Վահագն Դաւթեանի, Պարոյր Սեւակի, նրանց միւս սերնդակիցների զարնանաբոյր ստեղծագործութիւնները: Նրանցից իւրաքանչիւրը հետագայ տասնամեակներին զարգացրեց իր թեմաներն ու անհատական ոճը, սակայն յետպատերազմեան սերնդի պոեզիայի ու արձակի մէջ հայ ազգային ողու արտացոլումը հանդիսացող զրականութեան վերոյիշեալ աւանդների ամէնից տաղանդաւոր շարունակողները եղան Պարոյր Սեւակն ու Հրանտ Մաթեւոսեանը: Նրանք էին, որ իրենց երկերում խորքով ու մեծ արուեստով մարմնաւորեցին հոգեկան անկախութեան, ազգային արժանապատուութեան, սեփական հայրենիքում իսկական տէր լինելու նուիրական գաղափարները: Վերջին տարիներում Հայաստանում եւ Արցախում տեղի ունեցող ազգային-ապստաղրական

շարժումները ցոյց տուցին նրանց ստեղծագործութեան եւ ընդհանրապէս հայոց նախընթաց ճշմարիտ գրականութեան մէջ արծարծուած, մշակուած հայրենասիրական գաղափարների ազդեցութեան ուժը ժողովրդի ազգային ինքնագիտակցութեան արթնացման վրայ:

Այսօր Հայաստանում ստեղծագործում է բանաստեղծների ու արձակագիրների մի քանի սերունդ: Նրանց մէջ կան ամենատարբեր տաղանդի ու ձիրքի տէր անհատականութիւններ: Տիրում է ոճական, մտածողական բազմազանութիւն: Սակայն, ի վերջոյ, ըստ իս, ժամանակի մէջ ճշմարիտ ուղի են բացելու միայն նրանք, ովքեր ուժ կը գտնեն իրենց մէջ չտրուելու դասական մեծերի տաղանդաւոր կրկնողները լինելու գայթակղութեանը, յաղթահարելու էպիկոնութեան վտանգաւոր խտիճերը, չխորչելու համաշխարհային մշակոյթի լաւագոյն աւանդոյթների ստեղծագործական իւրացումից եւ ճիշտ կողմնորոշուելու հայ ազգային մտածողութեան, հոգեւոր կերպարի զարգացման մայրուղու ընտրութեան մէջ, որն, ինչպէս նշեցինք, սկիզբ է առնում դեռեւս պատմահայր Խորենացուց: Քանզի այդ դէպքում է միայն, որ այսօր եւս մենք իրաւունք կ'ունենանք, ինչպէս տասնհինգ դար առաջ, Խորենացու նման հպարտօրէն արձանագրելու. «Թէպէտ մենք փոքր ածու ենք եւ թուով շատ սահմանափակ... բայց եւ այնպէս մեր երկրումն էլ գրելու եւ յիշատակելու արժանի շատ սխրագործութիւններ են կատարուել»:

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃԵԱՆ



ԱՆԱՀԻՏ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Բանաստեղծ, արձակագիր և լրագրող Անահիտ Պարսամեան ծնած է 8 Օգոստոսի 1947ին, Երևան: 1969ին կ'աւարտէ Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքի հայոց լեզուի և գրականության ճիւղը: 1970-79 մաս կը կազմէ «Հայրենիքի ծայլ» շաբաթաթերթի խմբագրությունը: 1971-81 կ'ուսանի և կ'աւարտէ Մոսկուայի գրողներու միության Մ. Կորբիի անուան գրականության հիմնարկի բարձրագույն դասընթացները: Կը վերադառնայ Երևան և մաս կը կազմէ «Գրական թերթ»ի խմբագրությունը, լաշորդարար վարելով թարգմանությունը, հրապարակախօսությունը, ակնարկի և այլ բաժիններու պատասխանատու խմբագրի պաշտօնը:

Ա. Պարսամեան հրատարակած է չորս ֆեթոդագիրք՝ «Փիւնիկ», «Նուստովանանք», «Օրուայ հեփաթներ», «Ինչ էն խօսում կենասները» և մանկական հեքիաթներու և պատմութեան երկու գրքով՝ «Արմայի դուստրը» և «Երկնագոյն ավախ»:

Ա. Պարսամեանի բանաստեղծություններէն ոմանք թարգմանուած են ռուսերէնի, ֆրանսերէնի, անգլերէնի, էստոներէնի, վրացերէնի և այլ լեզուներու:

Դէ՛ս ե՛ս Կարմիր կերպ,
Անգին լուսարայ,
Դէ՛ս, աստ ան, քեզի ինչ,
Պարսամեան բաց...

Դէ՛ս, աստ ան, ե՛ս փայ,
Երբեք չի՛մ լայն,
Դիմ ևս ե՛ս փայ կայր, արջ,
Զարկի, անարգ...

Դիմ ևս ե՛ս անարգ,
Պարսամեան կայր,
Դիմ ևս ե՛ս անարգ,
Դիմ ևս ե՛ս անարգ...

1992.

Անահիտ Պարսամեան

Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

☆ ☆ ☆

Մենք մեր հոգիսն՝ զույսը կախ,
Մենք՝ մեր հերկը ու սերմնացում,
Բայց այսօրսն էլ համարուց շատ,
Բախտի հեղձամբ ու նեղութիւն...

Առանց այն էլ՝ շատ ցաւ տեսած,
Ջարդ ու անք, մահ ու արիւն,
Այս ամէնը Բեզ Բիշ քուսն,
Մեր արիւնն եւ էլի որում...

Բորենիներ, «ուկերերան»,
Տե՛ս, մեր օրհա՛սն են որոնում,
Որտե՛ղ եւ դու , բայց եթէ կա՛ն,
Դաւանափոխ արդարութիւն...

ՄՈՒՍԱՔԵՌՑՈՒ ԶԱՒԱԿ ԽԱԶԻԿ ԶԱՔԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ճակտիդ վրայ այդ վերքը բաց,
Թեւո՛ղ կտորած ու սիրտդ՝ սեւ,
Ո՛րք եւ զնում այդպէս ցաւած,
Ո՛րք, Մուսա լեռ, ակս, Մուսա լեռ:

Եւ պապերիդ օրհնամբն առած,
Այս խռովեալ օրերից վեր,
Ո՛րք եւ զնում՝ սոված-ծարաւ,
Այդպէ՛ս ջահել, այդօր՛ն ջահել...
Ա՛խ Մուսա լեռ...

Ցաւերի մէջ այս վարուվեր,
 Մէկը ճարեր ջո՛ղս կեանարար,
 Կեանք առնէիր, խաչիկ, մորէն,
 Կիսատ կեանքիդ ընծի՛ւղ գէթ տար,
 Նոր ելնէիր ճամբան այդ վեհ,
 Նոր ելնէիր քո Գողգոթան...

...Շալակդ առած մեր վիշտը բեռ,
 Ո՛ր ես գնում զարկուած, տղա՛ս,
 Ա՛խ, Մուսա լեռ...

16-ԻՆ ՅՈՒՆՈՒԱՐ, 1990

Յաւ է, տառապանք անիմանալի,
 Մեր ճիշտը «սուտ» է, նրանց սուտն՝ «իրաւ»,
 Բայց քարը սեղմեմ ընդվզող սրտիս,
 Էլի՛ դիմանամ, էլի՛ դիմանամ:

Զէ, չհեծեծամք, հեծեծամքն է սուգ,
 Թօթափե՛նք նախիւր այս քառաշղթան,
 Փակենք արցունքի ակը մեր աչքում,
 Բռնեցի՛ւնք, ելնե՛նք, դառած ամուր պատ:

Զեռքը չբռնենք, այլ խփե՛նք շարին,
 Արնածաքաւին խեղդենք ի՛ր արեամբ,
 Զէ՛, սա վերջը չէ, ժողովուրդ իմ հին,
 Պիտի դիմանամք, պիտի դիմանանք...

ԵՐԳ

Զէ, արցունքս չէ, յայսս է ծորում,
 Կլանեց նրան սեւահողդ տաք,
 Ես ես քայլեցի քո խոր հերկերում,
 Երկի՛ր իմ, հո՛ղ իմ, միշտ ծառաւ, ծառաւ...

Սիրոյ մի ծաղիկ չիջաւ իմ ճակտին,
 Լոտ տրորուեցին նրանք ոտքիս տակ,

Եւ ես Բայեցի ցրտին ու տուպի,
Ճամբայ իմ, սէր իմ, միշտ յարաւ, ծարաւ...

Ճամապահները բարի են ու հին,
Քանիսի՜ն բերին, քանիսի՜ն տարան,
Գնում եմ ես էլ, օրհնանք՝ բո հացին,
Ենձնի իմ, մահ իմ, միշտ ծալաւ, ծարաւ...

Էլի...

Էլի՛, էլի՛ կը կարկատեմ ամբերութիւնս,
Էլի՛ կը տոկամ,
Զտոկալու իրաւունք չունեմ:
Էլի կ'անցնեմ հպարտ՝
Ենկերներին եւ միւսներին մօտով:
Էլի ծնրադիր եմ ձեզ
Խաչքա՛ր իմ...
Միւսերներին գերեզմաններ,
Մաշտոցի՛ շիրիմ:
Զերմ եմ
Թխաշուի մանկունք:
Քոնն եմ
Շունչ իմ Արարատ լեռան,
Քոնն եմ
Հօրս վիրատը ձեռք՝
Յետ մահու էլ հովանի դարձած ինձ:
Քոնն եմ
Լուսահոգի մօրս համբերութիւն:
Քոնն եմ
Զծնուած մանկանս տառապանք...
Իմ ազնուագա՛րմ Հայերէն,
Իմ տաւ, լեռնային բամբի,
Իմ խորդուբո՛րդ նամբայ,
Զե՛րմ եմ ես,
Ու՛ր էլ որ լինեմ
Ենրադիր եմ բո առջեւ
Երկրիս սրբազա՛ն փոշեհատիկ:
Քոնն եմ ես
Բախտի ժանդաղէմ փուշ,
Քո՛նն եմ
Հայ լինելու պատիւ,
Յաւիտեանս յաւիտենից...

7-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 1989

Եւ ցաւերից արդէն յոգնած,
Բախտի լեղին խմած արդէն,
Էլ ձեր ցաւին ո՛նց դիմանամ,
Փլատակներ, փլատակներ:

Արտիս մէջ խոց, ու աչքս՝ թաց,
Շուրջս մահէ՛ր, մահէ՛ր, մահէ՛ր,
Այս կորստին ո՛նց դիմանամ,
Փլատակներ, փլատակներ:

Մեմֆ՝ ոսկեճեռ ու շինարար,
Մեմֆ՝ ճակատաբաց ու դպրասէր,
Խաչքարին ի՞նչ պատասխան տամ,
Փլատակներ, փլատակներ:

Ելնեմ, սրբեմ աչքերս թաց,
Մեղիս շտկե՛մ, ոտի՛ կանգնեմ,
Որ կարեմամ ծաղկե՛լ դարձեալ,
Ձեր որբ գրկում՝ փլատակներ...


☆ ☆ ☆

Կեանքի ի՛նչ անհուն, անծիր ծարատով,
Քեզ լրիս պարգած լոյսի շոյանքին,
Ի՛նչ ափնով ես թրթռում աշտօր,
Փլատակներից վեր ելած ծաղիկ...

...Փլատակներից, որ երէկ միայն
Դուռ էին ու շեմ, խոյակ ու կամար,
Փլատակներից, որ երէկ, երէկ
Տուն էին, դպրոց, վանքի սիւնաշար...


Ի՛նչ թրթռով ես գրնգում աշտօր՝
Իրարու զօդած սո՛ցդ ու ոգի՛դ,
Օրինա՛նք Բեզ, ու մեծ յառնումի՛նք քո մոր
Փլատակներից, փլատակներից...

ԱՆԱՀԻՏ ՊԱՐՍԱՄԵԱՆ



«Ս. Մարինէ», լուսանկար՝ Արմէն Յեմտերէնեանի:

digitised by A.R.A.R.®



ՀՐ. ՄԱՔԵՏԻՍՅԱՆ

Արձակագիր և լրագրող Հրաչեայ Մաթետոսեան ծնած է 12 Մայիս 1937ին, Ալավերդի շրջանի (այժմ՝ Թումանյան) ԱՏԻՆՈՐ գիւղը:

1955ին կ'աւարտէ Երեւանի արհեստագործական Յրդ ուսումնարանը իսկ 1966ին՝ Երեւանի համալսարանի լրագրութեան բաժանմունքը: Երջան մը իբրեւ զրաշար Երեւանի տպարաններուն մէջ աշխատելէ ետք, Հրաչեայ Մաթետոսեան զանազան պաշտօններ կ'ստանձնէ կոլլեբրու հրատարակչութեան, «Ոգմի» երգիծաթերթի, «Ասամ զարթ» օրաթերթի և «Հայրենիք» ծայն» շաբաթաթերթի խմբագրութիւններուն մէջ:

Հայրենի մամուլի էջերուն լոյս տնսած իր քաղձաթիւ յօդուածներուն ակնարկներուն և հրապարակագրակաւ էջերուն կողքին՝ ութսունական թուականներուն ան կը հրատարակէ պատմըւածքներու և վիպակներու չորս հատորներ՝ «Մանկալներ», «Բար մարդկանց հովիտը», «Աստղերի հեթուում էր իմ ձիւն», «Ալեւորներ ինչպէս նաեւ մանկական պատմուածքներու ալ հատոր մը:

Հմբերցողիմ իր շնորհալի լրագրական գործունէութեամբ ծանօթ Հրաչեայ Մաթետոսեանը համոզն է եկել պատմութեան անդրամիկ գրեկլով: Ժողովածուի «Մանկալներ» վերնագիրը առաջին պահ ստեղծում է այն տպատրութիւնը, թէ պիտի խօսուի տակ այդ հմատիպ եղագործների մասին: Սակայն մանկալները, որ այստեղ նշանակում է առեասարակ հողի հետ կապուած մարդկ, ըստ էութեան, դառնում են այն միջոցը, որով եղինակը վերախմաստատում է պատերազմի ծամանակ իր մանկութիւնն ապրած սերնդի պատմութիւնը («Գրական թերթ», 1979, թիւ 6):

Ժենիա Քալանթարեան

Առեասարակ, Հրաչեայ Մաթետոսեանը բնութեան նկարագրութիւնների սխանչի կտորներ ունի, որոնք շնչում, ապրում են Յրա գրչի տակ:

«Բարի մարդկանց հովիտը» գրում բնութեան, հողի, մարդու աշխատամի, հացի փառաբանութիւն կայ, մի տեսակ խցով, գութով, ցատտ ու ներդաւութեամբ առաջ քաշուած զաղափար կայ ընդդէմ մարդկային չարութեան, ընայած արձակագիրը դա այնքան էլ չի շեշտում, սակայն, պատմելով բարու մասին, նա իմբնիմ մերժում է չարը կամ էլ մարդու վրայից դէմ չարտելով նրա մասին եղած սխալ պատկերացումը, պաշտպանելով մարդուն մարդկանցից, նա պաշտպանում է նաեւ հէնց այդ սըխալութեան կամ սխալ մարդկանց, բանգի նրանք մաքրում են, երբ ճանաչում են բարին բարութեան մէջ («Սովետական պրակտիկութիւն», 1984, թիւ 12):

Մելիսեթ Մելիքեան

ՀՐ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

“ԿԱՒԻ
ՄԷՋ
ԻՄ
ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆ
Է...”



Աշխարհ ես եկել ու, ի՞նչ էլ լինի, էս աշխարհում դու քո բաժին կա-
նաչ-կարմիր ընծայ օրն ունես՝ լեռների ու քո սիրոյ հասակի վրայ կա-
մարումս ծխածանի բոլոր գոյներով: Տեսնես ու չհասնես խօսքի նման է
լինելու երանելի օր-կեանքն այդ, որ միշտ կրելու ես քո մէջ որպէս քո
ստեղծածը: Ուրեմն՝ միայն քոնը: Տխուր-տրտում պիտի լինես դու ու յու-
սահատ: Թեւեղ բաց քո երկնքում լինես թէ արդէն թեւածալ լինես ու
հառաչանքը զունդուկծիկ դարձած կոկորդիզ դէմ առած ու լորու շափ ար-
ցունքը կաթած ու փշրուած լինի, մէկ է, այդ օր-կեանքի տէրը նորից դու
ես: Դու ես, որ աչքերով, բշխներով, մարմնի սարսուռ ծակոտկենիներով
հաւաքում, քմբոշխնում ես բոլոր գոյները: Այդ գոյները թղթին ես յանձ-
նում անպիտանէն: Յետոյ զգում ես, որ քո ներսում աղ կայ, աշխարհ ես
եկել, մի բառ պիտի ասես ու բառը աղի միջով է անցնում, էութեան աղի:
Բառը ծանրանում է, մարմին առնում: Եւ զգում ես, որ աղից բացի քո
ներսում իրեն ձգող-քաշող մի բան կայ, որ կաւ է կոչում: Քո էութեան
աղն ունես: Քո էութեան կան ունես: Եւ աչքերդ գոյներ են որոնում:
Գոյներ: Եւ աչքերդ մտնում են կաւի մէջ ու գոյներ են հանում: Ձեռքերդ
նետում են կաւի մէջ ու էութեան շաղախ, հէնց էութեան խմոր են
հունցում:

Ու մի օր պիտի զգաս, որ դու աղջնակ ես, որ քո բաժին էութեան
աղը... աղի է, որ քո բաժին էութեան կաւը ծանր է, իրասածի է, որձ է,
յամառ ու նաեւ... շուտ վիրաւորուող: Աղջնակ է, ու թող բանի տեղ չղնի
աղին, թող այն լինի պատանեակի խանդոտ հայեացք, թող նայի արեւի
տակ, հալուի ու գնայ: Աղջնակ է, ու թող բանի տեղ չղնի կաւին, թող այն
լինի պատանեակի խանդոտ հայեացք...: Բայց այդպէս էլ նա չկարողա-
ցաւ բաժնուել աղից, կաւից: Այն դարձաւ էութիւն, իր կեանքի, իր գործի
համ ու հոտը, բոյրը, իր Բանը:

Գոյնը եւ կաւը նրա համար զարձան ճակատագիր: Կաւը՝ իր ազգային յիշողութեամբ, իր սիրով, տառապանքով այնպէս կապուեց գեղեցկատես այդ աղջկան, որ ոչ թէ ճակատագրի պէս մի բան, այլ հէնց ճակատագիր զարձաւ, որից երբեք չես կարող փախչել:

Կաւ եւ կին:

Կին եւ կաւ: Եթէ պարապ լինէի, կ'ասէի՝ կինն ինչ-որ տեղ կաւ է, իր հաւատի մէջ կինը կաւ է: Կաւը կնոջ ձեռքերում նրա արեան բոսորութիւնն է առնում իր մէջ ու փորձում է արարող կին դառնալ նախ ինքը՝ նորին մեծութիւն կաւը:

Իր մէջ պիտի հաւատի թրծուած կաւ լինի, որ հաւատամ աչքիս տեսածին. աչքիս տեսածը...: Եթէ փորձեմ նկարագրել խեցեգործ Մարիա Ասրիեանին, ապա հոլանի բառն էլ կը յիշեցնի իր տեղը: Նստել եմ իր էութեան ադի, իր էութեան կաւի հետ վաղուց ի վեր հաշտ ու մտերիմ արուեստագիտուհու երեւանեան աշխատանոցում (այստեղ՝ աշխատատեղ, ոչ արուեստանոց) ու նորից զարմանքն է փորձում ուղեկցել ինձ: Դու կին ես ասում, հոլանի բառն է իր տեղը մատնում, իսկ տես՝ ներքնայարկում պարկերով կաւ է, հրակայուն կաւ, հրակաւ, որ... շամոտ են ասում. Տարբեր լեզուներով ինչ ասում, չեն ասում, բայց կաւը պիտի մաքուր մաքուր լինի, զուտ ինքը լինի, մի պտղունց խառնուրդ չի լինելու, որովհետեւ էս աշխարհում միայն ինքը կը դիմանայ կնոջ ձեռքի քնքշութեանը եւ... էլեկտրական ջերմութեանը: Հրակայուն մի վառարանը... երեք շէնքի լոյս է ուտում: Ես նայում եմ պարկերով հրակաւը, փթերով չէ, տոնաններով հրակաւը, փորձում եմ արդէն տեսնել արուեստի այն գործերը, որ ծնունդու են Մարիայի եւ կաւի մտերմութիւնից: Ինչ ուզում ես ասա. բառեր կան, որ իրենց մէջ տղամարդու դիմանկար են ստեղծում: Թէկուզ քար բառը՝ քարահանից սկսած, կտրել-հանելուց, տաշել-յղկելուց, որմնաշարութիւնից մինչեւ տուն ու խոյակ դառնալը տղամարդու ուժ ու կեանք են պահում: Հող բառը... Կաւն այնքան ծանր է, որ մտքով երբեք չի անցնի նրա մէջ տեսնել կնոջը: Այ, եթէ կաւի փոխարէն այսքան ափսոս լինէր, դա արդէն ուրիշ երանութիւն կը լինէր եւ ուրիշ մի աշխարհ կը փռուէր քո դէմ: Մտքումդ չէ, հէնց բարձրաձայն կ'ասէիր՝ Աստուած կնոջ ձեռքերն ստեղծել է, որպէսզի խմոր անեն: Խմորն էլ հացի բարուրն է: Ինչ հաց են թխում մեր հարսերն ու նանիները, ի՞նչ նազուկ ու դաթա են թխում մեր նազուկ հարսները եւ խաչքարերես նանիները: Տաշտն էլ հացի բարուրն է, օրօրոցը: Այլիւ չէ, հրակաւ է քո դէմ ու նազուկ թեւերով մի կին: Հրաշք բառ է հացը: Բայց ափսոս մի կողմ է գնում, խմորը հեռանում է քեզանից, հացը հեռանում է քեզանից: Այս կաւից արդէն քանի՞ տարի իր խմորն է անում Մարիան ու արուեստի իր հացն է թխում: Արարում է իր արուեստը գծարտութեամբ, տքնանքով, հաւատով: Մատները յոգնում են, թեւերը թուլանում են, թւում է, որ սա վերջին աշխատանքն է լինելու, վերջին ձեռագիրը, բայց յաջորդ իսկ օրը մատներն իրենք են կաւ որոնում, ձեռքերն իրենք են որոնում, շարունակուող օրը սկիզբ է դառնում: Ինչպէս իր ձեռքերից, ինչպէս իր աչքերից, այնպէս էլ չի կարող բաժանուել հրակաւից: Կաւը հողի նման քաշում է: Կաւը քաշում է իր ներսը: Կաւի հետ նրա զրոյցը, վէճը, խռովքը շարունակում է: Ամէն օր սկսում ու ամէն օր շարունակում է:



«Իմակ», գործ՝ Մարիա Ասրիեանի:

Կանն էլ զարմանալի խանդ ունի. եթէ նա գտել է իր ձեռքը, պրծա՛ւ, ապա թէ ձեռքը... պոկուած էլ տեսնի, մէկ է՝ նա շաղախուել, հունցուել է սիրում: Իսկ լաւ հունցուած կաւից միշտ էլ հրաշք մի գործ է աշխարհ գալիս՝ իր անունով, իր դիմագծերով, նոյն արեան բաղադրովեամբ, ինչ արիւնով տարիներ ի վեր ծնում են նրա հարազատ քոյր ու եղբայրները: Եւ մայրը ահա այս կինն է՝ Մարիա Ասրիեանը:

Ու պիտի հիմա, միայն հիմա զոհ լինի իր ծնողներից, որոնք իրենց էութեան կաւից հունցել են նաեւ իրեն: Մենդավայրը՝ Չաքաթալա, հնաբոյր հայոց տուն, որ վաղուց տանտիրոջը չէ: Բայց տանն ամէն ինչ հայերէն է, ամէն ինչ յուշի ծուկներէի հետ արթնանում է: Ու հիմա՝ երեւանեան իր արունտանոցում յուշի ծուկներն են արթնանում: Ամէն ինչ այնքան մաքուր ու հայերէն էր, որ չէր էլ հասկանում, թէ ինչու հայրը ասում էր՝ Հայաստան պիտի գնանք: Հօրը անունը՝ Թուրինջ, մօր անունը՝ Արշալոյս: Չորս զաւակ ունեն: Հօրեղբայր ունեն, անունը՝ Յովհաննէս, սա էլ եօթը զաւակ ունի: Լիբը-լիբը բարեկամութիւն, բայց բոլորն ասում են Հայաստան պիտի գնանք: Եթէ չասէին, Մարիան չէր էլ հասկանայ, որ իրենք չեն ապրում Հայաստանում, անգամ չէր հասկանայ, որ գնում է ռուսական դպրոց: Այնքան էին կարօտով խօսում Հայաստանի մասին, որ կարօտի գոյներ էին ծնում փոքրիկ գեղեցկուհու հոգում ու նա իր կարօտի աղբիւրն էր նկարում, իր Հայաստանը: Նկարում էր յափշտակուած, ինքն իր Հայաստանն էր նկարում այնպէս, որ թուում էր, թէ արտանկարում է: Մի օր էլ զգաց, որ խեղդում է կարօտից: Կարօտը դառնում էր գոյն ու ձայն: Փորձում էր նաեւ բանաստեղծութիւններ գրել: Բանաստեղծութիւնը նոյնպէս գոյն էր դառնում ու որպէս մի թել հիւսում էր նկարներին: Իր մանկութիւնը փորձում է միայն գոյնով, ընտանեկան քաղցրութեամբ յիշել երիտասարդ արունտագիտուհին: Ու նաեւ դառնութեամբ պիտի յիշի այն չար ձեռքը, որ մի օր մեկնուեց ու ասաց՝ ինչու՞ ես նկարել Մարտիրոս Մարեանի նման: Ոչ Մարտիրոս Մարեանի անունն էր լսել, ոչ նրա նկարներն էր նայել, բայց պիտի մեղադրեն փոքրիկ աղջկան... սարեանական գոյների համար: Տաղանդը գեղեցկութեան նման թաքցնել չի լինի: Մարիայի նկարչական տաղանդի մասին շատերն էին խօսում: Իսկ Մարիան ուզում էր շուտ տեսնել Հայաստանը եւ... Մարտիրոս Մարեանին: Ու գոյները թեթեւ էին թւում: Նա իր էութեան կանն էր փնտռում: Ամէն մի գոյն, որ չէր գտնում իր նկարի համար, թուում էր թաքնուած է կաւի մէջ: Խմոր էր հունցում ու թւում էր, թէ ալիւրի փոխարէն կաւ է հունցում: Բայց երբ արդէն պիտի որոշուէր աղջկայ բախտը՝ որտե՞ղ է սովորելու, պարզուեց, որ Երեւանում... հարազատ լուսնին: Հարազատները Միջին Ասիայում են: Եւ Մարիան մեկնեց Տաշքենդ: Հեշտութեամբ ընդունուեց ինստիտուտ: Վերջին երկու-երեք տարուայ ընթացքում մոռում շատ էր ասում՝ նկարչական, թէ՛ բժշկական, բժշկական, թէ՛ նկարչական: Որոշուած է նկարչական: Ամէն ինչ ինքնուրոյն էր անում: Եւ այնտեղ՝ Տաշքենդում, հասկացաւ, որ յատուկ իր նկարչութեան դասատուն է ունենալու: Եւ դասատուն շուտ է նկատելու, որ աղջկայ հոգում ամէն ինչ հայկական է, որ բոլոր գործերում առկայ են մոմը եւ խաչը: Նայում ես, ոչ մոմ կայ, ոչ խաչ, բայց մոմն ու խաչը շնչում են նրա գործերում: Դեղանկարչութիւնը լեզու է, որ խօսում է, մատնում աղջկայ

ձգտումները, երազանքների մասին է պատմում: Ու միշտ մտածել է, որ նկարածը տեսնի որպես քանդակ: Եւ նորից զգաց, որ ինքը չի կարող արտագրել անգամ իր ձեռագրից: Մտայղացումը չի կարողանում յանձնել լեղթին: Կաւր պիտի շաղախի, հունցի, հունցի, ստանայ իր զանգուածը ու այդ պահին խմորը պիտի յուշի, թէ ինչ գործ է ծնունդու: Այդ պահին միշտ մտածել է ժողովրդական մի խօսքի մասին՝ «ի՞նչ խմորից ես դու»: Զգում էր մի բան՝ իր գործերի խմորը հէնց ինքն է որ կայ: Ու այստեղ՝ իր արուեստանոցում, ճանաչուած խեցեգործուհին պիտի յիշի Տաշքենդի թատերա-գեղարուեստական ինստիտուտում հրաշքի պէս յայտնուած նրբանկատ մի հայի, որի խորհուրդը մէկն էր՝ «Մարիա, մտածիր Հայաստան տեղափոխուելու մասին, գնա՛ Հայաստան, որ լաւ խեցեգործ դառնաս, կերամիկան քո աշխարհն է, հէնց հացը: Դու քո արուեստի հացը պիտի տաս մեր ժողովուրդին»:

Եւ հայրը, միշտ կարօտով ապրող հայրը անսպասելի յայտնուեց Տաշքենդում: Աղջիկը լաւ է սովորում, արուեստի ճանապարհի վրայ է: Մարիան չի ասում նրան, որ շատերն են խորհուրդ տալիս տեղափոխուել Հայաստան: Հէնց հայրն է ասում. «Աղջիկս, եկել եմ, որ ասեմ, տեղափոխուիր Հայաստան, մենք էլ կը գանք»: Եւ ծննդեան վաթսուամեակի օրը խորհուրդ տուեց, խնդրեց ու... մահացաւ հայրը: Իր սիրելի հայրը մահացաւ Տաշքենդում:

Տեղափոխուեց Երեւան: Գեղարուեստա-թատերական ինստիտուտ: Հոփարիմէ Միմոնեանի գործերը նայելուց յետոյ հասկացաւ, որ շատ ճիշտ է արել, որ եկել է Երեւան: Հայերէն է շնչում, հայերէն է մտածում, ոչինչ, որ վարձով է ապրում, ոչինչ, որ վատ է հագնուում, ոչինչ, որ յաճախ հացի փող ու տրանսպորտի փող չի ունենում: Թաճախ է մտածում ուսումը կիսատ թողնելու մասին: Մի տեղ կ'աշխատի: Անգամ շինարարութիւնում կ'աշխատի, բայց հիմա էլ մի բան է խանգարում, ախր, շատ ու շատ բան է սովորեցնում Իոսիֆ Բաբայեանը՝ խեցեգործութեան տեխնոլոգիան: Իր ուսուցիչներին է պարտական եւ իր փոքր քրոջը՝ սիրելի Տատիանային: Աղջիկ էր, քոյր էր, շուտ զգաց, որ Երեւանում հարազատ չունեն, որ իր քոյրիկը ուսանողուհի է, որ գործ ունի կաւի հետ, որ կաւի հետ գործ ունեցողը պիտի նաեւ լաւ սնուի, որ ուժ ունենայ յաղթելու կաւի... ուժին ու քմահաճոյքներին կուլ չզնայ: Քոյր էր, աշխատում էր Զաքարթայում եւ աշխատածը ուղարկում քրոջը: Տարիներ են անցել, քոյրը նոյնպէս տեղափոխուել է Երեւան, թէեւ իր տուն ու հոգսերն ունի, բայց երբեք ձեռքը, օգնող բարի ձեռքը հեռու չի պահում քրոջից ու նրա երկու դուստրերից՝ Աննայից եւ Իննայից: Աննան արդէն սովորում է Փանոս Թերլեմեզեանի անուան ուսումնարանում, իսկ Իննան պատրաստում է ընդունելութեան քննութիւններին. ուզում է ընդունուել անգլիական բաժին: Աղջիկների անունները որ տուեցի, ուզում եմ յիշել գեղեցկատես Աննային, որ մօր կերպարը դարձրել է գեղանկար՝ առանց կնոջ աւանդական դիմանկարի: Այդ գեղանկարում ե'ւ արցունք կայ, ե'ւ դառնութիւն, ե'ւ թախիծ, ե'ւ սէր, ե'ւ առանց երգի խօսք, ե'ւ կաւի ծանրութիւն, ե'ւ կաւի հաւատ: Նկարչուհին կարողացել է կերտել մօր կերպարը, մի կնոջ, որ միայն իր բարութեամբ կարողացել է յաղթել, ինքն իր ուղածին հասնել: Բարի: Բայց բարին պիտի ուժեղ լինի: Թոյլ բարիութիւն չկայ: Եթէ թոյլ է, ուրեմն էլ բարի չէ:

Դուստրերը աչք են բացել ու մի բան չեն էլ հասկացել, թէ ինչպես են... հասկացել՝ հպարտացել են իրենց մայրիկով ու նրա կատարած աշխատանքներով: Ու դողացել են մայրիկի կեանքի ու նրա ստեղծած, էս սիրուն մատներով, էս բարի սրտով, էս տեսանող աչքերով ստեղծած խեցեգործական բազմաթիւ աշխատանքներով: Իսկ մայրը զործ ստեղծելու ժամանակ երբեք դուռ ու կտուր չի բնկել, կաւը երբեք չի սպասել. հայկական նրա հոգու մէջ ինչ կայ, փորձել է դա արտայայտել: Գործեր է ստեղծել, հոգու մաս ու հէնց հոգի ու սիրտ գործել, որոնց լուսանկարներն անգամ չունի: Ծառ են սիրել, տարե՛լ են ու... կոտրել...: Մարդու էութեան մէջ պիտի անպայման մի քիչ կա լինի, էութեան սերմնակաւ, մի քիչ աղ պիտի լինի, էութեան սերմնաղ: Այդ սերմը, եթէ եղաւ, ուրեմն՝ անմահ է ոգին:

Նաեւ երեխաներն են իր կաւը, որ պիտի հունցի, հունցի, ստանայ իր ուզած մարդը: Ախր, իր դիպումի ղեկավար, զոցենտ Նորայր Աղաջանեանը երանի է տուել իրեն, որ... կաւին նուիրուած նման մարդ կայ, որ Իոսիֆ Բարայեանը հպարտ է եղել, որ Մարիայի նման հրաշալի խեցեգործ կայ՝ ասե՛լքը յորդող, ինքնամփոփ, իր հող ու ջրին ձուլուած արուեստագէտ, որ կաւը իր հողից կը բաժնուի, բայց Մարիան այլեւս չի բաժանուի հողից: Ախր, ինքը որպէս հօր երազանք է ապրում Երեւանում: Տնով, տեղով հաւաքուել են: Ճանաչուած քանդակագործ Ֆրանց Սիմոնեանը յաճախ էր կրկնում՝ «Բո նկարչութեան մէջ էս քանդակներ եմ տեսնում: Բայց արուեստի քո ճանապարհը խեցեգործութիւնն է: Հայաստանում քիչ կանայք կան, որ սիրահարուել են կաւին: Կաւը կնոջ սէր է պահանջում եւ սղամարդու ուժ: Եւ սիրոյ մեծ ճանապարհին կոտորուել չկայ, կեռանալ չկայ եւ չկայ հեռանալ»:

Ամէն մի արուեստագէտ նախ եւ առաջ կոչուած է սեր արթնացնելու ոչ թէ իր իսկ ստեղծած արուեստի, այլ առաջին հերթին այն նիւթի հանգէպ, որով արուեստ է ստեղծուում: Խեցեգործուհի Մարիա Ասրիեանի արուեստը ձգող ուժ ունի: Նրա հրակաւը նաեւ իմ մէջ պէտք է յուշեր արթնացնի:

Հանդ տանող, սար տանող ձորի մեր ճամբան հազար հմայքների հետ ունէր վախենալու մեր տեղը: Դա Կարմիր ցեխերն էր: Ինչու՞ էին Կարմիր ցեխեր ասում: Զոր ժամանակ... չոր, կոշտակներով տեղ էր, իսկ թէ մի թեթեւ անձրեւ էր գալիս, իսկ եթէ չփչփալով անձրեւ էր գալիս, տղայ ես՝ անցիր այդտեղով: Կարմիր ցեխ էր դառնում, կարմիր ջուր էր հոսում: Պատերազմի ժամանակ մեր մայրերն այդտեղից էին գիւհոյ վերցնում, կաւահող վերցնում մեզ լողացնելու, լուացք անելու համար: Մեր խեղճ, մեր հաւատաւոր մայրերը: Մոխրով էլ էին լողացնում: Փոքր էինք, բայց միամիտ չէինք, որ հարցնէինք՝ ինչու՞ օճառով չէք լողացնում: Օճառ լինէր, էլ մեր ասելուն չէին սպասի մեր մայրերը: Տաշտակի մէջ մեր ականջին ասում էին՝ կաւը ամրացնում է մարդուն: Տաշտակի մէջ մենք երեխայ էինք, բայց... տղամարդ էինք մեզ կարծում՝ կաւը ամրացնում է մեզ: Կաւահող էր, հրակայուն կաւ էր, որ նաեւ աղիւս էին պատրաստում գիւղի մեծերը:

Մարիայի գործերը նայելուց յետոյ ես կարօտեցի հանդ տանող, սար տանող մեր գիւղի ձորի ճամբին հազար տարի, էլի հազար տարի ապրող

Կարմիր ցեխերին, որի մէջ եթէ ընկնէինք, ապա այնտեղից զուրա էինք գալու առանց տրեխի, զուլպայի, առանց հին ու մաշտած կօշիկների: Մայրս ասում էր՝ կաւը քաշում է: Ու թէ կաւը կպչէր մեր ոտքերին, մեր ձեռքերին, ապա ծանրանում, ծանրանում էինք ու վախն էր իշխում մեզ՝ հիմա իր յատակը կը քաշի:

Այստեղ՝ Երեւանում, Մարիա Ասրիեանի արուեստանոցում մանկութեան յուշն ապրեցի ես. եւ ինձ թուաց, թէ մեր սարի ճամբի, հանդի ճամբի Կարմիր ցեխերը քաշում է ինձ: Առանց էդ ցեխերի մենք ամուր չէինք լինի ու առանց էդ ցեխերի չէինք կարող ապրել մենք կեանքում: Ու զգացի, որ մէկ անգամ տեսնողը այն ապրումն է ունենալու, որ այլեւս իր հետ է լինելու Մարիայի արուեստը, նրա աշխարհը, որ տեղով կրակ է, օդ է, սեր է, յիշողութիւն է, որ ամէն մի գործ, եսկ դրանք հարիւրների են հասնում, անուն ունի, ծննդեան թիւ, բայց բոլոր գործերն էլ կաւէ հնութիւն ու կաւէ յիշողութիւն ունեն, թէեւ բուրում են դեռ չքաղած ծաղկի բուրմունքով:

ՀՐԱՋԵԱՅ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ



«Անհանգստութիւն», գործ՝ Մարիա Ասրիեանի:

Ռ. ՄԱՀՏԵՍԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



Բանաստեղծ և լրագրող Ռուզան Մահ-տեսեան ծնած է Ջաուխի Փոքր-Խանչալի գիւղը: Բողոքանովկայի միջնակարգ դպրոցը աւարտելէ ետք, կը սկսի յաճախել Երեւանի պետական համալսարանի լրագրութեան բաժինը: Համալսարանական վկայականին աւարտելէ ետք, կը սկսի պաշտօնավարել Հայաստանի հեռուստատեսութեան և ռադիոհաղորդումներու պետական վարչութեան մէջ, նախ՝ իրրոն խմբագիր, և յետոյ՝ իրր աւագ խմբագիր և բաժնի վարիչ: 1991ին նաեւ կը ստանձնէ «Հանրապետական» շաբաթաթերթի ղեկավար խմբագրի պաշտօնը:

Ռուզան Մահտեսեանի կարգ մը բանաստեղծութիւնները լոյս տեսած են հայրենի մամուլի էջերուն:

ՏԱԹԵԻ

Հեքիաթի թռչում՝ փետուրներով բիւ,
Մարդկային լեզուով խօսող ձկնիկներ,
Խաչմ ի վար սահող արցունքի կաթիլ,
Երկինքի թեւածող լուռ հառաչանքներ:

Կայայտ ու դեղին, կարմիր ու կանաչ,
Լոյս ու մութի մէջ բեկբեկուող գոյներ,
Սրբապատկերներ՝ մաքրութեամբ և անհանգիստ,
Թողութիւն հայցող դողդոջուն ձեռքեր:

Այստեղ է ճիշտը, իմաստը գոյի,
Եւ վեր է միտքը մարմին կոչուածից,
Առնչումները երկիր ու երկնի
Հաւատ եմ ծորում սիրոյ եղջիրից:

Յուշիկ մօտեցիր աղօթատեղին,
 Յույսի ներշնչող մոմերդ վառիր,
 Մի օր կը բացուի մարգարտայտեցին,
 Օրհնամբ կը թափի հոգուդ անբասիր:

* * *

Օրը տարի, տարին օր էր,
 Ձիւնը՝ ներմակ մի երազ,
 Վեհ ու խանդոտ, լուռ մազամբով,
 Աղօթելով կ'իջնէր ցած:

Պատուհանից անդին փռուած,
 Աշխարհը մերկ էր մօրէ,
 Կռոյսի մարմին, կռոյսի պահուածք
 Խրտմած մի վիթ, մի երէ:

Ճերմակ նծուց՝ սլացփի մէջ
 Արձանացած, մարմարէ,
 Խանդոտ դու ձիւն, չեմ կանչել բեզ,
 Այդքան մի անապարէ:

Քո գալուց սիրտս մրսում է,
 Ես կարօտ եմ դեռ սիրոյ,
 Մէկը գուցէ սպասում էր՝
 Գոցեցիր դուրը նորէն:

Օրը տարի, տարին օր էր,
 Դու ձիւն ներմակ, դու հեփիաթ.
 Նուիրումս՝ խանդից գօրեղ՝
 Աստուած տուեց ոտնատակ:

ԱՆՔՆՈՒԹԻՒՆ

—Ես եկայ,— ասաց նա տիրական,—
 Այլեւս ետադարձ չի լինի,
 Անմոռութիւնդ ես եմ, որ կամ,
 Դու գաւաթս լցրու զինի:

Լուսնալոյսը թող չխաբի բեզ,
 Թէ ճամբայ ունենմ անցնելու,

Ներկան վերջանում է այստեղ,
Իսկ վաղուան մենք չենք սպասելու:

Կը գայ նա, թէ չի գայ, չգիտեմ,
Մենք կ'ապրենք օրն այս վերջացող,
Ամբնութիւնդ, հաւատա՛, ես եմ,
Առ ինձ Բո գինով արբեցնող:

Ախ, տենդ է ծորում գինին,
Ձայներ են լողում օդում,
Արցունքներ թողնելով պատին՝
Կտաւը ներքեւ է սահում:

Ժամանակը գալարներ է տալիս,
Սրբեզով սպասումի փռչիւն,
Սրտիկը դէպի ներս է լալիս,
Դէպի դուրս՝ հաղի մէջ է կրկին:

Հեռում վայում է մի գագան,
Ուշացած կոնչում մի թռչուն,
Սա մղջաւանջ է անվերժան,
Ձայները կախարդում են, կանչում:

—Ես եկայ,— ասում է նորից նա,—
Ետդարձ չի լինի այս օրից,
Ամբնութիւնդ հէնց ես եմ, որ կամ,
Անունս Սէր է, ներս առ ինձ:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՆԿԱՐ

Կէս գիշեր: Քաղաքի լուռ ու մունջ մայթերին,
Շէնքերին՝ անհաղորդ ու պաղ,
Ծորում է անասելի տխուր մեղեդին,
Սա սոսկ պատկեր չէ, աւաղ...

Անձեւ մութը չունի եւ ոչ մի խորհուրդ
Առանել ես՝ հմայք,

Ու օրուայ անցուդարձը հանգչում է, անլուրջ
Ուշացած անցորդի Բայլի տակ:

Խօլ ու դաւադիր լուսեան ճանկում,
Հիւժախտով տառապող կոյսի պէս,
Մաշում, նուաղում է փայփայլում մի սպասում,
Եւ գոց են դռները անտես:

Դալուկ լուսնի վրայ Բայլում է թաղման թափօր,
Ստուերները չ'ացել են վաղուց,
Հրաժեշտի թախճոտ նուազը երկնածոր
Ծանօթ է բոլորիս մանկուց...

Կէս գիշեր: Քաղաքի լուռ ու մունջ մայքերին
Զկայ գէթ թափառ մի շուն,
Ինչ տխուր է հրաժեշտի վերջերգ-մեղեդին
Եւ մոլոր՝ աստղերի ներմակ չուն...

ԿԱՆՉ

Երբ լուսադէմին աչքերդ բացես
Ճերմակաթիւր ճայի կանչով,
Աղօթիր արեւին, որ սիրում է Բեզ
Ու լցնում հոգիդ տենչով:

Պարզիր ձեռքերդ ու սիրտդ պարզիր,
Տուր փոքրիկ ճայիս հանգրուան,
Թաքախտել է նա ջրերում աղի,
Դարձել իմ ցաւին թարգման:

Ճայն այդ մունետիկա է, խօսնակը հոգուս,
Անլուր ապրումիս վկան,
Շուրի թեւերը, փետուրները լռյս
Ու նա Բեզ կ'ասի, որ ես կամ:

Ելիր ընդառաջ կարօտի ճայնին,
Ամսա՝ խոստումիս միակ,
Դուրս արի տնից ու թաց աւազներին
Կը տեսնես արցունքս ներմակ:

Ես կը մօտենամ քեզ խօսող ձկան տեսքով,
 Կամ իբրեւ ծածանուող ալիք,
 Կ'օրհնեմքեմ օրդ բարի մաղթամբով
 Կը ցողունեմ ոտքերիդ բոբիկ:

2.04.1981

* * *

Անվերջ, անվախճան խոստումի գիշեր,
 Աստղեր մոլորուած, հերարձակ լուսին,
 Սիրոյ մահնի մէջ հանգչող շշուկներ,
 Ու մի թափառ երգ՝ քամու թեւերին:

Հիսկէն է օրը, գունեղ գորգի պէս,
 Լոյս ու մութի խաղ պատերին ներմակ,
 Եւ այդ օրուայ մէջ ես գտել եմ քեզ,
 Ու սուգել սրտիս խորքերն անապակ:

Եւ գիշերը այս, հրաշքի հանգոյն,
 Ամէն ինչից վեր՝ երգում է լոփն,
 Որ աստղանկար իր բիրտ ծալքերում
 Փայփայում է մեր սիրոյ մեղեդին:

7.11.1981 ք

* * *

Գիշերը լոփն ու անխօս վկայ
 Ցաւի սղոցող անլուր տանջամբին,
 Այս պատմութեան մէջ մեղաւոր չկայ.
 Եւ ոչ էլ աւարտ անորոշ յաղին:

Թարթիչից կախուած արցունքը մահուր,
 Երիզուած է քո պատկերի հանգոյն,
 Եղիբ ի գօրու եւ թողութիւն տուր,
 Խաղը թող դառնայ իրականութիւն:

Երազը հոգու թող մարմին առնի,
 Փշէ պսակը դառնայ ծաղկահիւս,
 Տառապանքը թող երկրից յառնի,
 Խաչուի երկմբին, դառնայ սիրոյ լոյս:

Թող որ գիշերն այս ծանր, խաւարչտին,
Ողողուի մէկէն յոյսի յորձամբով,
Որ մեղքից հեռու պատմութեան վերջին,
Մի ծնունդ լինի՝ թեթեւ երկունքով:

* * *

Օրուայ մէջ փոփոխ գոյները բոլոր
Եւ անորսալի՝ շնչառութեան պէս,
Կար չվերծանուած մի գաղտնիք մոլոր
Ելեւէջներում քափառ ու անտես:

Պահերը մեկ-մեկ ագուցուել էին
Մեր սպասումին ու երազներին,
Եւ այդ դաշնութեան մենք փնտռում էինք
Գոյնը մաքրութեան, կապոյտը վերին:

Ծնծղաների պէս պարզ ու զրնգում
Եւ զանգերի պէս՝ դողանջով լացող,
Մեր հոգիները յոյսն էր տանում
Դէպի անծիրը մեզ անվերջ կանչող:

Եւ իբրեւ հաւատ անկորնչելի,
Ինքնայրուով լոյս՝ վեհ աստեղային,
Մենք կը փայփայենք պահերը բոլոր,
Որ չվերծանուի գաղտնիքն այն մոլոր:

Այն, որ հրաշք էր, իր ողջ պարզութեամբ
Ու անորսալի՝ շնչառութեան պէս,
Որ լուծուել էր լուռ գունափոխութեան
Ելեւէջներում քափառ ու անտես:

ԱՆԿՇԻՌ, ԱՆՉԱՓ...

Աստղը լուացունց ջրերի խորքում՝
Մթան խանդի մէջ իր ծիրը թողած,
Ելաւ-կանթեղունց երկնակամարում,
Սիրոյ հառաչանք պոկունց շուրթից թաց:

Ծովն իրեն ասաց. հիւշեհ ես ներմակ,
Ճերմակ բոցերով հսկայ յայտնութիւն,-

Իմքն այդ ընդունեց իբրեւ տառապանք,
Առեւանգումի ասպատակութիւն...

Եւ փախաւ փութով ու աստղասլաց,
Ելաւ- կանքեղութեց երկնակամարում,
Վերից ծորում էր լուսնահար մի լաց,
Ներքեւում ծովն էր տխուր ալիքում:

Իսկ կարօտները՝ անսահմանի մէջ
Հագարաթիչք եւ հագարանկում,
Աստուածատուր եմ ու այրումն անվերջ
Ոչ կշիռ ունեն եւ ոչ էլ հատում...

ՉԱՐԵՆՑԻՆ

Զրոյցի կանչիր ինձ, պոետ,
Տար քո ափերը հեռաւոր,
Գուցէ թէ ես եմ՝ Նազիկէդ,
Որ սպասել է քեզ մի օր:

Այս սուտ ու խաթար օրերից,
Ես ոչինչ, ոչինչ չեմ քաղել,
Քո ձայնն ինձ հասել է հեռուից
Հոգուդ վաղուց եմ առնչուել:

Ապրել եմ հաւատիդ հաւատով,
Սիրելով կերպդ անմեկին,
Ծխացել եմ խումկի պէս՝ մի յոյսով,
Թէ դու ինձ չես դիտի իբրեւ կին:

Զրոյցի կանչիր ինձ այսօր,
Այսօր հաւատա՛ իմ՝ աստղին,
Ես դեռ չեմ եղծուել անէծքով,
Չեմ դաւել կեանքում ոչ մէկին:

Ես երկինք կ'ելնեմ յոյսիս հետ,
Կը ծնկեմ խորանում լուսնակաթ,
Կառնեմ օրհամբդ՝ եւ էլ ետ
Կը ձուլուեմ քո հոգուն՝ համց հաւատ:

ՌՈՒԶԱՆ ՄԱՀՏԵՍԵԱՆ

Ա ՂԱԶԱՐԵԱՆ



Գրականագետ եւ մտաւորական Արմէն Ղազարեան կը ծնի 1958ին, Մոսկուա, մեծանուն բանաստեղծ Գարուշ Սեւակի երգիքի տակ:

Հօրը նահատակութիւնէն ետք, գրական միջնորդաբէ մէջ հասակ նեաող պատանի Արմէնը նախ կ'աւարտէ Երեւանի Կրօնագրական (այժմ՝ Նիկող Աղբալեանի) անուան միջնակարգ դպրոցը, ապա՝ 1980ին, Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքը: Այնուհետեւ կը շարունակէ իր մասնագիտական ուսումը եւ կ'աւարտէ ԳԱ Մ. Արեղեանի անուան գրականութեան ասպիրանտուրան՝ ներկայացնելով «Դերեմիկ Դեմիրճեանի պատմագեղարվեստական ստեղծագործութիւնը» անուն տարատաճառը:

Արմէն Ղազարեան իրրեւ դասախօս ներկայիս կը պաշտօնավարէ Երեւանի պետական համալսարանի հայ տրագիկոն գրականութեան ամպլոնին մէջ: Ան գլխաւորաբար կը դասաւանդէ ուկրաինական գրականութիւն, ինչպէս նաեւ՝ արդի հայ գրականութեան նուիրում նիւթեր:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Ե Ի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1969 թուականին Վահագն Դաւթեանը հրատարակեց «Ծովի ծիսանի» ժողովածուն, ուր հաւաքել էր աւելի փաղ գրած «Ո՛», տալը իմօ գծով ծխանի», «Ասբ սիրոյ եւ սրի», «Ծերմակ ծխաւորը», «Զաւարթնոց» աւաք-վիպերգութիւնները եւ «Թոմորակեցիներ» պատմական պոեմը:

Յժական թուականներէ շրջագարծը դէպի պատմական թեմատիկան եւ հայ վիպերգութիւններէ ու աւաքերի մշակումը առնչուած էին բանաստեղծի ստեղծագործութեան մէջ աւելի ու աւելի խորացող հայրենասիրական տրամադրութիւններէ խմորումներէ հետ: Անհետեւանք չանցան ո՛չ «Թոմորակեցիներ»ի առաջին տարբերակի գեղարուեստական որոնումները,

ս'ը «Գրական թերթ»ի խմբագրական շրջանում (1964-65) հայոց պատմության նորագույն շրջանի հարցերի խորագնին քննարկումները:

Բանաստեղծը դառնում էր պատմությանը ամենեւին էլ ոչ որպէս գեղարուեստասէր մէկը, որ ճաշակի համաձայն թեմաներ է բնորոշում հեռուի ու փակ անցեալի մէջ: Նա փորձում էր ժամանակների հեռուից ճանաչել ժողովրդի պատմական բնատրոյթները:

Հայ դասական գրականութիւնը (Ալիշան, Պատկանեան, Բաքի) պատմության հայրենասիրական ոգին քամում-դուրս էր բերում հնօրեայ մատենաների ոսկեղենիկ բեազրերից: Նորագույն շրջանում Ն. Զարեանը՝ «Յայն հայրենակամ»ում, ինչպէս նաեւ «Արշակ եւ Շապուհ» վիպերգութեան մէջ՝ պատմութիւնը բանաստեղծացնելով եւ պատմութիւնը վիպերգելով, բնթանում էր դարձեալ դասական փորձի ուղիներով: Հայրենասիրական ոգորումը դիւցազներգական ձեւերի մէջ որոշակիանում էր որպէս ժամանակակից վերաբերմունք քաղաքական իրականութեան նկատմամբ:

Վահագն Դաւթեանը բռնում է հին ճանապարհը, բայց դուրս գալիս միանգամայն նոր ափեր: Այստեղ՝ պատմական բանաստեղծութեան մէջ՝ հայրենասիրական մղումը եւ քաղաքացիութիւնը վճռող գործօն են: Բայց նա փորձում է գտնել նաեւ զեղեցիկի ողբերգութիւնը հաղարամեականների հեռուից, յսել փլատակուած ու որբ հոգիների մարդկային ճիւղը:

Զուարթնոցի քարեղէն արժիւնների մոայլ ու անօգնական գեղեցկութիւնը Մասիսների հայեացքի ներքոյ ծնում էր Յովնան ճարտարապետի մարդկային տառապանքը հասկանալու բանաստեղծական մղում:

Մուշեղ Մամիկոնեանի ասպետական վեհանձնութեան մէջ բանաստեղծը որոնում էր նրա ապրած ողբերգութիւնը ճանաչելու միջոցը:

Տիրիթի եղբայրասպան ու արիւնոտ դաւադրութեան էջերը՝ Գնեյի եւ Արշակի Փառանձեմի հանդէպ ունեցած սիրոյ մղձաւանջային դրամատիզմը պարզելու հնարաւորութիւն էր ստեղծում:

Գերուած Արտաւազդը գեղեցիկ էր ոչ միայն արտաքինով, գեղեցիկ էր նրա աննուաճ սէրը հայրենիքի հանդէպ:

Վ. Դաւթեանը այս դիրքերից է մօտենում հնօրեայ գրոյցների մարդկային-հայրենասիրական բովանդակութեանը: Պորենացու, Փաւստոսի պատումներում եղած իրական-պատմականից նա դուրս է բերում գեղեցիկի ողբերգութիւնը եւ ջանում այդ ողբերգութեան մէջ յայտնաբերել պատմութեան փիլիսոփայութիւնը:

— Կիւտպատրաւ, գեղեցկութիւնդ մարմնատր

Բազմապատկիր Բո հոգեւոր գեղեցկութեամբ

Եւ սուր ինձ ծովսն իմ ծխանի...

«Գեղեցկութիւնդ բազմապատկիր հոգեւոր գեղեցկութեամբ» — սա հնչուն ֆրազ չէ բանաստեղծի համար: Թերեւս բոլոր ասք-վիպերգութիւնների հիմքում ընկած է բարոյաբանական այս երակէտը: Արտաւազդը, Գնեյը, Մուշեղը, Յովնանը իրենց անձը բազմապատկում են հոգեւոր գեղեցկութեամբ, եւ սա է նրանց մարդկային բարձր նկարագրի էական կողմը: Սա նաեւ այն արժէքն է, որ յաւիտենապէս ուղեկցում է տառապանքի եւ ողբերգութեան մէջ ինքն իրեն գտած մարդկային գեղեցկութեանը:

Հոգեւոր գեղեցկութեան որոնումը Դաւթեանի ասք-վիպերգութիւնների առանցքն է: Նա բանաստեղծականացնում է այդ որոնումի ասքային

խորքը: Նա մզում է լսելու կանչերը այն զուարթ ու փնմ հոգիներին, որոնք տառապել են հենց միայն նրա համար, որ մարդկանց մէջ չեն գտել այդ հոգեւոր գեղեցկութիւնը բազմապատկելու ո՛չ մղում, ո՛չ ցանկութիւն:

Արեւելեան տարփուհին՝ Կլէոպատրայի կերպարանքով, առեղծուած ու հանելուկ չէ, պարզապէս «ծախու մի էգ» է, որ շնչել է հոռոմների զագիր շունչը եւ լլկուել նոյն այդ հոռոմներից:

Կլէոպատրամ՝

Համաճանաչեմ բազմաց ու բիրքերի,

Համաճանաչեմ խափշիկ գիւնտրների,

Լոկ մի գիշեր նրա ննչաքառը բերուած,

Եւզիմ կառաքիմատուած սպասկների...

Այս Կլէոպատրան, անհնար է, որ հասկանայ Արտաւազդի տառապանքը: Նա նայում է հայոց արքային ինչպէս ամենի մի էգ՝ ահարկու, կիսամերկ...

Շրթումները խոնար եմ ու լուրջ

Եւ ուռնգելիմ շաղ կայ ու քրքում...

Սա չգիտէ, չի հասկանում, չի տեսնում, չի զգում Արտաւազդի մորմոքը, սրտի ցաւը եւ հոգու մղձաւանջը: Հայոց արքայի մէջ նա տեսնում է միայն արուին: Վաւաշ ու բղջախոհ, ցանկասիրութեան գալարումների մէջ, նա կորցրել է ամէն ինչ: Նա տեսնում է միայն գերեալի մարմինը: Իսկ գերեալը կանգնած է երկրպագի միւս ծայրում, գերեալը հպարտ է եւ անառիկ, ուսերին, սրտի եւ հոգու մէջ հայրենիքի կարօտը, եղջերուների վաշերը եւ նաւասարդեան առաւօտը: Գերեալը չի տեսնում չքեղօրէն լուսարձակող տաք մարմինը, գերեալը հեթանոս չէ, անապատական է կարծես եւ կարծես նրա երակներից քաշել-հանել են առնական ու ամենի արոււթիւնը:

Կլէոպատրա, գեղեցկութիւնդ մարմնատր

Բազմապատկիր քո հոգեւոր գեղեցկութեամբ

Եւ տուր ինձ ծախս իմ ծխանի...

Արտաւազդ քրմապետի կեցածք ունի, իսկ մտածողութիւնը քրիստոնէական վարպետութեան շեշտեր: Հեթանոսի նրա արտաքինի մէջ դրուած է քրիստոնէայի առաքելի սիրտ: Ըստ երեւոյթին, մեր պատմիչների հնօրեայ մեկնաբանութիւնների հետքերը զգացնել են տալիս: Այդպէս է կամ գրեթէ այդպէս է վարուել նաեւ Ն. Զարեանը «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» պատմա-գիտաբանական ողբերգութեան մէջ:

Առաքելութեան գունազարդումը՝ հոգեւոր առաքիներութեան եւ հայրենասիրութեան նշանակ է գտնում բանաստեղծների ստեղծած կերպարներում: Մինչդեռ, մեր կարծիքով, մոռացում է, երեւի, գլխաւորը՝ մարդու հեթանոսական տիպարի լիակատար ամբողջականութիւնը: Բացի դրանից, պատմութիւնը աւելի ողբերգական չի դառնում գերեալի քարոյախօսութեամբ: Արտաւազդը պահանջում է հոգեւոր գեղեցկութիւն, երբ այն պէտք էր որոնել հենց Կլէոպատրային նուաճելու մէջ: Մինչդեռ «ծախու այդ էգը» ձրի մատուցում է իրեն՝ մերկ մարմնի հրապուրանքներին յենւած: Նուաճելու հարկ չկայ, նուաճողը ինքն է սալիս իրեն շղթայելու կապանքները: Սա պատմական անախրոնիզմ է կամ մոգեմանցում՝ վիպեր-

գութեան քրիստոնէական սրբազրմամբ: Այդ է պատճառը, որ «Ո՛ր, տայր ինձ զծովս ծխանի...» ապի մէջ չկայ լարուած զրամատիզմ, ողորկական-նութեան զգացում: Արտաւազգը չի բարձրանում ընթերցողի աչքում հայ-րենակարօտ ծայնի իր ողջ արտմութեամբ կամ փառազրկուած ու գերեալ արքայի բովանդակ զարհուրանքով: Արտաւազգը սեքսուալ մոլուցքին հակադրում է հայրենիքի հանգէպ իր սէրը եւ մարմնաւորը հոգեւոր գեղեցկութեամբ բազմապատկելու պահանջը: «Արա Պեղեցիկ ու Շամիրամ» առասպելի կոնֆլիկտի իւրօրինակ կրկնութիւնը Վ. Դաւթեանին չի տարել բախման մի նոր մոգել գտնելու ճանապարհով: Նա կանգնել է հին ու փորձուած տարբերակի վրայ, եւ սա նրան աւելի կարեւոր է թուացել, քանզի առաքինութեամբ լուսապսակուած հայրենասիրութիւնը յաւիտենական արժէք է:

«Ո՛ր, տայր ինձ զծովս ծխանի...» միայնագութիւնը գեղարուեստական փայլուն կատարում ունի: Նախ՝ մուտքը. դա հին եգիպտական-արեւելեան արքունի հանդիսաւորութիւնների տարաշխարհիկ զոյներով է օժտւած: Հնչունական-ափիմային դաշնակների միջից հասնում է հազար շենփորների որոտումները:

Եւ պղնձէ հազար շելտր պարգուեց ծագող արեգակին,

Եւ պղնձէ արեգակից փայլատակեց հազար ծնծղայ,

Եւ շեփորներն ալ պղնձէ զօղանջեցին միանգամից,

Միանգամից ծնծղային ծնծղանիցը պղնձածայն:

Ռա աստծուն նուիրուած հրաշալի օրհներգութեանը հետեւում է սրբազան Նեղոսի բացարձակապէս գեղանկարչական նկարագրութիւնը:

Նեղոսն ի վար արեգակի ցոլմն է հոսում՝ պղնձ է լոյծ,

Նեղոսն ի վար ասեւ վազրի մորթիներ եմ վռնել հազար:

Եքեղ, արքայական-տօնահանգնային պոյների միջից յանկարծ լողում՝ գուրս է դալիս Նիլոպատրայի հնադարեան գեղեցկութիւնը: Այս մասը շատ է յիշեցնում Վարուժանի Արմենուհու լուսանքի եւ զգեստաւորման տեսարանը («Արմենուհի, դու մեծ ջահն ես մզկիթին»):

Կլէռպատրա, թագաւորաց ցու թագուհի,

Կլէռպատրա, գեղեցկութիւն տիեզերաց:

Իսկական գեղանկարչական պատաստ է Նեղոսն ի վար լողացող ճերմակ առաջաստների տեսիլքը, եւ հէնց այդ համակ ճերմակութեան մէջ լողացող կարմիր ու բոց առապաստ: Բացարձակապէս զունային-գեղանկարչական միջոցներով է Վահագն Դաւթեանը հասնում տեսարանի լիակատար վերարտադրութեանը: Պղնձակուռ սողներում մեր դիմաց ելնում է թատերայնացուած գործողութիւնների ստուգապատում ճշգրտութիւնը:

Նեղոսն ի վար հազար ճերմակ առաջաստ է լողում դանդաղ,

Հազար ճերմակ ու մի կարմիր, բոց առաջաստ,

Նեղոսն ի վար հազար-հազար թի է ցոլում արեւի դէմ,

Ու թիերից հալած պղնձ է կաթկրում...

Այս գունագեղ, փարթամ, տիպիկ արեւելեան նկարը թատերային-սառը գեղարուեստական իրականացման մէջ, ապշեցնում է ստատիկ-անշարժ վիճակի գեղանկարչական թափով: Այդպէս եւս զրուած նաեւ մշացած տեսարանները: Սա ոճ է Վահագն Դաւթեանի համար: Պակաս գու-

նազեղ, թրթուրն եւ օդով ու շարժմամբ յագեցած տեսարանը նրա նախա-
սիրութիւնը չէ: Նա ընտրում է վայելչաբայ ոչ եւ ազնիւ գեղեցկութիւնը
շարժման դադարի սկզբում կամ վերջում: Նա յղկում, շտկում, դրստում է
ամէն մի մանրուք՝ գեղեցկացնելու համար տողը, բառը, հնչերանգը:
Դաւթեանական պատկերի մէջ ներշնչանքը երկրորդ պլանի վրայ է՝ ա-
ռաջինում զործում է զգաստ, խելամիտ, ճաշակաւոր ճարտարութիւնը: Նա
բառերը խօսեցնում է ձեւի համապարփակ իշխանութեան ներքոյ: «Ասք
սիրոյ եւ սրի» վիպերգութեան մէջ կայ լուսաբացի մի նկարագրութիւն:
Հայ բանաստեղծութիւնը չգիտէ բանարուեստի նման ճարտարութիւն:

Եւ առաօտ եղաւ մտաստարդեան,
Եւ վաղ առաօտն ալոյ մտաստարդեան
Իբրեւ վարդամատն մի Բրմուհի
Ոտաբութիւ կանգնեց թրան վրայ
Եւ ապա Քայլ առաւ լսեցելն ի վար,
Եւ մատներինց նրա ու ծոփնայից
Վարդեր կաթկոթեցին հաղ ու Բարին
Ու շաղութին շաղեր շուշանածայն:

Անմիջապէս նարեկացու տաղերի հետ զուգահեռներ Նրահրող այս
նկարագրութեան մէջ ամէն ինչ գեղանկարչական պլանով է արուած: Եւ
լուսաբացը՝ «վարդամատն Բրմուհին», եւ մատներինց ու ոտքերինց վարդեր
կաթկոթող ու շոգեր շաղող նրա ծաւալումը տեսարանի հեռատկերի մէջ ե-
րեւում է վերածնութեան զարաշրջանի բնապատկերային ռեալիզմով: Սա
ստատիկ բնութիւնն է, որ չի հոսում, շարժում, նօսրանում կամ ահագ-
նանում: Լոյսը չի խաղում նրբերանգային ծաւալումների մէջ: Վահագն
Դաւթեանի բնապատկերին պակասում է նրբերանգային խաղերի անոր-
սակի բազմազանութիւնը, հոսունուտ շերտութիւնը, խռիւ, կոշտ, կենդանի
ու շնչող բնական տարածութիւնը:

Սա գեկորատիւ բանութեւք է, բեմական չքեկութիւն, յայտերի խաբկան-
քի մէջ երեւացող թատերական յարգարում, որ չափազանց նման է իրա-
կանութեանը, գեղեցիկ է, վայելչատես, ճշգրիտ, բայց եւ իր մէջ ունի հէնց
սեփական ինքնաժխտումը:

«Ասք սիրոյ եւ սրի» վիպերգութեան սիւժետային հէնքը Փաւստոսի
պատումն է: Բանաստեղծը թոյլ չի տալիս օրեւէ շնչում հինաւորաց առքի
մանրամասնելից: Կերպարներն այդ պատճառով ո'չ միայն աղօտ են
զծագրուած, այլեւ շունեն ինքնուրոյնութիւն՝ պատմական մեկնաբանման
իմաստով: Գնելը փաւստոսեան Գնելին է, Փաւստանձեմը, Տիրիթն ու Արշա-
կը՝ նոյնպէս: «Ասք»-ում բացայայտուած չեն վարհուրելի ողբերգութեան ո'չ
անձնական-անհատական, նոսեւ հոգեբանական, եւ ոչ էլ՝ առաւել եւս,
քաղաքական պատճառները:

Երեք դուստները կարծես հէնց այն փանդիտապարկ երգիչներն են, ո-
րոնցից Փաւստոսը լսել է վիպերգութիւնը: Դաւթեանը գուսանների իրար
յաջորդող պատումներին չի յաւելում ոչինչ: Նա կարծես մի հին ձեռագիր
մատենանից գտել-հանել է ժողովրդական բանասացութեան փաւստոսեան
տարբերակը եւ շէնացնելով, ճսխացնելով ու փոքր-ինչ ժամանակակից
գարձնելով գուսանական լեզուաոճական-պատկերային համակարգը՝ ներ-
կայացնում է ընթերցողին:

Մեկնաբանման ելակետ կարող է ծառայել «Ասֆ»ի ամենավերջին քառասուղը.

Եւ ինչ... Սէրը մեռաւ...

Աստուածները հայոց, գայրացած ու վրդով, —

Թողիմ իրենց գահերն ամպածրար

Ու փակուեցին մօրն ամձամերում...

Աստուածներից թափուր հայոց հողին

Այնպիսիքներ իբրեւ այնուհետեւ...

Բանաստեղծի մտայնացմամբ «Ասֆ»ի այս աւարտը կարող է քանաձեւել հայոց հետագայ ճակատագրի ընթացքը: Սէրը մեռաւ ու հայոց հողը զրկուեց աստուածներից, ու արհաւիրքն այնուհետեւ իջաւ երկրին: Գուսանը կարող է, ի հարկէ, հէնց այս չափով միայն խորամուկս լինել ժողովրդի ճակատագրին: Բայց գուցէ քեզ հետքեր թողնողները կերպար է, հետեւաբար, իր՝ բանաստեղծի իտէալի ու մտածումների կրողը: Նա չափազանց քիչ բան է ասում ու մտածում ողբերգութեան աւարտից յետոյ: Նրա մէջ չի նստած մարգարէն ու պայծառաստեւոր: Նա սոսկ վիպերգող է, այն էլ, երեւի, հեթանոս, քանզի սղում է վաղուց անձաններում պատրաստարարած աստուածներին:

Նոյն սկզբունքով է գրուած նաեւ «Ճերմակ ձիւնոր» ասք-վիպերգութիւնը: Ոչ մի չեղում փառաստեան սրատումից: Վիպասանքի սեփական իմաստաւորումը չկայ, ա՛յն՝ որ ինքնուրոյն եւ ինքնատիպ կը դարձնէր ասպետական մեծահոգութիւնը ինքնակալի վայրագ ու աններող դաժանութեան հանդէպ:

Առհասարակ բանաստեղծը, ըստ երեւոյթի, մոռանում է, որ հայ հին առասպելներն ու պոյնները, ինչպէս նաեւ պատմա-բանահիւսակաւ նիւթերը զրի են առել քրիստոնէայ պատմիչները: Լինելով հեթանոսականին հակառակ գաղափարախօսութեան մարտիկներ, ինչպէս նաեւ աւատական ուժեղ պետականութեան ու դասակարգային ամուր բաժանումների կողմնակիցներ, հայ պատմիչները հին սյդ զույցներին ու պատմութիւններին, ասքերին ու վիպերգութիւններին ինչ-որ չափով հաղորդել են իրենց կրօնական ու քաղաքական համոզուների ուղղութիւնը: Փառաստեան ուրազութեամբ Մուշեղը աչքի է ընկնում տիրուսէր վարքով եւ դասային ենթաստիճանաւորումն ընդունող մէկի ամուր համոզմունքով: Երբ Պասք թագաւորի առաջ ամբաստանում են Մուշեղին, Աղուանից Ուռնայր թագաւորն գերելու եւ ազատ արձակելու համար, զօրավարն ասում է. «Բայց ես քաղաւոր մարդու վրայ, որ զլսիմ թագ է կրում, ո՛չ ձեռք եմ մեկնեմ, ո՛չ մեկնում եմ եւ ոչ էլ կը մեկնեմ: Եթէ ուզում ես ինձ սպանել, սպանիր, բայց ես, եթէ երբեքից մի քաղաւոր մարդ ձեռքս անցմի, ինչպէս շատ անգամ պատահել է, ես չեմ սպանի քաղաւոր մարդուն, քէկուգ յիմ էլ սպանեմ»: Պասք թագաւորը գահոյցից իջնում է, գրկում Մուշեղին եւ լաց լինում: Յուզել էր միապետին Մուշեղի սիրասէր հաւատարմութիւնը եւ «թագի» անձեռնմխելիութեան հանդէպ ունեցած նախարարական բարեպաշտ երկնազածութիւնը:

Շապուհի կանանոցը ետ ուղարկելու մեծասիրտ, ասպետական վարմունքը տրամաբանուած է նոյն բարեպաշտութեամբ: Մուշեղը Փառաստի իրէպականացրած հերոսներից մէկն է: Այդ իղէալը տեղադրուած է հայ-

բենասիրութեան, տիրասիրութեան, գահին հաւատարմութեան, հայրենիքի թշնամիների հանդէպ անողորմութեան, համարձակութեան, քաջարի անվախութեան, վեհանձն բարեպաշտութեան, կրօնասէր վարքի եւ եկեղեցու համար անձը զոհաբերելու պատրաստակամութեան մէջ: «Նա կեանքը դրել էր երկրի վրայ, — գրում է պատմիչը, — եւ կը մեռնէր Բագ ամառ, իր խկական տէրիւի, երկրի բնակիչների, քրիստոնէական հաւատի, Աստուծոյ հաւատացող եւ Քրիստոսի ամուսնով մկրտուած ժողովրդի, եկեղեցիների, Արաբաց անկրտած սպանների, Քրիստոսի վկայարանների, Աստուծոյ ուխտի Բոյքերի եւ եղբայրների, մերձաւոր սոսիակների, մտերիմ բարեկամների համար: Այս դէպքը վեր են հանում միջնադարեան պատմիչի սեւեռուն նպատակամղումը — Մուշեղին ներկայացնել քրիստոնէական բարոյականութեան ու տիրասիրութեան լուսապսակով:

Վահագն Դավթեանը Շապուհի կանանոցը ետ ուղարկելու Մուշեղի քայլի մէջ տեսնում է միայն տղամարդկային վեհանձնութեամբ կողմնորոշուող քաջ զօրականի հպարտ մեծագործութիւնը:

Շապուհի դէմ եմ ես պատեղազմում

եւ ոչ իր կամանցը...

Վճռական նետում է նա ծանրօրէն շնչող իր զօրքին, որ պահանջում էր վրէժ եւ փոխհատուցում:

Մուշեղի պատմական կերպարից բանաստեղծը առանձնացրել է միայն այս պիտը, եւ, այստեղ, արդէն հայ զօրավարի բնաւորութեան հմայքը սոսի անձնական շեշտեր է առնում, հեռանալով աւատատիրոջ ու մեծատոհմիկ ազնուականի հնօրեայ իսկութիւնից:

Չափազանց հետաքրքիր է «Թոնկլակեցիներ» պոեմի ճակատագիրը: 1961ին հրատարակուած առաջին տարբերակը Դավթեանը հիմնովին վերամշակեց 1968ին: Պոեմի պատումների սոցիոլոգիական, դասային ու դասակարգային շերտերը չափազանց նուազեցին: Գիւղացիական հզօր շարժումների առաջնորդի կերպարը առաջ մղուեց աւելի մարդկային բնաւորութեան եւ ճակատագրի տեսակէտից: Փաստօրէն թոնկլակեցիները բնահանրական կերպարը փոխարինուեց Սմբատ Ձարհեանցու հոգեբանօրէն նրբին մշակման եղծարկուած կերպարով:

Պատմութեան միջից գուրս լողաց արդարութեան ու հաւասարութեան համար մարտնչած «հերձուածողի» լուսաւոր կերպարանքը, որ ահարկու է իր բարոյական յամառութեամբ, որ սիրել է, ունեցել բազում թուլութիւններ, բայց ի վերջոյ ելել է ինքն իր միջից ու գնացել Աստուծոյ մօտ — ոչ թէ գանգատի, այլ՝ խորհրդի ու գառի: Ծումբայ վանքի վանահայրը մոմի լոյսի տակ նկարագրում է գաժան ժամանակների իսկական պատկերը: Սիմաւոն զրիչը օգնութեան է կանչում տիրաջը՝ ստուգապատում լինելու համար:

Գաւգի ծամամակը բարեկալատ չէ բնա...

Ճշմարտութեան համար ու ողջամիտ խօսքի...

Դժգոհում է նախ Սիմաւոն զրիչը Հայոց աշխարհի քահանայ-հովիւներին, քանզի նրանք «ոչ միայն Քրիստոսի շեղուել, այլ գործում են նրան

ճիշտ հակառակ», կարգալուծ է եղել նրանց միջից սէրն ու ազնուութիւնը,
իշխանները դարձել են չար ու յաւիշտակիչ:

Թունդրական շարժման պատմիչը գծում է ժամանակների դաժան
պատկերը.

Եւ արդ Հայոց աշխարհ, չունես խաղաղութիւն,
Սառնում է վրադ անագայրոյն մի տի,
Զնգաններդ բոլոր լիքն են բերնէքերան,
Ուրկանոցներդ քո լիքն են ամեյններով,
Եւ ալլերդ խոնում խեղճանոց են նետում:
Օ՛, գարիտիկ բարբէյ, ժամանակներ դժնի,
Այդ, երեքից մէկը Բնիչ է հաւատոյ,
Եւ երկուսից մէկը՝ վարձու լրտես:
Ու դու խեղդես պիտի ծայրը սրտիդ,
Խեղդես ծայրը խղճիդ ու հաւաչդ խեղդես:
Եւ բանապկու մարդիկ, նեղ ու բաւ մարդիկ
Սապարէզ են գտել ու ելել են որսի:
Եւ բաւ է Բեզ կնքեն հերձուածողի անուամբ,
Որ կորստեամ զնաւ սերնդէ-սերունդ:
Եւ վերացել են արդ վտանաւթիւն ու սէր,
Զի վտանաւում, աւա՛ղ, հայրն իր զաւակներին,
Այրամարդը՝ կնոջ ու եղբայրը՝ եղբօր:
Եւ խեղդում է, խեղդում մարդու կեդպարը սուրբ,
Եղծանում է հոգին...

Ժամանակներ դժնի,

Այդ, սաւա մատնաններ են վանքերի մէջ գրում,
Կաղապարով ձուլում փծում ու սին տալեր,
Համնարդ չի շորում, ո՛վ ժողովարդ իմ հայ,
Որ Բեզ նեցուկ լինի տաքածամէն աշա սեւ,
Եւ պանկանի յաւաւ հրաշագործ հոգիդ,
Օ՛, գարիտիկ բարբէյ, ժամանակներ դժնի,

Ինչպէս պիտի արդեօք

Այլքան ամօքապարտ ու արիւնոտ տեմոկ

Դում երեսաք ցալիք սեյունցներին:

Դարի ու ժամանակի այս բնութագրութեան մէջ ընդհանրական շատ
ճշմարտութիւն կայ: Բռնապետութիւնը միշտ էլ արիւնոտ է: Անագատու-
թեան ու անհասարակութեան պայմաններում մտածող մարդկանց հոգե-
ւոր-բարոյական կեղեքումը աւելի ուղեւորական շեշտեր ունի իր մէջ:
Հերձուածող պատմիչը ուրուագծում է դարի ճշմարտութիւնը: Դա կեղծի-
քի, մատուցեան, դաւի, ամօթապարտ ու արիւնոտ մի իրականութիւն է:
Այստեղ չկայ ոչ խիղճ, ոչ միտք. «Այրեւի խոնում խեղճանոց են նետում»,—
արձանագրում է պատմիչը,— բնութագրելով ժամանակների դժնի ու զար-
հուրեղի բարքերը:

Վահագն Դաւթեանը կարողանում է ժամանակների հեռուից տեսնել
աղանդաւորական ազատամտութեանը ծնունդ սուտղ պատմա-հասարա-
կական պատճառները:

Զօրեղ լինելն այնքան կայրետը չէ,
Կարենար է լինել արդարացի...

Մտրատ Զարհեանցու այս խօսքը տալիս է ազատութեան ու արդարութեան համար մարտնչած մարդկութեան բոլոր մեծ գաւակներին հասկանալու բանալին: Թոնդրական շարժման առաջնորդին առաջ մղողը հէնց այս սկզբունքն է: Նա գիտէ, որ արդարացի է հաստատութեան իր պահանջին եւ ազատութեան իրաւունքի հաստատման համար թափուած արեան ապագաչէն ռզրումներում: Նա բռնատիրութեանը հակադրում է կենսալիկնդ այն ազատամտութիւնը, որ ճանաչում է Աստծոյ հետ սեղան նստելու պարզ իրաւունքը:

Դալթեանը հիւսում է Զարհեանցու կերպարը միջնադարեան տաղերգութեան հնչեղ ու ոգեցունչ ձայներով: Նա բարձրացնում է յեղափոխական աղանդատրի մարդկային արժանիքները՝ թոնդրական շարժման հիմնականական ու խորապէս ժողովրդային բնոյթը պարզելու համար: «Թոնդրականներ» պոեմի այս վերջին տարբերակը դրամատուրգիական նկարագրից զուրկ է, բայց աւելի զօրեղ է դրամատիկմը: Հպիկական պատումը շերտացուած է մեղմահոս քնարականութեամբ: Նոյնիսկ Մումբայ վանքը կործանելու տեսարանը քանաստեղծը կառուցում է առանց արիւնոտ ռեալիզմի:

Հրաշալի է Մանգկերտի շուկայի նկարագրութիւնը, որ եւ իր վրայ է առնում կոմպոզիցիոն բաւական յուրձ ու ծանր միախա: Այստեղ է ուրուագծւում եւ երկրի կացութիւնը, եւ ժողովրդի վիճակը, եւ արաք գերեկարների կամայականութիւնները, եւ թոնդրական բազկի ուժը, եւ հայոց բախտին մշտապէս «վայ» կանչող ձեր ցնցոտիաւորի չարագուշակ ու գեհնական հառաչը:

«Թոնդրականներ» պոեմի նոր տարբերակը գեղարուեստական տեսակէտից շատ է բարձր առաջինից: Այստեղ բանաստեղծը կարողացել է պատմութիւնը բեռնաթափել պատմութիւնից, եւ թողնել բանաստեղծական իսկութիւնն ու ճշմարտութիւնը:

«Թոնդրականներ» պոեմը Դալթեանի գեղարուեստական խոշոր նուաճումն է:

ԱՄՍԷՆ ՂԱՋԱՐԵԱՆ



ԱՐՄԷՆ ԴԱԻԹԵԱՆ

Բանաստեղծ Արմեն Դալթեան ծնած է 1964ին, Երևանի Նախնական կրթությունը ստանալէ հոգք, կ'աւարտէ Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքը եւ Գեղարւեստա-թատերական հիմնարկի թատերագիտութեան բաժինը: 1987-90 տարիներուն կը պաշտօնավարէ «Գարուն» ամսագրի մէջ՝ իբրեւ բանաստեղծութեան բաժնի պատասխանատու խմբագիր: Արմեն Դալթեան ցարդ հրատարակած է մէկ գիրք՝ «Նորավամք» եւ հայրենի մամուլի էջերուն ստորագրած է զրական հարցերու անդրադարձող յօդուածներ:

Մենք մինչեւ հիմա չենք ըմբռնել մի սովորական աբսիւրդ, որ 20-25 տարեկանում բանաստեղծը պիտի արդէն ձեւաւորուած լինի, պիտի արդէն ունենայ իր աշխարհընկալումը, իր գաղափարական դիրքորոշումը, իր պատկերացիւն համակարգն ու լեզուաշխարհը: Մի խօսքով՝ պիտի ունենայ Բայլ առ Բայլ իրազօրծուող ստեղծագործական յստակ ծրագիր: Այնքան յստակ, որ ոչ մի գայթակղութիւն կամ սպառնալիք նրան չկարողանայ շեղել իր մեծ նախապայտից: Հայ դասական բանաստեղծների կեանքն ու գործը ինձ ուրիշ բան չեն յուշում, իսկ ես չեմ կարող եւ չեմ ուզում ունենալ ուրիշ չափանիշներ:

Մենք վերջապէս պէտք է բարձրաձայն խոստովանենք մի դաժան ճշմարտութիւն եւս, որ Եղիշէ Ջարեմցից յետոյ այս հողի վրայ ստեղծագործած ոչ մի բանաստեղծ չի կարողացել բացարձակապէս ազատ լինել մերօրուայ, երբ մտնել է սպիտակ բոքի առաջ: Սա մենք պէտք է ընդունենք ոչ թէ այն պատճառով, որ կայր ենք, չենք տեսնում եւ հողին ենք հաւասարեցնում Ջարեմցից յետոյ ստեղծուած մեծ ու փոքր արժէքները, այլ օրովհետեւ դա մեզ պէտք է այսօր եւ մէկընդմիջտ հասկանալու համար, որ ժամանակակից երիտասարդները քարեբալտութիւն ունեն ձերբազատ լինել Նեմֆին օսպատակիչից («Գարուն», 1988, թիւ 2):

Արմեն Դալթեան

Ա. ՂԱՆԹԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդերի մէջ մկրտուած մարգագետիններով
տողանցում է անթէ՞
Ուժի խառնամբոյս թիկնագօրը...
Ամենատես իմ Յոյս,
ես՝ մոմեղէն լծի խոնարհագոյն մի նորսո,
երկնայաւանդի խաչքարերի ծալքեր՝ ուղեղիս մէջ,
իմն աշուրթեան շնորհիւ մարմինների լուսապատկերները՝ իմ աչքերում,
ծանր աղօթք եմ բերում քո սեղանին՝
մկաններին ցաւը ժպիտիս մէջ թաղած:
Մանր հոգս ու վախի մըջնանցի միջից
ես նետել եմ կեանքս անդամների վրայ
իբրեւ կամուրջ՝
Սիրոյ եւ Ցասման ափեր գտանող,
շնորհատու իմ Յոյս,
Գերանակապ կամրջի նոսրանների ցաւով
ձգիր նետարդերս՝ կրելու համար
անկումներով յղի ժամանակն այս անձես
եւ արեամբ թաթախուած մոխիրի մէջ,
աբքունաբարեր զազուկ հարուստ օդում
սպանաւորի շունչը իմ ժառանգած:
Երանանների թռիչքներ կապկոզ կամարների տակ բանտախցերի՝
անձինք նուիրեալ,
իտասպատուող կանթեղ,
սեփական թազի չմակարդուող կարօտ
եւ Աստուծոց Երկիր մի անվանք.
վրէժխնդիր իմ յոյս,
ժանգապտանց տիղմից մաքրիր սուրբները՝ ճանհի տակ սպասող,
աշուրտղ Բարսէղների կրդեհներում խարկուած ափերիս մէջ
ամօթ ներարկիր՝ շրնդունելու
ճերմակ գլուշների դարաւոր հեքթափոխը
եւ ցօղելի մէջ մկրտուած մարգագետիններում
նշտիլ սեւեռումը մարդու որդիների:

★ ★ ★

«Զարթի՛ք, փառ՛ իմ, զարթի՛ք».
 մենք դեռ կը քայլեմք դէպի անագանը անսահման սիրոյ՝
 վրէժի թոյնից մեր հոգիները փխտահանելու,
 եւ սակայն հիմա
 մենք, — պահանջատէր զարդուգէնի մէջ արդարացի,
 մենք, — իրաւատէր վնիւների մէջ կոթողայիմ, —
 մենամարտիկի շնոտագրուող կրակահերթով
 երգում ենք յամառ. «Զարթի՛ք, փառ՛ իմ, զարթի՛ք»:
 Սուրբ սուրբները վերջին պահն են զարթուցիչների.
 «Զարթի՛ք, փառ՛ իմ, զարթի՛ք»:

Ազգ ու ժողովուրդ, ցեղ ու ցեղախումբ,
 մարտամբոխների սեւեռածուքեամբ,
 միմիանց դրօշ են պատառոտում,
 զինանշաններ՝ յանձնում հրի,
 եւ նրանց հոգու հայելիների մէջ
 (որտեղ ակունքն է արցունք-առուակների)
 արտացոլում են կրակ, դիեր, ռեանշ՝
 ի հաւաստումն հոգու աղաւաղման,
 եւ այս խեղանդամ չափանիշների խաչմերուկում,
 հաւատի պատառոտում հանդերձներով անգամ,
 հրկիզում զիմանշանների խարոյկների միջից
 մենք երգում ենք յամառ. «Զարթի՛ք, փառ՛ իմ, զարթի՛ք»:
 Մանուկ հոգիներին ի փրկութիւն՝
 զարթի՛ք, փառ՛ իմ, զարթի՛ք:

Անդունդի մատնուած վիրատը աղանու աններդաշնակ ձայնով
 բայց մեր արնաշաղախ կտուցներին
 ձիթեմու նիւղը սաւոր պահած՝
 մենք երգում ենք յամառ. «Զարթի՛ք, փառ՛ իմ, զարթի՛ք»:
 Բոլոր անդունդներին ի պատասխան՝
 զարթի՛ք, Երկիր, ամապստեղի շոալլ ցնծալ
 եւ ծածանիր, ծիածանիր Բո ծիրանին աստուածընծայ:

★ ★ ★

Աճճճճճի իմ Յոյս,
 Երբ վարձակները, հրեշտակների թեւեր հագած,
 դէպի ինձ են գալիս երկինք բեմադրելու,
 դու ինձ մի լիիր այդ պահերին:

Երբ ծառայաւոր աղմուկների մէջ
 արծաթով եմ օծում նշտադները,
 երբ հերձում եմք հոգի՝
 Նոյնի քախումը չլսելու տալով,
 դու ինձ մի լիւր ալո պահերիմ:
 Անբեկանելի նակատագրի ճամբաների մէջ
 երբ սղոցում է ցեղակրօն ուխտին զինուորագիր անտառ,
 դու ինձ մի լիւր ալո պահերիմ:
 Այսօր խեղճութիւն հանդուրժող հողի խոր խորհերից
 երբ արմատները, հողը շռտ տալով, չեն ծառանում,
 դու ինձ մի լիւր ալո պահերիմ:
 Զասպատակուող իմ յոյս,
 մանուկների արեւն դու առաջին վարակ,
 Յոբի վերջին դրօշ,
 Կախի Բարայրի մէջ դու լոյսի կաթոց՝
 շքաւարէ բողբոջ վերանուցող,
 լուսալատութեան ամապատներում մոլեգնող ծարաւի
 դու միակ վկայ,
 ծարաւողներին՝ դու զէմքի անձրեւ
 եւ պեզաւների կողերի մէջ խրոտող պայծառատես խթան,
 դու ինձ մի լիւր կակածների պահիմ:
 Անէշտութեան ձիւց սաւցաղաշտերում,
 Էդիվայսներդ փրկելու համար,
 Բարաթալներ եմ կրծքով ընդունում
 Ի փառս Սիրոյ ծնունդների.
 մի լիւր նրանց ալո պահերիմ:

★ ★ ★

Բարակիքան աղջիկ-Մուսա-Նակատագիր,
 Օրուայ աղմուկի մէջ դու արթմնի տեսիլ,
 անբուն գիշերների մղձաւանջ ու աղօթք,
 Գեղեցիկ ես դու
 ոյալես երկրպոլս սէր չունենալու դատաւանդ,
 եւ գեղեցիկ Բո հագուստները
 լուսաբողբայական պատաստների վրայ,
 գեղեցիկ ես դու ծաղիկների պէս,
 որ արտասում են ցօղ ու եղեմով գիշերները
 յանուն մաքրութեան առաւօտների:
 Յօդ-կաթիլների հուլումբաշարից
 բարձրացրու դէպի վեր Բո հայեացքը,
 տես, երկինքների մագաղաթներին
 մայրամուտների ալիւնաներկով



մեռնող արեւի տարեգրութիւնն է ամէնօր գրում,
 զուցէ եեւեց այսօր՝ ինչ-որ փողոցի ինչ-որ անկիւնում,
 ծառ ու պատարագ չհարցնելով,
 ինձ էլ վտարեմ մարմին-տաղաարից,
 տես, երկինքների մագաղաթներին
 ծխով ու մրով ուտուչ եմ արում սրբապատկերներ,
 զուցէ հէնց վաղը այդ նոյն երկնքից
 ես պիտի դիտեմ իմ թաղումը:
 Բարակիրան աղջիկ-Մուսա-ճակատագիր,
 մուրակների ուղեծիրները մե՞նք չե՞մք որոշել
 եւ պտղատների արագութիւնը մե՞նք չե՞մք փոխելու:
 մեզ տրուած է մի սիրտ, մի եւ մի աստուած,
 եւ չեմ յետաձգում ոչինչ այս վայրկեանից,
 եւ զալիս եմ ես դէպի Բեզ
 իբրեւ սիրտ, իբրեւ հող եւ իբրեւ արեւայ:


ԱՐՄԷՆ ԴԱԻԹԵԱՆ

Գրէ՛ք

... ե զգուշան հաշիւ առաքել շուրհ
 նի՛ր պոյսի հշուհի ոչ-հաշիւան
 Գրաւան շքեմեմի պարկուշտ փայլի
 Զարեմի անհանձն իրաւ լուս:

Այլ իւրիկ. Եղանդի, եւ շնչանքի հաւան
 Զուգեմեմի իրաւ-հաւան փայլ,
 ու անհաշիւ հանքեկ պարկուշտի ձգում
 Եղանդիցում արեւանք - Երեւ Բեզ - !

Այլ եւն առաքելի, հաւանքի հաշիւան
 Եղանդի շնչանք - Երեւ անհաշիւ,
 նի՛ր ձրեց հաշիւ-հաշիւ-պարկուշտի լուս
 Զուգեմեմի արեւանք՝ պոյսի մեջ - Բեզ:



Վ. ԱՅԱՔԵԿԵԱՆ



Բանաստեղծ Վահագն Աթարեկեան ծնած է 1963ին, Իջնանի շրջանի Աղաջուր գիւղը, մասսորական ընտանիքի մը յարկին տակ: Եօթը տարեկանին ծնողքին հետ կը տեղափոխուի Երևան, ուր հի կը ստանայ իր միջնակարգ տեքնոլոգիական ուսումը: Այնուհետև կ'աւարտէ Երևանի եւ Մոսկուայի պետական համալսարաններու ռումանական բանասիրութեան բաժինները եւ կը նետուի կրթական ասպարէզ:

1980էն սկսեալ հայրենի գրական մամուլին մէջ բանաստեղծութիւններ ստորագրող Վահագն Աթարեկեան 1991ին կ'արժանանայ Միքիլէ Կոստուի առաջին մրցանակին (Իտալիա), որ կը տրուի տարուան լաւագոյն հայ երիտասարդ բանաստեղծին: Ան նաեւ կը գրադի թարգմանութեամբ, ֆրանսերէնէ եւ ռուսերէնէ հայերէնի փոխադրելով բանաստեղծական զորքեր:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՐԱՆԸ ՉԷԻՆ ԳԱՆՈՒ

Պարստուղների համար ազօրոգներ չկան,
Ինչպէս յաղթողներին չկայ դատող—
Եւ առ է ամբողջը, սիրտ իմ, իմ բարեկամ,
Սա է նշմարաւորեան երթը գայթակ:

Երգիր, սիրտ իմ, երգիր, մենախուց իմ,
Յապ սէր չտեսած մեր սէրերի,
Երգիր օրուայ շրջուած աշխի սպիտակուցը,
Երգիր գիշերների դանդաղ լեզին:

Նրանք չէին գալու:
Ձուր մատուցուեց կարօտ
Խելացնոր նրանց հրաշանուն—
Նրանք չէին գալու,
Եւ գալ չէին կարող,
Քանի որ անգունդ է մեզ բաժանում:

Կարժուրջները սու՛տ են,
 Պիտի լցնես Բեզնով
 Այս անդունդը մեր ու մեր մէջ ընկած.
 Եւ լաւագոյն մահուան ակնկալիքներով
 Լաւագոյններն ահա՝ թափում են ցած...

Երգիր, սիրտ իմ, երգիր սպիտակուցը օրուայ,
 երգիր գիշերների դանդաղ լեղին.
 Դեռ շատ երկար պիտի դիզուեն իրար վրայ
 Հոգիները
 Մինչեւ բացուի ուղին,
 Բայց առաջին Բայով մեր առաջին Մանկան
 Ոգու հայրենիքի ճանապարհին
 Պիտի յուշ խնկարկեն,
 Պայքեն ցնորական
 Քառասուն հազար վարդ
 Ապաշխարիկ:

ԳԵՏԸ

Այնտեղ, որ երկնքի կողմ է խռուել եղէցը,
 այնտեղ, ուր բոցով է օրը բացում,
 այնտեղից անշտապ սկիզբ է առնում գետը մեր պատմութեան
 վնքի ու իմաստուն.

Նախ հասել է այն նրբանրբին,
 եւ խաղաղ է եղել նրա հունը,
 եւ ոչ ոք զիտէ՝ ինչ են շրէրն իրենց հետ տարեր,
 բայց յետոյ գետն այդ յանկարծ զահավիծել է անդունդը,
 ու բերում է հիմա միայն բառեր, բառեր՝
 բաւազօր-պղտոր, արծարագօծ, ոսկէ,
 անգոյն, ծաղկանկար, վերք-վերք բառեր,
 որոնց անկարող է վանդակել միտքը, բայց ոչ երբեք խօսքը.
 բառեր դառն ու դաստափ ու հանճարեղ:

Եւ խելագարների անհնարին մի ազգ
 —երանելի աշիւի խենթ ու շիտակ—
 ճետում է անվերջ բաղելու իր չընդհատուող երազը
 բառերի անկանոն բանձրութեան տակ,

Եւ ստէպ-ստէպ անկեալ բառերի հետ ալիքը
 ժպտում դիակներ է շարտում ափ,
 բայց խեղդողներն աշտեղ նոյնքան երջանիկ են,
 որքան փրկուածներն են աշտեղ դժբախտ,

Քանզի գետն աշտ հոսում է ոչ դէպի բառի սկիզբը,
 այլ դէպի աշտ, ինչ կար դեռ բառից էլ առաջ,
 որտեղ ամէն ինչ անկարելի անսկիզբ է,
 եւ խաւար մի լոյս է աստղատարած—

...Ես ձեզ յիշում եմ տաք, ես ձեզ չեմ մոռանալ,
 չհարսնացող բառի միածին որդիներ,
 ձեր պատրանքը հիմա նոյնքան իրական է,
 որքան մղումը՝ լողալ հոսանքն ի վեր.

ոչ ո՞ր զգալու է բախտի ծանրութիւնը,
 ոչ ո՞ր միրիելու է յատակներում.
 բայց բոլոր բառերը հաւասար ու ՆՈՅՆՆ են՝
 եւ սա է իմ կեքսը խորտակուելու:

Այս վաղն ինձ համար արդէն երէկ է,
 եւ որ կարող է՝ բոլոր ինձ մերի.
 Համբուտում շոգում է արդէն եղէզը՝
 —անցա՛ւ վտակը կասկածների:

CONFUTATIS

Ես գիտէի՝ ոչ ոքի համար եկայ ես աշտեղ,
 Սակայն աշտեղ երբուանից ~ ոչ ոք չկար էլ արդէն.
 Միայն մի կանչ էր ծանօթ, եւ իմ պատկերն էր դեռ թաց
 Տիեզերքի իմ բաժին սա կողմերում աւետեաց:
 Ու տրուելով աշտ կանչին, ու ձայնելով նրա հետ
 Երակներով իմ կապըստ ես լողացի դէպի ետ՝
 Թափառելու նրանց մէջ, որ վնասուելով ինձ սրինգ՝
 Միանուազ իմ հոգուն կաւ մարմին հազցրին.
 —Մենք ԼՅՔ ուղին անսկիւր՝ անվստահուող միմչ հիմա,
 Մենք ԼՅՔ ակումբն աշտ գետի՝ Բո թիկունքում, Բո դիմաց:—
 Ես Բայլեցի նրանց մէջ... ու չտեսայ ես նրանց.
 Շիրմատներ էին լսել՝ ինձնից առաջ, իմ առաջ:

Շիրմատներ էին լուկ, ուր ստուերները ներհուն
 Երազն էին խնկարկում պակա՛ս մեմակ լինելու—
 Ու կանչեցի ես նրանց՝
 Ջարխնոտուած այս հողով ստուերներին այդ մոլոր՝
 Իմ ծարաւի մէջ գոյոգ:

Անարձագանգ-հոռւայն խելագարուող իմ նրանք,
 Որ ապրեցին հազար մահ ու մահացան մէն-մի կեանք,
 Խարխարելով ցօղի մէջ քայլում էին զլխաբաց
 Որպէս երեք առասպել՝ իրա՛ր, իրա՛ր նուիրուած:

—Մենք ենք՝ այլոց մեղքի դէմ յանքժ մեխուած սա տեղին

Եւ սա սրտերն են մեր քաց՝ ցրիւ եկած մայրերին:—

Ես բախտեցի նրանց ինտ... քաջտեսայ ես նրանց.

Լոկ Մարդիկներ էին խնթը... քաջ-երկինք սեւեռուած,

Եւ երակից բարձրացող կարմիր մշուշ էր աղօտ,

որ իմ անգոր սունգերին մատուցանուէց որպէս օդ:

Արեւելի շողի մէջ լուկ գիշերն էր յուսակիր,

Ու կանչեցի ես նրան՝ իբրեւ միակ կողակից,

Բայց խաւարի մէջ նիւթեղ — զնդաններում եռանխտ:

Ոչ մի, ոչ մի հեռացորդ ինձ չբերեց սպեղանի.

Մանկավրէպ-ուշացած-ակամատես միայն նա

Ոգեկանչուէց իմ ծէսին ու... չգօրեց կայանալ:

—Ես եմ՝ հակուած սնարիդ եղերամայր խառնածամ,

Որ աստաստում եմ անձայն,

Եւ արտաստող՝ միայն կամ:—

Ես ծաղկեցի նրա դէմ... ու չտեսայ ես նրան,

Միայն տեսիլք էր ու տենդ, միայն պատրանք էր ու ձայն—

Յետոյ խարոյկ էր ու բոց, եւ երկինքներն՝ արդէն բաց,

Եւ իմ պատկերը՝ արդէն հրացուլքի մէջ բեկուած:

Այսպէս կամար առ կամար,

Այսպէս խոյակ առ խոյակ,

Կեանքն այս ապրեց ինձ որպէս յտերծութեան նախօրեակ:

Ամէն ինչ նոյնը մնաց

Բայց միեւնոյնը դարձաւ՝

Մառախուղուէց-մոռացուէց-մօտաւորուէց՝ վերջացաւ:

—Մենք ենք ուղին անսկիզբ՝ յանքժ մեխուած սա տեղին,

Որ արտաստում ենք անձայն՝ ցրիւ եկած մայրերին:—

Ես ապրեցի սրանց մէջ... ու չտեսայ ես նրանց.

Շիրմատներ էին լուկ՝ իմ պատկերով սեւեռուած:

ՎԱՀԱԳՆ ԱԹՍԲԵԿԵԱՆ

Ա. ԱԼԵՔՍԱՆԵԱՆ



Գրականագետ Արամ Ալեքսանեան ծնած է 1847ին, Եղեգնաձորի շրջանի Գանձակ գիւղը: 1868ին կ'աւարտէ Երեւանի պետական համալսարանի քանադիրական բաժանմունքը, ապա ուսումը կը շարունակէ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Մանուկ Աբեղեանի անուան գրականութեան հիմնարկին մէջ՝ իբրեւ մասնագիտութիւն ընտրելով հայ նոր գրականութիւնը: 1873ին, իբրեւ աւարտաճառ կը պաշտպանէ «Հայ լուսաւորական ռեսպիւբլիկ» ուսումնասիրութիւնը, որ առանձին հատորով լոյս կը տեսնէ 1880ին:

Մասնագիտական կրթութիւնը ստանալէ հոսք, Արամ Ալեքսանեան կը դրէ «Հայ Բնուդասական մտքի պատմութիւն» մեծածաւալ գործին հինգ գլուխները եւ «Ռեպուբլիկ» հարցերի շուրջ» հատորին «Հայկական օճալիզմի սկզբնաւորումը» ուսումնասիրութիւնը:

Վահան Նալբանդեանի արուեստի փիլիսոփայութեան համադրումը

Վ. Նալբանդեանը ծնունդ է 1876 թ. Վանում, սկզբնական կրթութիւնը ստացել է Վանի Արամեան, ապա՝ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում: 1894 թ. նա մեկնում է Գերմանիա եւ ընդունում Լայպցիգի համալսարան: Այդտեղ նա դրադում է «գլխաւորապէս գրական, պատմական եւ փիլիսոփայական առարկաներով» («Մշակ» 1902 թ., 280): Ուսանելու տարիներին, Գերմանիայում նա հրատարակում է գերմաներէն մի ուսումնասիրութիւն գերմանական բուրժուական-եռնկերական պատմագրութեան «օբյեկտի» մարտի հիմնադիր, պատմաբան Ֆոն Ռանկէի մասին, որի համար 1901 թ. նրան շնորհում է փիլիսոփայական գիտութիւնների դոկտորի աստիճան: Համալսարանական դասընթացները աւարտելուց յետոյ, 1901 թ. հաստատում է Թիֆլիսում, որտեղ վարում է «Մշակ»ի թատերական գրախօսութիւնների բաժինը: Այդ եւ յաջորդ տարին «Մշակ»ում եւ «Մարտ»ում լոյս են տեսնում նրա հետազոտութիւնները եւ գրախօսութիւն-

ները: «Աշակ»ի 1902 թ. Դեկտեմբերի թիւ 28 համարում, սեւ շրջանակի մէջ կարգում ենք այն մասին, որ «հայ գրականութիւնը կորցնում է մի ժիր մշակ, պատրաստուած եւ գինատրուած եւրոպական լուրջ գիտութեամբ, իսկ հայ հասարակութիւնը՝ մի առաջադիմական ուժ եւ մաքառող»:

Վ. Նալբանդեանի աշխարհայացքը եւ գեղագիտական ըմբռնումները ձեւաւորում են Գերմանիայում ուսանելու տարիներին: Բնագիտական ակնառու նուաճումները 19րդ դարի երկրորդ կէսից արդէն յեղաշրջել էին գերմանական փիլիսոփայական միտքը, որը հեռացել էր գերմանական դասական փիլիսոփայութեան բնազանցական (մետաֆիզիկական) համակարգերից եւ իր իմացաբանութեան եւ հետազոտական մեթոդների հակադիր կողմնորոշմամբ որոշակել էր իր մէջ նաեւ աշխարհի գրապաշտական ճանաչողութիւնը:

Գերմանական փիլիսոփայական միտքը այդ ժամանակաշրջանից դրսևորուեց մի քանի զլխաւոր ուղղութիւններով: Ազնոստիցիզմը որպէս ճանաչողութեան հնարաւորութիւնների իմացաբանութիւն խթանեց եւ տեսականօրէն հիմնաւորեց գրապաշտութեան տարբեր տարատեսակները եւ դրսևորումները: Վ. Նալբանդեանի հայացքները եւ գաղափարները կազմակերպող եւ որոշակող հիմքը գրապաշտութեան իմացաբանութիւնն է: Այսպէս, իմացութեան խնդիրների եւ հնարաւորութիւնների շուրջ զարգացրած Նալբանդեանի դատողութիւնները, ըստ էութեան, արւում են գրապաշտութեան ոգով՝ հիմք բնդունելով Կանտի քննադատական ուսմունքը (կրիտիցիզմ): Իր գործերում վկայակոչելով Կանտի քննադատական ուսմունքը, նա հիմնաւորում է գրապաշտութեան հետազոտական մեթոդների առաջնութիւնը: Մարդկային մտքի եւ ոգու արտայայտութիւնները, ըստ Նալբանդեանի, գիտական հետազոտութեան առարկայ են դարձել տարբեր ժամանակների ճանաչողական համակարգերի համար: Սակայն, ինչքան բարդ է եղել հետազոտուող նիւթը, խորհրդաւոր եւ հոգեբանօրէն դժուար ըմբռնելի, նրա «բացատրութիւնն էլ փոխադարձաբար նոյնքան մութ, նոյնքան երեւուն է եղել, դրական հիմքերից միանգամայն հեռու, միստիքական անթափանցիկ քողով շղարշուած կամ բնազանցական անսանձ մտքի մալլ շերտերով խողացած» («Անանխտ», 1899 թ., թիւ 10, էջ 289):

Կանտի ազնոստիցիզմը բացառում է բոլոր կարգի երեւոյթների հիմքում բացարձակ գաղափարի գոյութիւնը եւ երեւոյթների ածանցեալ եւ կրաւորական վիճակը այդ գաղափարից, մերժում է բոլոր բնազանց համակարգերի կողմից բանականութեան հնարաւորութիւնների բացարձակումը եւ չարաշահումը, որը միտքը յանգեցնում է անլուծելի հակասութիւնների եւ մղում ճանաչողութեան համար անյուսալի, անհեռանկար անտիեմփաների աշխարհը:

Դասական բնազանցական համակարգերի ճանաչողական մեթոդներն ու եզանակները բացատրուել եւ մերժուել են թերեւս բոլոր գրապաշտ փիլիսոփաների կողմից, սակայն, առաջինը «հանճարեղ Քանթը իր «Արիւտիցիզմ»ով որոշեց վերջնապէս «զուտ բանականութեան» սահմանը եւ դրանով մի շախմատից հարուած հասցրեց «ամենագէտ բնազանցութեան հիմքերին, որի վրատակներից սակայն ապագայում նոր ծիլեր արձակուեցան եւ

գուցե կ'արձակուեն դեռ երկար» (նոյն տեղում, էջ 289): Դրապաշտութիւնը աշխարհի բացատրութեան բնագոյնական եղանակները դիտում է մտքի զարգացման աւելի ցածր փուլերի եւ մակարդակների գրասեղանում, «բնագիտական ըմբռնման մանկական շրջաններին» բնորոշ, «ուր քննութեան եւ շրջանկատ հետազոտութեան փոխարէն՝ տիրում է միայն վառ եւ սրընթաց երեւակայութիւնը, վերլուծման փոխարէն՝ վերացական մտքի թռիչքը եւ բնագոյնական ընդհանրացումների տենչը» (նոյն տեղում):

Վ. Նալբանդեանը հետեւողական դրապաշտութեան դիրքերից է վերլուծում նաեւ բնագոյնական իմացաբանութեան էութիւնը, նրա բնորոշ յատկանիշներից մէկը համարելով դիտելիքի բացարձակումը: «Բնագոյնացութեան յատկանշական գծերից մէկն է ամենագիտութիւնը: Մինչդեռ գիտութիւնը որեւէ բարդ եւ առժամանակ անլուծելի մի երեւոյթի առաջ կանգ առնելիս ըմբռնելու եւ հասկանալու ծարաւով պապակւում է եւ միւս կողմից համեստութեամբ խոստովանում է՝ Զգիտեմ, բնագոյնացութիւնը մի յաւակնոտ ինքնավստահութեամբ ճգնում է մանրակրկիտ երեւոյթների ամենակնճոտ ցանցը պարզել, տիեզերքի ամենախոր զաղտնիքը լուծել: Ոչ մի առեղծուած, ոչ մի խորհրդաւորութիւն նրա համար գոյութիւն չունի, կամ թէ ծայրայեղ գէպքում իւրաքանչիւր առեղծուածի հետ կարծես նրան շնորհուած է լինում եւ ամենապօր բանալին, բաւական է մտքի մի յանդուգն եւ կամայական շարժում, եւ ահա գորդեան ամէն մի հանգոյց անհետացած է նրա համար» (նոյն տեղում, 288): Մտածողութեան եւ ճանաչողութեան այդ եղանակը մեթոդաբանութեան նշանակութիւն է ձեռք բերում մի շարք գիտութիւնների հետազոտութեան եղանակների համար: «Բնագոյնացութիւնը եւ առհասարակ վերացական մեթոդի տիրապետութիւնը ուժեղ կերպով նկատելի է ինչպէս բարոյագիտութեան, նոյնպէս եւ էսթետիկի սահմանում» (նոյն տեղում, էջ 288): Բնագիտական տեսութիւնների նուաճումները եւ յատկապէս հոգեբանական հետազոտութիւնների արագընթաց զարգացումը առաջադրեցին հետազոտական նոր, փորձի վրայ կառուցուած եւ նրանից բխող մեթոդներ, յեղաշրջելով բնագոյնական համակարգին բնորոշ արտածական մեթոդը: Գիտական գիտելիքի ոճով պայմանաւորուած մտածողութեան եւ ճանաչողութեան ընդհանուր վերակառուցումների ուղղութեան տրամաբանութեամբ զրականութիւնն ու արուեստը նոյնպէս մտնում են մակամակամ եղանակի քննութեան ոլորտ: Բնագոյնացութեան էութիւնից որոշարկուող գեղագիտութեանը բնութեւի չէ, որովհետեւ նրա հետազոտական մեթոդի գլխաւոր յատկութիւնն է՝ «փոխանակ հոգեբանական վերլուծութեան — որը ներկայ փորձնական ուղղութեան հիմնաքարն է կազմում — մի քանի բարձրագոյն գաղափարներից առաջացնել էսթետիկական այս կամ այն գաղափարը» (նոյն տեղում, 288):

Կանախի վիճաւոր արժանիքը համարելով գեղագիտութիւնը ինքնուրոյն հիմքերի վրայ դնելը, ռացիոնալիզմի իշխանութիւնը թօթափելը, այնուամենայնիւ, Նալբանդեանը գտնում է, որ որոշ չափով Կանախ մնաց «նրա՝ [ռացիոնալիզմի] փոշիների տակ»: Մինչեւ Կանախ, գեղագիտութեանը ինքնուրոյնութիւն տալու հակում նոյնպէս կար, բայց «սխառեմական մշակումը պակասում էր, որը եւ վրէժ բերեց Քանթը» (նոյն տեղում, 289):

Դրապաշտական փիլիսոփայությունը եւ գեղագիտությունը, գեղեցիկը բացատրում են որպէս իր ինքնուրոյն եւ անհատական գործառնություններն իրացնող երեւոյթ, տալով նրան արդէն այլ իմաստ եւ նշանակություն: Նախորդ ճանաչողական համակարգերի՝ գեղեցիկը բարուց եւ օգտակարից, բարոյականից եւ տրամաբանականից արտածելու փորձը այդ հասկացությունը զրկում է իր ինքնուրոյնությունից եւ տալիս է նրան երկրորդական եւ ածանցեալ նշանակություն: Այսպէս, դեռ Պլատոնը արուեստը համարում էր «գեղեցիկ բարոյականություն»: Գեղեցիկի կարգը ածանցում է նաեւ բարուն Կանտի գեղագիտական համակարգում: Գերմանական դրապաշտ փիլիսոփայությունը, յենուելով Կանտի կրիտիցիզմին, չի ընդունում Կանտի գեղեցիկը բարու հետ նոյնացնելու, ներդաշնակելու առաջադրոյթը: Ըմբռնում, որը, ըստ նրանց, Կանտը լուծում էր դեռ ռացիոնալիզմի մակարդակում, վերացական գաղափարներից բխեցնելով գեղեցիկի էությունը: Մինչդեռ վերջին ժամանակների բնական, կենսաբանական, հոգեբանական, սոցիոլոգիական գիտությունների փորձի հիման վրայ արւող վերլուծությունները, այլ մակարդակներում էին առաջադրում գեղեցիկի բովանդակությունը եւ գործնական իմաստը: Այսպէս, դեռ դարասկզբին, ի տարբերություն Հեգելի եւ Եկլինգի բնագանցական համակարգերում առաջադրուող սկզբունքների, Հերքարդը առաջ է քաշում գեղագիտականի զուտ զգացական ընկալման տեսակէտը: Նախորդ մակարդակի ըմբռնումներն են պաշտպանում Բուալոն, Կորնելլը, Տոլստոյը: Գերմանացի գեղագէտ Ֆոլկելտի կարծիքով նոյնպէս գեղարուեստի նպատակը ղեպի բարին առաջնորդելն է: Նա արուեստի բարոյական նպատակայնությունը դիտում է որպէս գեղարուեստական գործունէութեան բարձրագոյն աստիճան:

Վ. Նալբանդեանը պրում է, որ նման «վարդապետական ունեւորումներ էսթետիկի սահմանում» հասկնալի է, որ վերջինիս ինքնուրոյն նշանակությունը միանգամայն անդամահատում են: Էսթետիկը մի փորձնական գիտություն է եւ ոչ դաւանաբանական, եւ նրա նպատակն է ցոյց տալ գեղարուեստական առարկաները եւ երեւոյթները այնպէս՝ ինչպէս ցանկալի էր, որ յինէին (նոյն տեղում): Գերմանական դրապաշտ գեղագիտութեան այս փիլիսոփայականը իր ետնախորքում ունէր բնագիտական եւ յատկապէս հոգեբանական գիտությունների փորձը, գիտական գիտելիքը, որոնք «էսթետիկական ըմբռնումին փարձում են աւելի անհատական քնաւորություն ունեցող հիմքեր բնծայել» (նոյն տեղում, 289): Իր յօդուածում Նալբանդեանը վկայաբույրում է արուեստի, գեղագիտականի ինքնուրոյն վիճելու հանգամանքը պաշտպանող տեսակէտները: Ըստ Էյսսայի գեղագիտականի ըմբռնման հիմքն է «զգայմունքների ուժեղ առաջացումը»: Այն դերը, ինչ որ տրամաբանական եւ բարոյական ըմբռնումների տեսակէտից կատարում են միտքը եւ կամքը, նոյնը կատարում է զգացմունքը գեղագիտականի նկատմամբ: Այս մակարդակներում միտքը, կամքը եւ զգացմունքը արդէն դիտւում են որպէս կենսահոգեբանական կարգեր: Էյսսայի տեսակէտն են պաշտպանում Մ. Գիյը եւ Մ. Դեսսուարը: Վերջինիս տեսակէտը եւ Վ. Նալբանդեանը դիտում է որպէս իր առաջադրած հարցադրումների ամփոփում: Ըստ այդ տեսակէտի, կեանքը անմիջական իրականությունն է: Գիտությունն ու գեղարուեստը տարբեր ուղիներով եւ միջոցներով ձգգ-

տում են դէպի այն: «Գիտութիւնը իրական կեանքի սպաւորութիւնները զարձնում է ճանաչելի, իսկ զեղարուեստը՝ վայելելու, ճաշակելու արժանի: Այս պատճառով մի տեղ տիրում է բանականութիւն, առարկայացում, պատճառականութիւն եւ անհրաժեշտութիւն, իսկ միւս տեղը՝ զգայականութիւն, անհատականութիւն, նպատակայարմարութիւն եւ ազատութիւն. մի տեղ մշակուած գաղափարների, իսկ միւս տեղը՝ պատկերների համախմբում: Գիտութեան դիրքը դէպի բնութիւնը կարծես ստրկական է: Այնինչ արուեստին՝ աւելի տիրական: Մէկը կարծես ասում է. «այսպէս է» - այնինչ միւսը՝ «այսպէս կամենում եմ ես» (նոյն տեղում, 230):

Արուեստի ինքնուրոյնութիւնը հիմնաւորուելուց յետոյ, Վ. Նալբանդեանը Բացատրում է նրա էութիւնը: Արուեստի բոլոր տեսակները ընդհանրապէս են ինչ-որ տեղ որպէս «հոգեկան գործունէութեան մի նոյնութիւն» կրող երեւոյթ: Եւ ընդհանրականը գեղեցիկն է: Իսկ ի՞նչ է գեղեցիկը: Ումանք այն փնտռել են գաղափարական կատարելութեան, ումանք՝ զգացական հաճոյքի, ումանք՝ ձեւերի համակարգութեան մէջ: Յենուելով Կ. Գրոսն տեսակէտների վրայ, Նալբանդեանը գտնում է, որ չպէտք է նոյնացնել գեղեցիկն ու գեղագիտականը: «Որեւէ առարկայի ազդեցիկ տեսքը կամ երեւոյթը էսթետիկական է, իսկ եթէ այդ տեսքը կամ երեւոյթը զգայապէս հաճելի է, այն ժամանակ նա դառնում է գեղեցիկ: Այն, ինչ որ գեղեցիկ է, կարող է գեղագիտական լինել, բայց ոչ բոլոր գեղագիտականներն են գեղեցիկ: Եատե՛րը վախենում են, — գրում է նա, — գեղեցիկի բնորոշ հիմքը համարել «զգայապէս հաճելին»՝ վախենալով նսեմացնել գեղեցիկի արժէքը եւ իդէալականութիւնը» (նոյն տեղում):

Վ. Նալբանդեանը ելնում է գերմանացի վերոյիշեալ գեղագէտների տեսակէտներից: Գերմանացի հոգեբան եւ գեղագէտ Մ. Դեսսուարը յայտնի է, որ Էմիլ Լուտիցի հետ ստեղծեց մի գեղագիտութիւն, որը կոչւում էր «համընդհանուր գիտութիւններ արուեստի մասին»: Ըստ այդ ուսմունքի, արուեստի կողմից արժէքների պատկերումը ներքին, չփոփոխուող գործառնութեամբ ուղղուած է յուզական ապրումներ արթնացնելուն: Ստեղծագործութիւնն ունի մաքրագործող գործառնութիւն, որը հեղինակին մաքրագործում եւ ազատում է իր անհատական ապրումներից: Արուեստը ինքնարտայայտման ներքին հոգեբանական անհրաժեշտութիւնն է, որը եւ դիտւում է իբրեւ արուեստաստեղծ գործունէութեան հիմնական ազդակ: Նոյն բնագիտական գիտելիքների հիմքի վրայ Էրնեստ Գրոսը, Կարլ Գրոսը եւ Կ. Բեռլինները արուեստը քաջատրում էին որպէս «ոգու մաքուր ակտիւութեան արդիւնք»: Արուեստը, ըստ նրանց, իր նախնական աստիճաններում գործնական նպատակներ է հետապնդում, բայց հասարակութեան աստիճանական զարգացումով այն կտրուում է իր՝ մարդկանց գործնական պահանջները բաւարարելու ներքին նպատակադրումից եւ դառնում է «մաքուր», «չհասգորդուած», մաքուր ներքնապէս բնորոշ գեղեցիկի զգացման կրող՝ ձգտելով զուտ գեղագիտական բաւարարուածութեան: Կանտը նոյնպէս գտնում էր, որ առարկան գեղեցիկ է, երբ նրա հանգիստ ունեցած յարաբերութիւնը շահադրուածութիւն չի կրում իր մէջ, այլ այն ներկայանում է որպէս «ընդհանուր բաւարարուածութեան առարկայ»: Գերմանական բուրժուական փիլիսոփայութեան հիմքի վրայ ստեղծուած գեղագիտութիւնը քաջարձակացրեց Կանտի այս տեսակէտը՝

դուրս թողնելով գեղեցիկի եւ քարու նոյնանշանակ ըմբռնումը: Կ.Գրոսը հիմնաւորում է, որ առարկային հաճելից գեղեցիկ է դարձնում «գիտակցութեան էսթետիկական եւ ոչ էսթետիկական դրուժիւնը» (նոյն տեղում, 201): Հետեւաբար՝ գեղեցիկը միշտ բարձր է, որովհետեւ էսթետիկական է:

Արուեստը որպէս խաղ, որպէս կենսաբանական ակտիւութիւն ըմբռնումը առաջադրել են Հ. Ալփենսերը, Կ. Գրոսը եւ Գ. Ալենը:

Գեղարուեստը դիտում է, որպէս բնութեան ընդօրինակութիւն: Սակայն, ինչո՞ւ է տարբերում բնութիւնը գեղարուեստից:

Այս հարցում Վ. Նալքանդեանը առաջնորդում է Գեօթէի այն դրոյթով, ըստ որի արուեստը պատկերում է ոչ թէ բնութիւնը, այլ «բնութեան գեղադիտական տեսքը»: Գեղարուեստի պատկերած զգացմունքների խորութեան եւ նրբութեան կողքին, «բնութիւնը (նեղ մտքով վերցրած), ոչինչ չունի դնելու» (նոյն տեղում, 291):

Գեղարուեստի գեղապիտանական արժէքը այն է, որ նա բնութիւն չէ եւ չի էլ ուզում դառնալ, այլ միայն ուզում է ներկայացնել...: Եւ բաւարարւածութեան աղբիւրը ոչ թէ ընդօրինակուած բնութիւնն է, այլ այն աներեւոյթ հանգամանքը, որ վերարտադրուած է այն մարդկային օժտուածութեան եւ հմտութեան միջնորդուածութեամբ: Բնականական հոգեբանութիւնը եւ դարուինականութիւնը գեղարուեստի շուրջ ունեցած պատկերացումները յեղաշրջեցին: Արուեստի եւ կենդանիների ու մանուկների խաղի մէջ սկսեցին զուգահեռներ անցկացնել: Նման տեսակէտների տարբերը կային արգէն Սփենսերի, Դարուինի եւ Վայսմանի երկերում, սակայն այն աւելի ամբողջական եւ հիմնաւոր մշակում ստացաւ Կ. Գրոսի եւ Գ. Լանգէի աշխատութիւններում: Կենդանիների եւ մանուկների խաղի ներքին նպատակը մի «առերեւոյթ գործունէութիւն առաջացնելն է, որը Վազներն անուանում է «գիտակցական ինքնախաբէութիւն»: Մարդկանց հաղորդակցումը արուեստին իրականացում է պատրանքի դրսեւորմամբ եւ կապով:

Արուեստին հաղորդակցուող անհատը ցանկանում է ոչ թէ «բնութեան կամ կեանքի կատարեալ, այլ առերեւոյթ ընդօրինակութիւնը» (նոյն տեղում, 292): Հաւատարիմ ընդօրինակութիւնը ոչնչացնում է գեղապիտանական հաճոյքը, որովհետեւ այդտեղ բացակայում է երեւութականի տարրը: Գիտակցական ինքնախաբէութիւնը տարբեր ժամանակներում փոխում է իր ձեւերը եւ պահանջում պատրանքի դրսեւորման աւելի նոր եւ նուրբ ձեւեր ու արտայայտութիւններ: Սակայն ո՞րն է այդ «գիտակցական ինքնախաբէութեան հիմնական բնական գործառնութիւնը, որը դրսեւորում է արուեստի երեւութաբանութեամբ:

Լանգէն այն համարում է գոյութեան կուտի հիմնական գործօններից մէկը: Գիտակցական ինքնախաբէութիւնը, ըստ Լանգէի, դառնում է նաեւ տեսակի պահպանման եւ վարդապետական էական գործօն: Այն առաջին քայլն է դէպի մտքի վարդապետը, որը բնական համարումով աճում, նրբանում է սերնդէ սերունդ եւ վերջապէս «զարգացած գլխում դառնում մայրը ո՛չ միայն խաղի, այլեւ՝ գեղարուեստի»: Այսպէս են միայն բարձրակարգ կենդանիները:

«Այսպէս ուրեմն մարդկային հակումը դէպի գեղարուեստը ուրիշ բան չէ, բայց եթէ բնական յարմարման՝ մտքի միջոցով մշակուած եւ սրբացած խաղաքնազգը» («Անանիս» 11, էջ 337):

«Գեղարուեստը վարժութեամբ ձեռք բերուած, գործնական շահից անկախ եւ գիտակցական ինքնախաբէութեան վրայ հիմնուած ընդունակութիւնն է մարդկանց հաճոյք պատճառելու» — սահմանում է Լանգէն: Այս հաճոյքը մեծացնում է մարդկանց զգացմունքների եւ դիտողութեան հորիզոնը եւ նպաստում սեռի պահպանման եւ բարելամանը:

Այստեղ գեղարուեստի հիմնական նպատակն է ոչ թէ «զեղեցիկը» ներկայացնել, այլ «ստեղծել արժէքներ, որոնք ժամանակի ոգու եւ հայեացքների համեմատ ընդունակ լինէին գիտակցական ինքնախաբէութիւն առաջացնել (նոյն տեղում, 338): Այս տեսակետը ելակէտ ընդունելով, կարելի է նկատել, որ սահմանափակում է նաեւ «զեղեցիկի» նշանակութիւնը արուեստի մէջ: Եթէ նախորդ զեղազէտները աշխարհը դիտում էին իբրեւ աստուածային հոգու մարմնացում եւ իւրաքանչիւր առարկայական դրսեւորման մէջ կար այդ հոգին՝ «զեղեցիկը» եւ արուեստագէտին մնում էր «այդ նիւթերից խելի աստուածային հոգին եւ տալ նրան գեղարուեստական մարմնացում», ապա «նորերի կարծիքով «բնական է» միայն պատրաստ, իսկ «հոգեկանը» առաջ է բերում միայն ինքը՝ արուեստագէտը: Նախորդների կարծիքով արուեստագէտը ներշնչուած է աստուածային հոգով եւ այդ հոգին է մարմնացնում իր արուեստի մէջ, նորերի կարծիքով «արուեստագէտը մի մարդ է, որ ընդունակ է իրերը եւ երեւոյթներն նրան հնազանդեցնել եւ տալ նրանց իր անհատական կնիքը՝ առանց որեւէ աստուածային հոգու զօրութեան» (նոյն տեղում, 338):

Նորերը բնականի կողքին դնում են իրենց խառնուածքով եւ երեւակայութեամբ «խմորուած», ու միջնորդուած մի «արուեստական աշխարհ», մի աշխարհ, որ մարդկային սեփական կեանքի եւ անհատականութեան ծնունդն է: Արուեստագէտը պէտք է համազրի բնութեան մաքուր կողմերը պարզ եւ ամբողջականորէն: Սա պէտք է «հեանքի ալիքներից» կորզի արուեստին բնորոշ ամբողջութիւնն ու պարզութիւնը:

Նալբանդեանը մերժում է այն գեղազէտներին, որոնք արուեստը աշխատում են ծառայեցնել բարոյական նպատակներին: Մերժում է Լ. Տոլստոյի գեղագիտութիւնը, որը քարոզում էր «զգացմունքը բարոյականութիւն, որի հիմքը կազմում է բնականորէն մարդկային սէրը եւ կարեկցութիւնը»: Տոլստոյը հերքում է արուեստի էութիւնը խաղի մէջ տեսնելու ըմբռնումը, ըստ Նալբանդեանի՝ ոչնչացնելով արուեստի էութիւնը, նրա ինքնուրոյնութիւնը: Մինչդեռ ստեղծագործելու ներքին հոգեկան պահանջի հոգեբանական լուսարանութիւնը ցրում է արուեստին բարոյական գործառնութեան վերադրելու տեսակէտը: Ստեղծագործական պրոցեսը ոչ թէ հաղորդակցական գործառնութիւն ունի, այլ՝ բնութեան, աշխարհի եւ երեւոյթները երեւակայութեամբ ընդօրինակելով, անհատը ջանում է գուրս գալ իր կրաւորական միջակից, ձգտում է վերարտադրել, ընդօրինակել աշխարհը «նոյից ստեղծել իբրեւ ինքնուրոյն սեփականութիւն»: Ստեղծագործական պրոցեսը ստեղծագործողի կողմից չի ենթադրում իր ստեղծածի բարոյական գրական կամ բացասական հետեւանքների գիտակցութիւն: Ժիշտ է, արուեստը կրթում է մարդկանց բարքերը, նպաստում քաղա-

քակրթութեան ընթացքին, բայց երեւոյթը ընտրուելու համար, պէտք է ելնել նրա «ներքին տարրերից», իսկական էութիւնից եւ ոչ թէ նրա առաջացրած հետեւանքներից: Մարդկային բնութիւնը մի ներքին պահանջ ունի միշտ «վերստեղծել ստացուած տպաւորութիւնները» (նոյն տեղում, 339):

Վ. Նալբանդեանի հայեացքները իւրայայտուկ ձեւով իրենց մէջ համադրում են նոր կանտականութեան նուաճումները. մասնաւորապէս Լանգէի եւ Կ. Գրոսի դրոյթները Թէնի տեսակէտներին: Ընդ որում, Թէնի կուտոր-պատմական մեթոդը Գ.Բրանդեսը իր գեղագիտական աշխատութիւններէ մէջ լծողում էր Սենտ-Բեովի կենսագրական-հոգեբանական մեթոդին: Փորձենք Նալբանդեանի կոնկրետ վերլուծութիւնները տեսնել այդ համակարգերի տարածքում: Առհասարակ, վերոյիշեալ բոլոր ուղղութիւնները դրապաշտութեան տարատեսակներ են: Այսպէս, Սենտ-Բեովը, որի տեսակների վրայ յենում էր Բրանդեսը, «ուսումնասիրում է գրողի ծագումը, նրա առողջական վիճակը, նրա նիւթական դրութիւնը, նրա դաստիարակների սկզբնական շրջանակը, նրա զարգացման պատմութիւնը: Նա պատկերում է նրան կեանքի լաւագոյն եւ երանելի պահերը եւ ձգտում է նրան յանկարծակի բերել իր խալաթի մէջ», տեսնել նրա դիմանկարը: Գրողի անհատականութեան հետազոտութիւնը դառնում է հիմնականապէս: Գեղագիտական նման հայեցակէտը որոշակում էր Կանտի քննադատական ուսմունքի իմացաբանութեամբ, ինչը, բնագիտական միանգամայն հակառակ, բացատրում էր, որ ոչ թէ մեր հասկացութիւններն են որոշում առարկաներով, այլ հակառակը՝ առարկաներն են որոշում մեր հասկացութիւններով: Նոր կանտականները վարպետներով այս բաժնում, յանգեցին այն տեսակէտին, ըստ որի մեր գիտակցութեան բովանդակութիւնը մեր բնախօսական կազմութեան արդիւնք է: Անհատի ողջ հոգեբանական գործունէութիւնը պայմանաւորում են նրա բնախօսական կազմակերպութեան լծակները եւ առանձնաշատկութիւնները: Ժանաչողութեան յարաբերականութիւնը, ըստ էութեան, առաջադրուեց նոր կանտականների կողմից (Լանգէ, Ֆոյկելտ, Հելմհոլց, Լիբման): Հիմնական հարցադրումը անհատական էսի յարաբերութեան բնոյթն էր աշխարհի հետ: Արտաքին աշխարհը իր առարկայական կազմակերպութեամբ, անհատի փորձի շրջանակներում դառնում է նրա առարկան, եւ որ օբյեկտիւտիւնը բացարձակ օբյեկտիւտիւն չէ, այլ՝ օբյեկտիւտիւն միայն մարդկանց համար: Կենսաբանական կառուցուածքը պայմանաւորում է զգացական ընկալումների տիպը: Ըստ Լանգէի, մեր ողջ փորձը պայմանաւորուած է մեր հոգեբանական կազմակերպութեամբ, որը ստիպում է մեզ մտածել հէնց այդպէս, իսկ մի այլ հոգեբանական կազմակերպութեան սահմաններում առարկաները պատկերացում են այլ կերպ:

Երեւոյթների պատճառականութիւնը եթէ Կանտը դնում էր միայն փորձի շրջանակներում, ապա Լանգէն նրա արմատները տեսնում է մեր կազմակերպութեան մէջ փորձին նախորդող հակուածութեան ձեւով: Ինքնին իրը գոյութիւն ունի երեւոյթների մէջ: Ինչքան ինքնին իրը յանգեցում է մի ընդհանրական պատկերացման, այնքան իրական է դառնում երեւոյթների աշխարհը: Երեւոյթն այն է, ինչ առօրեայ բանականութիւնը կոչում է իր: Փիլիսոփան իրերը անուանում է երեւոյթներով, ցան-

կանալով դրանով ասել, որ այն էություն չէ, այլ հենց այնպես ինձնից դուրս գտնուող է, իսկ էությունը արդիւնք է իմ բանականութեան եւ զգացմունքների: Երեւոյթների աշխարհի լայն հետազոտութիւնը բերում է մեզ այն եզրակացութեան, որ այն իր ողջ գումարով պայմանաւորուած է մեր կազմակերպութեամբ: Սուբյեկտի իդէալիզմի այս պատկերացումների դիտակէտից ճանաչելիութիւնը երեւոյթների աշխարհին կապւում է գիտութեան կարգերով՝ բանականութիւն, պատճառականութիւն, անհրաժեշտութիւն եւ առարկայացում, իսկ արուեստը, որի գործառնութիւնն է՝ որոշակուելով Եւի անհատականութիւնից, դառնալ նրա յարաբերութիւնը շրջապատող աշխարհի հետ կարգաւորող միջոց, հանդէս է գալիս զգայականութեան, անհատականութեան, նպատակայարմարութեան եւ արատիւութեան կարգերով: Ըստ Լանգէի, Տչգրիտ, անհակասական ճանաչողութիւնը տրւում է միայն փորձի շրջանակներում, որը միշտ ունի վերածական բնոյթ եւ զբաղւում առանձնակի իրերով: Համադրումը կամ որեւէ լրիւ ընդհանրացում գիտելիք եւ ամբողջովին աւարտուած աշխարհայեացքը ենթարկւում են համադրման «գեղապիտական սկզբունքների»: Իւրաքանչիւր մօտեցում Ամբողջին կամ Բացարձակին այլ է իդէալի ճանապարհին: Այս առումով, բնագիտութիւնը գիտութիւն չի, այլ՝ «հասկացութիւնների պոեզիա»: Բնագիտական գործունէութիւնը ունի գեղարուեստական-ստեղծագործական մղումներ: Ինչքան ազատ է այդ համադրումը, այնքան ցիդադիտական է աշխարհի պատկերացումը, այնքան աւելի խորն է նրա բարոյական ազդեցութիւնը մեր գործողութիւնների վրայ: Իդէալը անհատական համադրման արդիւնք է, ի տարբերութիւն գիտութեան, որը հանդիսանում է տոհմական (ընդհանուրի) համադրման արդիւնք:

Դժուար չէ նկատել, որ ճանաչողութեան բնոյթը պարզող նման պատկերացումներից, որոնք զարգացնում էին նոր կանտականները, մինչեւ Սենտ-Բեովի հոգեբանական-կենսապրական եւ Հ. Թէնի կուլտուր-պատմական մեթոդի մի քայլ է, որոնցում բացատրւում են անհատի բնախօսական կազմութեան առանձնայատկութեան պատճառակիրները: Այս բոլորը համադրւում էր Բրանդէսի հետազոտական մեթոդի մէջ, ինչը իւրովի գրեւորւում է Վ. Նալբանդեանի ուսումնասիրութեան ընթացքում: Մեր բնախօսական կազմութիւնը որոշում է մեր ողջ հոգեբանութեան եւ վարքագծի իւրայատկութիւնը: «Դատկերացումների այս համակարգի շրջանակներում առաջագրւում են ցիդադիտական հետազոտելու նոր եղանակներ: Այնքանով, որքանով գեղարուեստական ակտիւութիւնը նոյնպէս հոգեբանական գործունէութիւն է եւ նրա կենտրոնում է հեղինակը, ուստի՝ հետազոտութեան կենտրոնում նոյնպէս պէտք է նա լինի: «Ամէնից շատ Բրանդէսը հետաքրքրւում է այս կամ այն գործչի անձնաւորութեամբ, իսկ ժամանակաշրջանի ընդհանուր բնութագրին եւ պայմաններին ուշադրութիւն է դարձնում միայն այնքանով, որքանով նրանք հարկաւոր են նրան այդ անձնաւորութեան հոգեբանական առանձնայատկութիւնները բացատրելուն:

«Նրա համար պրականութիւնը կազմում էին ո՛չ թէ զրբերը, այլ՝ կենդանի մարդիկ, ո՛չ թէ երկերը, այլ՝ նրանց հեղինակները: Դրանում նա Թէնի եւ Սենտ-Բեովի ուղղակի շարունակողն էր...»:

Ուսումնասիրելով գրողի հոգեբանությունը, Բրանգելը աւելի շատ եւ կարեւոր տեղ է յատկացնում նրա կենսագրութեանը: Թէնի մօտ անհատը մղւում է յետին պլան: Ասպարէզում հանդէս են գալիս այլ տարերային եւ պատմական ուժեր՝ կլիման, ազգութիւնը, ժամանակաշրջանի քաղաքական պայմանները, նրա կրօնական տրամադրութիւնը: Թէնը ոչ մի րոպէ աչքաթող չի անում զանգուածները, ամբոխները:

Անհատի բնախօսական կազմութիւնը դառնում է այն կիզակէտը, որի իւրայատկութիւնը եւ տուածնակիութիւնը պայմանաւորում է ստեղծագործութեան անկրկնելիութիւնը: «Դ. Իսրեանի քանադոնական արուեստը բացատրելի»՝ Վ. Նալբանդեանը գտնում է, որ Դուրեանը «Ռումանտիկական մի քանի ուժեղ հակումների սաղմը հէնց իր մէջն էր կրում...»:

Սենտ-Բենդի հոգեբանական կենսագրական մեթոդը հնարաւոր էր դարձնում ստեղծագործական շատ առանձնայատկութիւններ ուղղակիորէն պատճառակցել իր իսկ գոյափարոզ պատճառակրին: Անհատական, գեղարուեստական պրոցեսի հոգեբանութիւնը ենթադրում էր ակտիւ մի կապ այն գոյաւորող հեղինակի դադարաւորների եւ պատկերացումների աշխարհի հետ, որոնք սակայն գործադրութեան մէջ են դրում կենսաբանական անհրաժեշտութեան ներկայացնող արուեստաստեղծ օրէնքներով: Պատկերացումների այս համակարգերից է որոշարկւում Վ. Նալբանդեանի գեղարուեստը հետազոտելու եղանակների առաջագրումները, Նա գտնում է, որ ամենակարեւոր եւ հիմնական խնդիրն է գեղարուեստական երկի հոգեբանութիւնը՝ դեղարուեստական առաջին ապարտութիւնից մինչեւ ստեղծագործութեան վերջին վայրկեանը՝ խոր եւ մանրազնիւ ուսումնասիրութեան ենթարկել («Մշակ», 1901, թիւ 170): Նա իր սենսական այս առաջադրումը հաստատում է Շիլլերի այն դատողութեամբ, ըստ որի, երբ բացատրւի, թէ ինչպէս է ուսկծւում արուեստը, ապա պարզ կը լինի նաեւ, թէ ինչ է եւ ու նպատակ պէտք է այն ունենայ: Արուեստի գոյաբանութեան հետազոտութեան առաջնությունը դիտելով իբրեւ բացարձակ չափանիշ, գրապոչաութիւնը նաաջադրում է գեղարուեստական երկի հետազոտման նոր եւ, ըստ էութեան, առաւել դիտական գիտական, ըստ որոնց չպէտք է արուեստը դնահատել ելնելով այն բնից, թէ «ինչ պէտք է տար մեկ այս արուեստապետը» - մի պարտաւորութիւն, որ միայն բարոյախօսի, մանկավարժի, տատաւածարանի, գուցէ եւ հրապարակախօսի գործն է, բայց ոչ երբեք շուրջ քննադատի, այլ թէ ինչ է նա կամեցել եւ ինչպէս է պատկերացրել, ալլ տեսակ քննադատը, որը յիշուի կոչումով քննադատ է, ոչ թէ հրահանգող, քարտուղ, դատող է, այլ՝ նկարագրող, պարզող, վերլուծող — նա արուեստապետի հոգու թրթրաների քրքրայն է, խորամանկը: Վ. Նալբանդեանն արուեստի նման հետազոտութիւնը համարում է անհրաժեշտ, որովհետեւ՝ «Այս է արհամիջում գեղարուեստի ամենատարրական հոգեբանութիւնը, այս է թերադրում մեկ նորագոյն էութեանը, որ միանգամայն բնագիտական հոգի միայն է կրողնում» (նույն տեղում, 1901, թիւ 170): Այս գիտակցութիւնը ելնելով, Վ. Նալբանդեանը նշում է, որ «Դ. Իսրեանի քննադրողական լինելու հանգամանքի պատճառները մէջ պէտք է որանել: Նա ի բնէ քննադրող էր, բայց ոչ գրամատար: Իր բիկական գեղամեթոդի խափր, յոգեկանն սպասարկութիւնների տարալին

այնքան ուժղին, այնքան յախուն էր, որ հոգեբանօրէն նրան միանգամայն անհնարին էր կենսորոնանալ եւ ներքին յաջորդական կապակցութեամբ շղթայաւորուած մի երկ ստեղծագործել» («Աշակ», 1901, թիւ 187):

Իսկ Իրսենի գրամաներից մէկը վերլուծելիս՝ իբրեւ կազմակերպող գործօն են դիտուում հեղինակի կենսագրութեան կոնկրետ հանգամանքները, հայրենակիցների կողմից երկրից արտաքսուած լինելու պարագան. «Այս պարզ, բայց ուժեղ գրամայով Իրսեն կարծես մի տեսակ հաշիւ տեսաւ իր ապերախտ հայրենակիցների հետ, որոնք նրան հալածել եւ օտարութեան գիրկն էին մղել: Նա արտաթափեց տարիների ընթացքում իր մէջ ամբարուած ամբողջ լեզուն» («Մուրճ», թիւ 5, էջ 118):

«Հին աշխարհ կոչուած իրիւստփայտիւնն, քնադատութիւնը իւրաքանչիւր գրական ատեղծագործութիւն դիտում էր որպէս կարծես թէ երկրնքից իջած, քննարկում էր այն ոչ մի ուշադրութիւն չդարձնելով հեղինակին եւ դնում էր նրան այս կամ այն գեղագիտական եւ պատմական խորագրի տակ: Սենտ-Բեովը ստեղծագործութիւնը քննելիս հասնում էր մինչեւ նրա ծնունդը՝ թղթերի ետեւում նա կարողանում էր բացայայտել մարդուն: Նա ժամանակակիցներին եւ հետագայ սերունդներին սովորեցրեց գիտակցել, որ մենք դեռ ոչինչ չգիտենք, ոչ մի ստեղծագործութիւն եւ անցեալի փաստաթուղթ, քանի դեռ չի յաջողուել ինքներս մեզ պարզել հոգեկան այն վիճակը, որից բխել է այն եւ պատկերացում կազմել այն մեզ թողնողի անձնաստրութեան մասին: Միայն այդ ճանապարհով են փաստաթղթերը կենդանանում մեր առաջ. միայն այս ձեւով հասկացուած գեղարուեստական ստեղծագործութիւնն է դանդաղ թափանձիկ» (Գ. Բրանպէս):

Մարդկութիւնը գրապաշտական փիլիսոփայական համակարգերում ընկալւում, դիտուում եւ բացատրւում է որպէս յարաբերականօրէն կայուն եւ յարափոփոխ վիճակների դիալեկտիկական միասնութիւն եւ ամբողջութիւն: Իրական բարոյական եւ մասուր կեցութիւնը մարդկութեան բնութագրիչն է, առանձին վերջրած անհատը սոսկ կենդանական վերացոյթ է, որը մասուր եւ բարոյական նկարագիր է ձեռք բերում մարդկութեան հետ ունեցած իր միասնականութեան աստիճանով եւ մակարդակով: Մարդկութիւնը իրական ամբողջութիւն դիտելը կազմակերպում է գրապաշտների ո՛չ միայն հասարակահայեցութիւնը, այլեւ՝ իդէալը, որից եւ բխում են անհատին առաջադրուող հասարակական գործունէութեան չափանիշները: Մարդկութիւնը ձեռք է բերում իմացական այդ համակարգի համար էութեան (սուբյեկտիւնայ) նշանակութիւն, ճշմարիտ գոյութիւն, որի ընդհանուր նպատակաուղղուածութիւնը խնամատւորում է նաեւ անհատի գործունէութեան իմաստը, որից դուրս անհատը դանդաղ է դատարկ վերացոյթ: Դրապաշտութեան խնամարանութեան շրջանակներում Արարչի պաշտամունքը փոխարինւում է մարդկութեան՝ միասնական եւ ճշմարիտ Մեծ էութեան պաշտամունքով: Մարդկութիւնը ձեռք է բերում նաեւ Արարչական կոտորաբող գործունէութիւնը, ըստ էութեան, խնամ եւ ճշմարիտ կեցութիւն է ձեռք բերում, երբ մենք մեզ գիտակցում ենք այդ Մեծ եւ Ծշմարիտ էութեան անբաժանելի մասը եւ բարձր գիտակցականութեամբ նպատակաուղղւում մեր իսկից, զգացմունքները եւ գործողութիւնները նրան ճանաչելուն, սիրելուն եւ ծառայելուն: Անհատի համա-

նման կապուածութիւնը Մեծ էութեանը՝ մարդկութեանը, որը կատարելագործման յարաշարժ ընթացքի մէջ է, ենթադրում է ծառայութեան երկու կերպ: Այնքանով, որքանով անհատի կեանքը վաղանցուկ է, իսկ Մարդկութիւնը այդ կենդանի եւ իրական օրգանիզմը յաւերժ առաջնադասող եւ փոփոխուող միատուր է, ապա անհատի ծառայութիւնը՝ պայմանաւորուած իր երկու յաջորդական կէցութեամբ՝ ցմահ եւ ետմահու, կապուած է Ամբողջին երկու գործուն սկզբունքով: Առաջինը մինչեւ մահ եղած գործունէութիւնն է, որը Կոնսոր անուանում է առարկայական: Այս գործունէութեան ընթացքում անհատը ուղղակիօրէն, բայց եւ անցուցիկ կերպով է ծառայում Մեծ էութեանը: Ետմահու կամ անձնական ծառայութիւնը անհատի վաստակն է, որով նա գործում է սերունդներին յիշողութեան մէջ: Ժամանակի ընթացքի հետ մեծ եւ արժանաւոր անհատների առարկայական գործունէութիւնը վերածում է անձնական ծառայութեան, եւ յարգող եւ կուտակուող նորանոր որակները աւելի են հարստացնում սերունդներին գործողութիւններին ընթացք տուող եւ կարգաւորող անձնական կողմը, դրանով իսկ ապրող փոքրամասնութիւնը ենթարկելով մեծամասնութիւն կազմող անցատրաց: «Մեռածները ղեկավարում են ապրողներին» գրում է Կոնսոր: Մեռածների վաստակը այն բարձրագոյն կատարեալն է, որին, իրենց կամքից անկախ, ենթարկում են ապրողների ճակատագիրը եւ բարձրագոյն նպատակադրումները՝ մարդկութեան առաջնութային համատեղ:

Խօսքը այն հոգիներին է վերաբերում, որոնք կազմում են մարդկութեան ճշմարիտ տարրերը ոչ իրենց պատահական, էմպիրիկ կէցութեամբ, այլ Մեծ էութեանը արժանի գործունէութեամբ եւ յատկանիշներով:

Ըստ Կոնսորի, իւրաքանչիւր անհատի կէցութիւն պատկանում է Մեծ էութեանը, այնքանով, որքանով նրա մի մասնիկն է իր ակամայ եւ անհրաժեշտ գոյութեամբ եւ չի կազմում այդ օրգանիզմի բաղադրիչը, եթէ նրա գործունէութեան հիմանպատակը մարդկութիւնը չէ, այլ իր նեղ, մասնաւոր շահերը: Մեծ էութեան՝ մշտապէս կատարելագործման ընթացքի մէջ գտնուող այդ կենդանի օրգանիզմի կէցութեան հիմքերը, վարգացման ազդակներն ու լիցքերը դրսեւորում են այդ կատարելագործմանը ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն մասնակցող երախտուոր եւ օգտակար անհատների գործունէութեամբ: Մեծ էութիւնը դրսեւորում է ներքին եւ արտաքին միասնականութեամբ: Արտաքին միասնութիւնը արտաքին աշխարհի ընդհանուր կարգաւորութեանը գիտակցելն է ու նրան ենթարկուելը: Մեծ էութեան միասնականանալը սիրոյ միջոցով համաշխարհային արտաքին կարգաւորութեանը, ինչպէս նաեւ իր եւ իսկական մարդկութիւնը կազմող հանգուցեալ, ապրող եւ ապագային բոլոր անհատական հոգիներին, կազմում է Մեծ էութեան ոգին կամ ներքին անձնական միասնութիւնը:

Այս դիտակէտից է, թերեւս, երբ Վ. Նալբանդեանը գրում է Պետրոս Դուրեանի ծննդեան յիսնամեակի սովորով, որ եւրոպական բոլոր ազգերը իրենց նշանաւոր գրական եւ հասարակական գործիչներին յորձինները «յիշատակալից յարգանքների, շատ անգամ մինչեւ իսկ մեծ տօնախմբութիւնների առարկայ են դարձնում» (Մշակ 1901, թիւ 167):

Նալքանդեանը գրում է, որ այդ զովելի սովորոյթը տարաբախտաբար բացառիկ երեւոյթ է մեզանում: «Ժամանակի անիւր իր ծանծաղ, անսրբորնթաց պտոյտներով անգամ թանձրացնում է մոռացկոտութեան այն քողը, որ մենք՝ հայերս, մի պաղարին անտարբերութեամբ սիրում ենք սփռել մեր թէ՛ գրական եւ թէ՛ հասարակական գործիչների ետեւից: Այս մոռացկոտութիւնը եւ աններելի անտարբերութիւնը կրկնակի վրդովեցուցիչ է մա՛նաւանդ այն պատճառով, որ մեր ներկայ կեանքն առհասարակ չափազանց խեղճուկ է, ողորմելի, իսկ գրականութիւնը հետզհետէ անապատանում է: Գոնէ թող այս տխուր իրականութիւնը դրէր մեզ թօթափել մեր մեռած գործիչների վրայից մոռացութեան քողը, մի քիչ յարգանքով վերաբերուել դէպի նրանց յիշատակը եւ որ զխաւսըն է, գէթ ապիթ ունենալ ծանօթանալու թէ ինչ եմ եղել նրանք մեզ համար...» («Մշակ», 1901, թիւ 167): «Գիտակցական յարգանք» եւ ինքնաճանաչ պարծենկոտութիւնը՝ անցիկի յիշատակները առնելիս, առաքինութիւններ են, որոնք բնորոշակ են «կենսական զրդումներ առաջացնել, լծացած կեանքը յուզել, փութորկել, անապատ գրականութեան մէջ շրտաւոր օազիսներ ցայտեցնել» (նայն տեղը):

Ըստ դրապաշտ փիլիսոփայութեան, մեծ է բանական անհատի զերը հասարակութեան եւ մարդու կատարելագործման ընթացքում: Մեծ անհատի մէջ են համալրում այն քաղաքակաները, որոնք կապմակերպում են հասարակական եւ անհատական խնդիրները եւ կեանք: Այս առումով, դրապաշտութիւնը տարբերակում է երկու տիպի իդէալիզմ: Առաջինը կամ անհող երազանք է, կամ ելնում է բնականացական վերացադուլուած կարգերից, մինչդեռ դրապաշտական իդէալիզմը բխում է կեանքի ընդերքից եւ յենում է կեանքի օրէնքների եւ օրինաչափութիւնների գիտական եւ ճշգրիտ իմացութեան վրայ:

Իրանը «Եղմայտութեան, մաքուր բարոյականութեան եւ անխարդախ իդէալիզմի» քարոզիչ է, որը, ըստ Նալքանդեանի, ամենաճշգրիտ դասանանքն է, «ամենատաղ ճշմարտագիտութեան»: Եթէ ուսմունքը, որը հակառակ է նախապատրաստելու հասարակութեան, մարդկութեան զարգացման հեռանկարը, բայց ձեւաւորում է կեանքի օրէնքների գիտական իմացութիւնից դուրս, ապա այն ունակ չէ իր կոչումը, իր կանխակալ գործառնութիւնը իրացնելու: «Այն իդէալիզմը, որի ծիւղերը կեանքի հողի վրայ չեն ընկնում, մնում է անպտուղ, այն եդէալիզմը, որ իրական հորիզոնից դուրս է կազմակերպում ամպերի թափաւորութեան մէջ - դառնում է մի ցնորք, մի իլուպիւն» («Մուրմ» 1902, թիւ 12, էջ 112):

Ապագան չի կարելի կրողել, այն պէտք է ստեղծել: Ստեղծագործական այդ տարերքը ենթադրում է ապագայի իդէալի ճշգրիտ եւ գիտական մտակառուցումներ, այլապէս «անգործ եւ պարտագանց» երազելը, եւ թէ՛ անցիկի, եւ՛ ապագայի ցնորքը դառնում է մի անմտութիւն, մի ոճիր ներկայի նկատմամբ» («Մուրմ» 1902, 2, էջ 112):

Իրանի հերոսները իրենց մէջ կրում են մեծ տարերք, նրանց մէջ է համադրում հասարակական առաջնութեան, նրանք անհատականութիւններ են, իսկ անհատականութեան ամէն մի ինքնարտայայտումն ընդհանրապէս մի ըմբոստ գործողութիւն է տիրող կարգերի եւ հայեացքների դէմ: Անհատականութիւնը մեծ իդէալների մարմնաւորումն է,

կենսագործումը: Նրանք համադրում են զարգացման բարձրագույն փուլերի յատկանիշներն եւ ձգտում են դրանք դարձնել համընդհանուր կենցաղական ձեւ:

Գրապաշտները եւ նոր կանտականները ընդունում են նաեւ իդէալի փորձառնությունն ու անհրաժեշտությունը: Իդէալը նոյնպէս գոյաւորում է եւ դրսեւորում է ոչ ճանաչողութեան օրէնքներով եւ կարգերով, այլ արեւատի գոյաբանությունը պայմանաւորող կենսահասկման անհրաժեշտութիւնը:

Վերլուծելով Միլլի գրապաշտական հայեացքները, Հանդէն գրում է. «Անխնայ էմպիրիկը, օգտապաշտ փիլիսոփայութեան ջատագովը, մարդը, որը իր նախորդ շատ աշխատություններում դաւանում էր կարծես թէ միայն բանականությունը, այստեղ գիշումներ է անում այն իմաստով, որ մարդու նեղ եւ աղքատիկ կեանքը ամբողջովին կարիք է զգում թեւաւորման մեր կողմանը վերաբերող բարձրագույն յոյսերով եւ որ խելացի կը լինի մեր երեւակայութեանը թողնել այդ յոյսերի վարկացումը — միայն թէ նա ակնյայտ փաստերի հետ հակամարտութեան մէջ չլինի»:

«...Քանի որ ընդունուած է սկզբունքօրէն, որ մենք պէտք է մեր մրտաքում ստեղծենք աշխարհը աւելի՛ դեղեցիկ եւ աւելի՛ կատարելաւ, քան իրական աշխարհն է, ուրեմն հարկ է ընդունել նաեւ միջի նշանակությունը: Կարելի է սակայն, որ մենք բարձրանանք այն դիտակցութեան, որ նոյն անհրաժեշտությունը, մեր մալուկային էութեան նոյն տրանսցենդենտ արմատը, որոնք մեր զգացմունքների միջոցով տալիս են մեզ համաշխարհային իրականութեան կերպարը, կը յանգեցնեն նաեւ մեզ այն բանին, որ մենք ստեղծագործական սղման բարձրագույն համադրման մէջ կը ստեղծենք իդէալի աշխարհը, որտեղ մենք կարող ենք մեր զգացմունքների դրած սահմաններից դուրս գալ եւ որտեղ մենք կրկին ձեռք կը բերենք ողու յակական հայրենիքը»:

ԱՐԱՄ՝ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

Ա. ՇԻՐԱՋ



Բանաստեղծ եւ արուեստագէտ Սիփան Շիրազ (աւագանի անունով՝ Կարապետեան) ծնած է 1971ին, Երեւան, մեծանունը՝ քանաստեղծ Գովհանէս Շիրազի երդիքին տակ:

Տակաւին աշակերտ՝ զրական միջնորդ տի մէջ հասակ նետող պատանի Սիփան կը սկսի գրել բանաստեղծութիւններ եւ կատարել զգայականաբար փորձեր, որոնցմէ ոմանք լոյս կը տեսնեն հայրենի մամուլի էջերուն:

Ստորեւ ներկայացուող բանաստեղծութիւնները քաղուած են մամուլի տակ եղող անտիպ հատորէ մը:

ՔՈ ՄԻԱԿ ԺԱՍՈ

Օրը քեաբախում, իջնում է խոր-խաւար:
Կեանքս քիազարտ է, վերջ չունեցող քաղում:
Ո՛վ պսակ կը բերի այս քափօթի համար,
Այս մահոտ, այս մահաբոյր մթնշաղում:

Օրը արեան, ցափ ծաղիկներ է Բադում
Եւ քախիծը դանկաղ, Բնից Ելմամ է վեր:
Ես ուր լիախշեմ Բեզմից, քախիծ իմ արմարում,
Թախիծ յարամնայ, քախիծ իմ Երկնաբեր:

Հօրս արցունքը բիւ աստղ է դասել հետում,
Իմ աստղը քախիծի սեւ պատամբ է հազել:
Կեանքս քիազարտ է, վերջ չունեցող քաղում,
Ձկայացած մահս խոնաւ դէմք է բեբեք:

Ինչ որ մէկի առջեւ, ինչ որ խաւար խաղում
Քն օրերն են վատում եւ Բն կեանքը դժուար-
Խաչակնում ես յու, ցարտ, անհանգիստ հողում,
Իսկ աշխարհում յուզո՞ց ցնդա՞ծ մի Երկնայ:

Բարով մնաւ, Բադա՛մ, յուսէ այս խաղարում:
Խեղդի՛ր քախիծը Բո, ցոխը գէր մի հնայ:
...Այս մահածոտ, այս մահաբոյր մթնշաղում,
Օրը քեաբախում, իջնում է խոր-խաւար:

ՊՐԾՈՒՄ ՉԿԱՅ

Օրն յանգում է իմքը իր մէջ. պըծում չկայ:
Ծռյլ ծաղրածուն արտասուում է իմքն իր բախտից:
Քեզ ո՛վ ասաց՝ բեմ ելնէիր, այ թեաթափ,
Որ միշտ կախուած մնայիր պիրկ այս թելերից:

Լոյսն յանգում է իմքը իր մէջ. հնար չկայ:
Խառնաբեւում դիմակներ են շրջում պատիր:
Իմքդ բեզ ես դեռ որոնում, եւ մութի մէջ
Մէկն ասում է. — այդ դու չես, չէ՛, կո՛յր տարագիր:

Այդ դո՛ւ էիր, կաթուածահար խաւարի մէջ,
Կամ է՛ս էի Քաղաքային պատանքներում:
Մենք մեռած ենք, մեր աչքերը բաց են սակայն,
Այս ահաւոր, անդիմադիր սրտխառնոցում:

Այս քրքի մօր պատանակիր տեսնոցում —
Քարշ ենք տալիս մենք տարագիր օրերը մեր:
Մեզ խաւարն է ընկերակցում, կամ էլ Բամբն.
ՏԻՐԱՄԱՅՐ է ՄԵՁ ԹԱՆՏԻՇԸ, ԿԱՐՕՏԸ՝ ՏԷՐ:

Եւ չզիտեմ, չեմ հաւատում ժամանակին.
Նախորդի պէս ցաւ է թրում օրն այս ցնդած.
Ողորմաթա՛ս, զուգէ յիշե՛ս Բո մտերմին
Ե՛ի ՔԱՄՈՒՆ ՏԱՄ ԲՈՂՈՐ ՕՐԵՐՆ ԻՄ ՀԱՒԱՔԱՆԻ:

ՏԱՐ ԻՄ ՕՐԸ, ԹԱՒԻԾ

Տար իմ օրը, բախտ, տար, որ անեղ մնաս,
Որ իմ կեանքը ապրես փողոցի մէջ յուշի.
Քարէ նկար գամիր հոգուս պատի վրայ,
Կամ շիրիմիս վրայ թեթեւ խաչքար տաշիր,

Որ ես համցիտ լինեմ, որ դու անեղ մնաս,
Որ երբ վառուի յոյսը՝ չպակասի,
Որ չզառնաս յանկարծ օրը ողորմաթա
Եւ հաւատը յանկարծ մեռնող բառեր ասի:

Տար իմ օրը, իմ մահ, տար, որ չահեյ մնաս,
Որ ես ԱՆՀՈԳ լինեմ, որ ես լինեմ ԱԶԱՏ,
Որ ես խմեմ-լափեմ յոյսը ամէնօրեայ
Եւ մօր կեանքով ապրի մի մօր, թախծոտ հեքիաթ:

ՄԻՓԱՆ ՇԻՐԱԶ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Շահանդուխտ

**Արեւածաղիկները
խոնարհեցան արեւմուտին**
(վէպ)

Նուպար Զարիւտեան

Մահապարտը
(վէպ)

Մարտիրոս Մարտիրոսեան

**Նամականի
Նորայր Բիւզանդացիի**
(նամակներ)

ԼԻՔԱՆԱՆ

Հատակաճառ (զոյգ թիւ) 5-000 Լ.Ո
Տարեկան բաժնեգին 30-000 Լ.Ո

ՍՈՒՐԻԱ

Հատակաճառ (զոյգ թիւ) 1-000 Ս.Ո

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بأكين
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد آرتم كارنيك قزاجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Ք Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ
Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ
Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝
Centre Culturel SHAGHZOYAN
Bordj Hammoud — Liban